


633

9 - 34



30 JUL 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՄԱՐԻՑ
ՀԱՅԱՀԱՆՉԱՅԻ ՎԵՐԱՎՈՐՈՒՄ Վ. Ա. Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՎԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

Народный Комиссариат земледелия Армянской ССР
Зерновое управление
Сельскохозяйственный Институт

633

Բ. Ա. ԳԱՐԱՍԵՓԵՐՅԱՆ

(ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԺՈՒ)

Գ-34 այ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՂ
ՑՈՐԵՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՐՏԵՐԸ

Բ. Ա. ԳԱՐԱՍԵՓԵՐՅԱՆ
(кандидат с.-х. наук)

МЕСТНЫЕ СОРТА ПШЕНИЦ
возделываемых в Армянской ССР

ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՀԱՆՉԱՅԻ ԽՍՀ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
Издание Наркомзема Армянской ССР

ԵՐԵՎԱՆ

1939

ԵՐԵՎԱՆ

14 MAR 2013

Սույն աշխատուրյունը Հռկուեմքերյան
Սոցիալիստական Մեծ Հեղափոխության
20-ամյակին նվիրված յերիտասարդ գիտա-
կան աշխատողների Համամիութենական
կոնկուրսում արժանացել և Համամիութենա-
կան յերկրորդ կատեգորիայի և Հանրապետա-
կան առաջին կատեգորիայի մրցանակներին:

*Настоящая работа на Всесоюзном
конкурсе молодых научных работников,
посвященном 20-летию Великой Октя-
брьской Социалистической Революции,
удостоила съ Всесоюзной премии второй
категории и Республиканской премии
первой категории.*



5008
39

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն

Ժողովուրդների հանձնարեղ առաջնորդ Մեծ ՍՏԱԼԻՆՆ առաջավոր-
կոմբայնավարների համամիութենական խորհրդակցությունում սոցիա-
լիստական գյուղատնտեսության առաջ գրեց նոր, խոշոր և պատաս-
խանատու խնդիր՝ հացահատիկային կուլտուրաների արելկան ար-
տադրանքը «մերձավորագույն ապագայում» հասցնել 7—8 միլիարդ
ֆթի:

Առաջնորդի առաջադրանքի իրագործումը հիմնականում պայ-
մանավորված ե մեխանիզացիայի լայն կիրառումով, ագրոտեխնիկա-
կան ձեռնարկումների կոմպլեքսի անթերի կատարումով, խոտադաշ-
տային ցանքաշրջանառությունների արմատացմամբ և տվյալ շրջա-
նի պայմաններին համապատասխան բարձր բերքատու սելեկցիոն սոր-
տերի մշակումով:

Սելեկցիոն սորտերի գերը բերքատվության բարձրացման գոր-
ծում խոշոր ե, և այդ և պատճառը, վոր ընկեր լենինը դեռևս 1921
թվին հատուկ դեկրետով պարտավորեցնում եր հողային որդաններին՝
կազմակերպել և գլխավորել տեսակավոր սերմերի առաջացման և
բազմացման գործը, իսկ Կոմ. կուսակցության 17-րդ համագումարը
գյուղատնտեսության վերաբերյալ վորոշումներում պարտավորեցրել
ե, վորպեսզի 2-րդ հնդամյակի վերջում հացահատիկային կուլտուրա-
ների դաշտերի 75%-ը ցանքած լինի տեսակավոր սերմերով: Յեզ ապա,
հացահատիկային կուլտուրաների սորտերի բարելավման վերաբերյալ
կուսակցությունը և կառավարությունը 1937թ. ընդունեցին սերմեր-
ության, սորտագիտության պատմության մեջ նմանը չունեցող
հատուկ վորոշում:

Զնայած կուսակցության և կառավարության բաղմիցս արած հի-
շեցումներին, այնուամենայնիվ տեսակավոր սորտեր առաջացնելու,
շրջայնացնելու և գրանցով տեղական խայտարդետ, քիչ բերքատու սոր-
տերը փոխարինելու գործը Հայաստանում մինչև 1937/8 թ. չի արժա-
նացել անհրաժեշտ ուշադրության և այդ իսկ պատճառով այդ գոր-
ծը գտնվում է խիստ վատ դրության մեջ: Տեսակավոր սերմերով
գրադարձ տարածությունը 1931 թվից մինչև 1937 թ. մուլ եր հա-
մարյա անփափոխ: Սերմարուծության ասպարիզում նույնպես իրենց

և պործն են կատարել ժողովրդի թշնամիները՝ արոցկիստաները, նացիոնալիստա-դաշնակները և գետապոյի այլ պործակալները, վորոնք կարողացել եյին թափանցել հողային որդանները և փորձել են քայլացել սոցիալիստական գյուղատնտեսությունը: Նրանք դիտավորյալ կերպով խճճել են սերմարուծությունը, չեն կազմակերպել ու դիտավորել սերմարուծական կոլտնտեսությունները: Վնասարարական աշխատանքներ են կատարել տեսակավոր սերմերի փորձարկման և շրջանացման, ինչպես նաև տեղական լավագույն սերմերի բարելավման ու բազմացման գործում: Յեվ ընդհանրապես արգելակել են այդ գծով առաջարկված մի շարք ձեռնարկութերը:

Բերքատվության բարձրացման գործում տեսակավոր սերմերի նշանակությունը սաստիկ մեծանում և Հայաստանի պայմաններում, ուր հացարույսերի ցանքային տարածության $90-91\%$ -ն զբաղված է թե բուսաբանական և թե բիոլոգիական-տնտեսական հատկանիշներով խայտարդետ կազմ ունեցող, տեղական պոպուլյացիոն և մասսայական ընտրությամբ վորոշ չափով բարելաված սորտերով: Հայաստանում հացարույսերից ամենից ավելի խայտարդետ պատկեր ունի ցորենի կուլտուրան:

Բավական ե ասել, վոր ցորենի մշակվող սորտերի գգալի մասը կազմված և $10-20$ և ավելի թվով այլատեսակներից: Հասկանալի յե, վոր նման կազմ ունեցող սորտերը չեն կարող սոցիալիստական գյուղատնտեսության պահանջները բավարարել:

Այս աշխատությունը մենք ձեռնարկել ենք 1934 թվին և հիմնականում վերջացրել 1937 թվին: Ուսումնասիրության նպատակն է յեղել ճիշտ կերպով վորոշել Հայաստանում մշակվող ցորենների տեղական սորտերի տնտեսական, բիոլոգիական հատկանիշները, տարածման շրջանները և բուսաբանական կազմը, հայտնարերել բերքատությամբ սորտերն ու այլատեսակները: Ապա այդ բոլորի հիման վրա նշել տեղական սորտերի բարելավման խնդիրների հետ կապված հարցերը և կատարել բերքատությամբ սորտերի—այլատեսակների ժամանակավոր շրջայնացումը:

Մեր առաջ դրված վերոհիշյալ նպատակներին հասնելու համար 1934, 1935 և 1936 թվերին Հայաստանի կլիմայական բոլոր զոնաներում դաշտուն 190 կուտանտեսություններից բերվել են մշակվող ցորենի բուլոր սորտերից 450 խուրծ նմուշներ: Խուրծնմուշները վերցվել են դաշտից, իսկ յերբեմ կալից: Վերցված խուրծնմուշները կազմված են յեղել $800-1200$ ցողունից, յերբեմ ավելի: Բերգված նմուշները յենթարկվել են լարուատոր մանրամասն ուսումնասիրությունների և ապա ցանվել են Արմֆանի բուսաբանական այգում (Կռտայքում): Նրանց վրա կատարել ենք անհրաժեշտ դիտողություններ բացի դրանից, մի քանի կոլտնտեսություններում մեր կողմից դրվել են հատուկ փորձեր:

Հատուկ դիտողություններ ենք կատարել Հայաստանի 26 շրջանների ավելի քան 250 կոլտնտեսություններում մշակվող ցորենների տեղական սերտերի ցանքերի վրա:

Ուստարօքել ենք մի շարք ագրոնոմների ու բազմաթիվ փորձված կոլտնտեսականների յերկարամյա դիտողությունները, առաջավորների փորձերի արդյունքները և մի քանի հիմնարկների տվյալները:

Լայն չափով ուստարօքել ենք նաև Հայաստանի (Թումանյանի, Ստոլետովյայի), Աղբբեջանի, Վրաստանի, Միջին Ասիական յերկրների, Անատոլիայի, Իրանի և մի քանի այլ յերկրների ցորենի մշակության վերաբերյալ գրականության մեջ յեղած ավյանները:

Հայաստանի ցորենների սորտերը հանդիսանում են արժեքավոր հարուստ փոնդ սելեկցիոն աշխատանքների համար: Դժբախտաբար գոյություն ունեցող այդ մատերիալը չափազանց աննշան չափով և ոգտագործվել կամ համարյա չի ոգտագործվել ինչպես տեղի (Հայաստանի), նույնպես և Միության այլ մասերի սելեկցիոն կայանների ու սելեկցիոնների կողմից: Յեկ այդ մասամբ արդյունք է այն բանի, վոր նըանք ծանոթ չեն յեղել այդ մատերիալին: Մեր կարծիքով այս աշխատությունը վորոշ չափով կնպաստի նաև այդ գործին:

Մեր այս աշխատությունը պետք է համարել հետագա աշխատություն հետազոտությունների սկիզբը, յեվ նա, վորպես այդպիսին, անշուշտ կունենա մի շարք թերություններ, այնպես վոր մենք ուրախությամբ ու շնորհակալությամբ կընդունենք այն բոլոր ճիշտ գիտողությունները, վորոնք կարվեն աշխատությունն ընթերցողների կողմից:

Ուսումնասիրության ընթացքում մեզ մեթոդական խորհուրդներով մեծ չափով ոգնել են՝ զիտության վաստակավոր գործիչ, գյուղատնտեսական գիտությունների գոկտոր, պրոֆեսոր Մ. Թումանյանը և գյուղատնտեսական գիտությունների գոկտոր, պրոֆ. Գ. Աղաջանյանը: Շրջաններում համապատասխան փորձեր գնելու և նյութեր հավաքելու գործում ոգնել ե Գյուղատնտեսական ինստիտուտի նախկին լաբորատոր, այժմ ԽՍՀՄ-ի գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի գիտական աշխատակից Գ. Սյուրմինյանը, շրջանների և Հողժողկոմատի հացվարչության, Հողբաժինների, ՄՏԿ-ների ապրուղերունալը (Խ. Հովսեփյան, Տ. Մհերյան և ուրիշներ): Սնկային հիմնադրամների գիտողությունների գծով մնկաբան Մամիկոն Մխիթարյանը:

Աշխատության լարուատոր անալիզներին մասնակցել են Գյուղինստիտուտի ուսանողունիներ՝ Ա. Վարդանյանը, Ա. Միքայելյանը և ուրիշները:

Սշխատությունը կատարված ե Հայկական Գյուղատնտեսական ինստիտուտի բուսաբուծության ամբիոնի լաբորատորիայում. Փինանսավորել ե Հայկական Հողժողկոմատի հացահատիկային վարչությունը:

Վերոհիշյալ կազմակերպություններին և ընկերներին հայտնում եմ իմ անկեղծ շնորհակալությունը:

1938 թ. հուլիս
Յերևան

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ լեռնային յերկիր ե, խիստ կտրատված մակերեսով, 550—4000 մ. բարձրություններով: Հայաստանի տերիտորիայի 3,6%-ը ծովի մակերևույթից բարձր ե մինչև 600 մետր, 46,1%-ը՝ 600—1800 մ., 50,3%-ը՝ 1800 մ. և ավելի: Մինչդեռ Անդրկովկասի տերիտորիայի 43,1%-ն ունի մինչև 600 մ. բարձրություն, 35,8%-ը՝ 600—1800 մ. և 21,1%-ը՝ 1800 մ. և ավելի բարձրություն:

Մակերեսի այդպիսի խիստ կտրատվածությունն արդյունք ե մի կողմից լեռնակազմիչ և մյուս կողմից հրաբխային պրոցեսների: Շնորհիվ այդ պրոցեսների կազմվել են Շիրակի և Լոռու տափաստանները 1500 մ. բ., Սևկանի ավագանը 1916 մ. բ., Արարատյան դաշտավայրը 700—1000 մ.բ. և այլն, վորոնք շրջապատված են մի շարք բարձր և յերկար ճգփող լեռնաշղթաներով ու լեռներով (Խոնավի, Բզովդալի, Աղմաղանի, Մեյդանի, Աղմաղանի, Մուրիսովի, Շահդաղի, Կոնդսուր-Ալանդյաղի, Սարաբուլաղի, Արագածի և այլն):

ՀԽՍՀ հյուսիսային և մասամբ նաև հարավային մասերում զոնվող լեռնաշղթաներն են միայն, վոր վորոշ չափով ծածկված են անտառներով, մյուսները մերկ են, զուրկ անտառներից:

Խիստ բազմապիսի յեն ՀԽՍՀ կլիմայական պայմանները և հողային ծածկոցը:

Նկատվող խայտաբղետ բնապատմական պայմանները մոտավոր ե ընդհանուր գծերով կարելի յե բաժանել հետևյալ զոնաների: Դաշտային, չոր նախալեռնային, ցածր լեռնային և բարձր լեռնային:

ԴԱՇՏԱՅԻՆ ԶՈՆՆ

Այս զոնան գտնվում է 700—1000 մ. ծովի մակ. բարձր, իր մեջ ընդգրկում ե բամբակացան բոլոր շրջանները (Վաղպատ, Հոկտեմբերյան, Զանգիբասար, Ղամարլու, Վեդի) և հյուսիսային մասում ընկած անտառային մասսիվներին կից դաշտավայրերը: Կլիման կոնտինենտալ և չոր ե:

Չնայած 700—1000 մետր բարձրության՝ ամառվա ամիսները խիստ չոր են (չորս ամիս ամսական 20°-ից բարձր միջին ջերմաս-

տիճանով), և մանվելով սուբստրոպիկական շրջաններին։ Տարավ ջերմաստիճանի ամպլիտուդան հասնում է 30—32°-ի, տարեկան միջին ջերմաստիճանը հավասար է 12—14°-ի, վեղետացին շրջանում՝ 19—20°-ի։ Ամենից ցուրտ հունվար-փետրվար ամիսներին ջերմաստիճանը հասնում է մինչև մինու 20—30°-ի։ Մաքսիմում ջերմաստիճանը հուլիս-օգոստոս ամիսներին հասնում է մինչև 50—60°-ի։

Այս գոտին իր վրա չի կրում կասպից և Սեպ ծովերի աղբեցությունը, զորի հետեանքով տարեկան մթնոլորտային տեղումները շատ քիչ են, միջինը 200—300 մ. մ.։ Ամենից շատ տեղումները լինում են դարնանը՝ 75—150 մ., տեղումների մաքսիմումը լինում է ապրիլմայիս ամիսներին, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին նկատվում է յերկրորդ մաքսիմումը։ Հունիս-սեպտեմբեր ամիսներին համարյա մթնոլորտային տեղում չի լինում։ Զյունը սկսում է տեղալնոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին։ Հողը ձյունով ծածկված է լինում ընդունենը 25—35 որ։

Մշակության տակ մեծ մասամբ գտնվում են կիսաանպատայինից կուլտուր-ջրաբթի վերածված հողեր։ Կան նաև կիսաանպատային և աղուտային հողեր։

Ամոռվա ամիսներին մթնոլորտային տեղումների բացակայությունը, ողի խիստ չորությունը, խիստ ձմեռը, որքա ջերմաստիճանի տառանումները և հողային առանձնահատկությունները ուժեղ կերպով աղջում են զոնայի բնական բուսականության վրա, վորը կրում է կիսաանպատային բնույթ։ Այսաեղ գտնվում են *Artemisia* (*A. erivanica*, *Poa bulbosa*, *Kochia prostrata*, *Festuca*, *Helichrysum rubicundum* և այլ քսերոֆիլ բուսականություն։ Դաշտավարությունն, ինչպես նաև այգեգործությունը տարվում է բացառապես արհեստական վոռոգման պայմաններում։ Արհեստական վոռոգման պայմաններում մեծ հաջողությամբ մշակվում են պտղատու և վազի այգիներ, բանջարանոցային և դաշտային մի շարք արժեքավոր կուլտուրաներ՝ բամբակ, ցորեն, առվույտ, ըրինձ, քունջութ և այլն։ Իր պայմաններով նմանվում է Թուրքեստանին։

ԶՈՐ ՆԱԽԾԵՌՆԱՅԻՆ ԶՈՒՄ

Այս զոնայի մեջ մտնում են Աշտարակի, Կոտայքի, Թալինի, Ղարաբաղլարի, Միկոյանի և Ազիզբեկովի վարչական շրջանների ցածրադիր յենթաշրջանները 1100—1400 մետր բարձրությամբ։

Այս զոնան Արարատյան դաշտավայրը կապում է ցածր լեռնային կամ լեռնատափաստանային զոնային։ Ունի հարեան յերկու զոնաների բնապատմական միջին պայմանները։

Տարեկան միջին ջերմաստիճանը հավասար է 9°—10°-ի, վեցետացիոն շրջանում՝ 16°—18°-ի։ Չմեռը նույնպես խիստ է, ամենից ցուրտ ամսին՝ հունվարին, միջին ջերմությունն իջնում է մինչև 5—8°-ի, մինիմումը մինչև մինու 30°-ի։ Շոգ ամիսներն են՝ հունիսը, հուլիսը և օգոստոսը։ Ամենից շոգ ամիսն ոգոստոսն է, վորի ամսական միջին ջերմությունը հավասար է 23—24°-ի։ Աշնան սկզբնական շրջանը տաք է։ Տեղումներն առաջին գոտու համեմատությամբ մեծ են։ Տարեկան մթնոլորտային տեղումները համանում են 300—400 մ. մ., տեղումների բաշխվածությունը ըստ ամիսների նույն պատկերն ունի, ինչ նախորդ գոտում մաքսիմումը լինում է մայիսին և կրկնը գոտում է հոկտեմբերին, իսկ մինիմումը՝ ամառային ամիսներին։ Զյունը տեղում է նոյեմբերի կեսերից մինչև դեկտեմբերի սկզբները, դաշտերը ձյունով ծածկված են մասում 30—45 որ։

Այս գոտում գերիշխում են գորշ և շագանակագույն հողերը։ Ինական բուսականությունը համարյա նույն կազմն ունի, ինչ վոր առաջին գոտում։ Արհեստական վոռոգման պայմաններում հաջողությամբ մշակվում են խաղողի և այլ պտղատու այգիներ, բանջարանոցային կուլտուրաներ, դաշտային կուլտուրաներից՝ ծխախոտ ցորեն, ավույտ, լորի և այլն։ Հյուսիսային և արևմայան թեքությունների անջրդի պայմաններում հաջողությամբ մշակվում են գլխավորապես աշնանացան հացաբույսեր։

ՑԱԾՔ ԼԵԽՆԱՅԻՆ ԶՈՒՄ

Այս գոնան ընդգրկում է Դյուզքենդի, Աղինի, Արթիկի, Ախտայի և մի քանի այլ շրջանները և նախորդ գոնայի բարձր մասերը։

Զոնան շրջապատված է բարձր լեռնաշղթաներով, վորի հետեան, քով բալոր կողմերից փակ է։ Տափաստանում ձմռան ցուրտ ողը յերկար ժամանակ մնում է։ Արտահոսումը տեղի յե ունենում շատ քիչ չափով, այն ել պերիֆերիայից։ Տարեկան միջին ջերմությունը հավասար է 4—6°-ի, վեղետացին շրջանում միջին ջերմությունը հավասար է 11—14°-ի, ամենից տաք ամսվա (ոգոստոսի) միջին ջերմությունը՝ 15—16°-ի։ Ջերմության տարեկան ամպլիտուդան հավասար է 28—30°-ի, ամենացւրտ ամիսների միջին ջերմաստիճանը՝ 8—9°-ի։ Այդ ամիսների ջերմաստիճանը իջնում է հաճախ մինչև մինու 30°-ի։ Տարեկան մթնոլորտային տեղումները հավասար են 400—550 մ.մ.։ Տեղումների խոշոր մասը լինում է զարնան վերջին։

Վեղետացին շրջանում յերաշտը, ինչպես և տոթը սովորական յերեսույթ են։ Զյունն սկսում է պալ հոկտեմբեր-նոյեմբեր ամսից և ձյան ծածկոցը մնում է մինչև մարտի վերջը։ Միջին հաշվով մոտ 4 ամիս անընդհատ ձյան շերտը նստած է մնում։ Զյան շերտը վերոշ

տարիներ բավականին հաստ ե լինում: Հազվագեղ չեն նաև անձուն չոր ձմեռներ, վորի պատճառով շատ հաճախ ցանված աշնանաթան ցորենները կամ ցրտահարվում, կամ չորանում են:

Այս գոնայում գերակշռում են հիմնականում սեանողեր, մոտ 4-4,5 % հումուսի պարունակությամբ, կան նաև շաղանակագույն հողեր:

Դաշտային կուլտուրաները մշակվում են գլխավորապես անջրդի հողերում: Կան նաև ջրովի հողերի բավական մեծ տարածություններ: Անջրդի հողերում մշակվում են գլխավորապես հացահատիկային կուլտուրաներ՝ գարնանացան ցորեն, գարի, հաճար, աշնանացան ցորեն, աշորա (շատ քիչ): Զրովի հողերում մշակում են առաջին հերթին շաքարի ճակնդեղ, կարտոֆիլ և բանջարանոցային կուլտուրաներ:

ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՑԻՆ ԶՈՒՄ

Զոնան ընդգրկում ե մոտավորապես 2000 մետր և ավելի բարձրություն (հյուսիսային մասերում ավելի ցածր) ունեցող շրջաններն ու հողամասերը (Ղուկասյան, Ամասիա, Ալազան և այլն):

Տարեկան միջին ջերմաստիճանը հավասար է 2-4°-ի: Չժեռլ յերշաբեկան է և խիստ, ձյան հաստ շերտով: Ամառը կարճ է, վեգետացիոն շրջանի ջերմաստիճանը 10°-ից չի անցնում: Տարեկան միջին մթնոլորտային տեղութերը հավասար են 550-650 մ. մ-ի: Բուսական ծածկոցը խիտ է, ալպյան և սուբալպյան բուսականությամբ, ծածկոցը լուսաբարձրորակ ալպյան արտաներով: Հողերը գլխավորապես լեռնաբարձրակետնային են կամ մուգ-շագանակագույն, հումուսի բարձր պահապատճենային են կամ մուգ-շագանակագույն, հումուսի բարձր պահապատճենային են անջրդի բունակությամբ: Դաշտային կուլտուրաները մշակվում են անջրդի պահապատճենում, հիմնականը գարնանացան կուլտուրաներն են, աշնանացանը համեմատաբար քիչ է: Մշակվում ե նաև կտավհատ, կարտոֆիլ և այլ կուլտուրաներ:

ԴԱՇՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Հայաստանում կա մոտ 570.000 հեկտար վարելահող,*) վորից յուրաքանչյուր տարի կուլտուրաներով զբաղեցվում ե մոտ 437,000 հեկտար:

Դաշտավարությունը տարվում ե ինչպես ջրովի, նույնապես և անջրդի պայմաններում: Վարելահողային տարածությունից առայժմ վոռոգվում ե մոտ 143.000 հեկտարը:

ՀԽՍՀ գաշտավարության մեջ մշակվող հիմնական կուլտուրաների տարածության դինամիկան, ըստ Հողժողկոմատի տվյալների, ունի հետեւյալ պատկերը (տես № 1 աղյուսակը):

*) Առանց անամերձ հողամասերին

ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԸ	1913 թ.	1919 թ.	1937 թ. **)	1938 թ. **)
		Տարած. հեկտ.	Տարած. հեկտ.	Տարած. հեկտ.
Աշնանացան ցորեն	95,000	34,100	98,864	107,931
Աշնանացան զարի	2,800	1,300	2,810	2937
» աշորա	—	—	10,279	9153
Հնդկանացան	98,300	35,400	111,953	120,021
Գարնանացան ցորեն	96,100	16,900	131,792	129,172
» գարի	94,600	19,900	97,899	88,470
» հաճար	—	—	15,111	14,658
» կորեկ	—	—	1,024	1,046
» վարսակ	—	—	3,189	2,808
Ցեղիպտացորեն	—	—	738	906
Հնդկեղեններ	—	—	2,246	2381
Բրինձ	—	—	771	887
Բնդամենը գարնանացան	190,700	35,900	252,760	240,328
Հնդկամենը հացահատիկ	289,000	71,300	364,713	360,349
» հացամենը հացահատիկ	15,300	600	18,009	17,114
Բամբակ	—	100*	100*	2,746
Շխախոս	—	—	831	1029
Շաքարի ճակնդեղ	7,000	1,800	12,230	11,842
Կարտոֆիլ	—	—	1,831	1,241
Ցանովի կերախոտաբ. և սիլոսային բույներ	—	—	6,830	6,774
ա) Սիլամյա	4,400	200	13,276	18,222
բ) Բազմամյա	—	—	1,831	1,241
գ) Սիլոս	5,100	900	7,596	7,596
Գտավհատ	—	—	5,705	6516
Բանջարանց-բուստանային	—	—	2,843	4501
Այլ կուլտուրաներ	—	—	436,080	437,088

*) Մինչև 1921 թ. Հայաստանում չի յեղել դեղեն ծխախոտ N. Տախաչյան:

Հրա փոխարեն յեղել է N. Rustica (Ղույլառար):

**) Հստ Հայկական Հողժողկոմատի հաշվին բաժնեմատնի տվյալների:

Վերսիշյալ աղյուսակից դժվար չեն նկատել, զոր բոլոր կուլտուրաների ցանքերի տարածությունը, 1913 թվականի համեմատությամբ, ընդարձակվել են ավելի քան 22 տակոսով. ավելացել են մի քանի նոր կուլտուրա՝ գեղին ծխախոտ, շաքարի ճակընդեղ, խորդենի, վուրոնց մշակությունն այժմ մեր յերկրի ժողովնեսության մեջ հսկայական նշանակություն ունի: Դաշտավարության մեջ հացահատիկային կուլտուրաներն իրենց տարածությամբ բոնում են առաջին տեղը: Մեծ չափով, բայց գեղես անբավարար, ընդարձակվել են աշխանացան ցորենի տարածությունը:

ՅՈՐԵՆԻ ՏԵՂԸ ԴԱՇՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

Հայաստանում հացահատիկային կուլտուրաներից հիմնականը հանդիսանում է ցորենը (աշնանացան և զարնանացան), կազմելով ցանվող տարածության 54,2%-ը կամ 237,103 հեկտար: Ցորենի մշակությամբ զրադշում են Հայաստանի բոլոր զոնաներում, բոլոր դյուզերում: Բացի շատ բարձր լեռնային զոնայում գտնվող մի քանի զուդերից, մնացած բոլոր տեղերում ցորենի տարածությունը գերազանցում է մյուս կուլտուրաների տարածություններից:

ԱՇԽԱՆԱՑԱՆ ՅԵՎ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՅՈՐԵՆԻ ՇՐՋԱՆՆԵՐԸ

ՀԽՍՀ-ում ցորենը մշակվում է 650-ից մինչև 2400 մետր բարձրության վրա: Տեղ տեղ՝ Արագածի հյուսիսային լանջերում, Շահնդարի լեռնաշղթայի Գյունեյի լանջում, հասնում է մինչև 2500-2550 մետր բարձրության, վորտեղ շատ հաճախ յենթարկվում են աշխանային ցրտահարության: Մշակության ավելի ընդարձակ շրջան ունի դարնանացան ցորենը: Գարնանացան ցորենի ցանքերը գտնվում են 1000—2550 մետր բարձրություններում: Հիմնական մասսիվները գըտնվում են 1300-2300 մ. բարձրության վրա:

Մշակության նման ընդարձակ շրջան ունենալու հետեանքով՝ գարնանացան ցորենի տարածությունը աշխանացան ցորենի համեմատությամբ շատ են և կազմում են ցորենի ցանքերի 54,5%-ը (տես աղյուս № 2):

Աշխանացան ցորենի մշակությունը տարվում է 600—2200 մ. բարձրություններում, մաքսիմումը՝ 2300 մ. (Մելքրի շրջանի Կալեր, Տաշտուն և մի քանի գյուղերում): Հիմնական մասսիվները գտնվում են 650-ից մինչև 1850 մետր բարձրություններում: Դրանից ավելի բարձր, ցանքերի տարածությունն աստիճանաբար նվազում է: Աշխանացան ցորենների տարածման ներկա սահմանները սոցույզուղատնեսության պայմաններում պետք են համարել անբավարար և բոլոր հնարավոր միջոցները կիրառել նրա մշակությունն ավելի բարձր գոտիներում՝ շրջաններում տարածելու և յեղած շրջաններում ցանքսն ընդարձակելու համար: Աշխանացան և գարնանացան ցորենի տարածությունների տոկոսային փոխհարաբերությունը պարզ կերպով նկատվում է № 2 աղյուսակից:

ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանը համարվում է յերկրագործական հին յերկիր: Դարեր առաջ սովորություն դարձած հողի մշակության ձեվերը, գործիքները շարունակել են իրենց գոյությունը շատ աննշան փոփոխություններով՝ մինչև 1920 թ. նոյեմբերյան հեղափոխությունը և Խորհրդային իշխանության հաստատման առաջին տարիները: Այդ ժամանակաշրջանի հողի մշակության հիմնական գործիքները հանդիսացել են չութը և քիչ չափով յերկաթյա գութանները:

Աշնանացան և գարեանացան ցորենների տարածություններն ըստ
վարչական շրջանների 1938 թվին*)

Շ ք ա ն ն ե ր ը	Բնդամենք	Վ ա ր ի ց	
		Աշնանացան ցորեն %	Գարեանացան ցորեն %
1. Աղաքաբան	9630	26	74,0
2. Աղին	7950	24,1	74,9
3. Ամասիա	5439	7,2	92,8
4. Աղփառեկով	8710	41,5	58,5
5. Ալավերդի	5205	90,5	9,5
6. Ալագյազ	2225	0,9	99,1
7. Արթիկ	11637	19,0	81,0
8. Ախուս	11345	18,5	81,5
9. Աշտարակ	9565	73,6	26,4
10. Բառարդեչար	15714	28,0	72,0
11. Գորիս	8194	84,5	15,5
12. Դիլիջան	1779	9,2	2,8
13. Դուղքենդ	13598	20,0	80,0
14. Իջևան	3989	87,1	12,9
15. Կիրովական	1415	70,2	29,8
16. Կալիսինո	1480	21,2	78,8
17. Ղափան	6567	75,1	24,9
18. Ղուկասյան	5207	5,5	94,5
19. Ղարաբաղլար	5004	46,0	54,0
20. Կրամնոսելովի	4929	59,0	41,0
21. Կոտայք	13069	58,9	41,1
22. Թալին	11689	36,3	63,7
23. Զանգիբառար	740	96,9	3,4
24. Միկոյան	8244	57,0	43,0
25. Մարտունի	7734	15,4	84,6
26. Մեղրի	2214	68,4	31,6
27. Ն. Քայազեն	6176	10,7	89,3
28. Նոյեմբերյան	5102	85,6	14,4
29. Ոխիան	8934	53,7	46,3
30. Ստեփանավան	3966	82,8	17,2
31. Սևան	6211	4,0	96,0
32. Սպիտակ	5629	40,8	59,2
33. Շամշադին	5585	89,1	10,9
34. Վեդի	2879	100,0	5,4
35. Ղամարյու	2601	94,6	4,2
36. Հոկտեմբերյան	3028	95,8	5,3
37. Վազգատ	3170	94,7	5,3
38. Յեղեն և Լենինական	550	82,0	18,0
Ընդամենը	237,103	107,931	129,172
% -ներ	100	45,5	54,5

Քաշող ուժն ամրողնովին կենդանական եր՝ յեղներ, գոմեշներ:
Մինչև հեղափոխությունը դաշտավարության մեջ չի ոգտագործվել
վոչ մի հատ տրակտոր և գյուղատնտեսական այլ կատարելագործված
մերենաներ՝ գործիքներ: Համարյա բացակայել են այնպիսի անհրաժեշտ
աղբուծեռարկումներ, ինչպիսիք են՝ վաղ ցելը, ցելերի ամառային մշակու-
թյունը, կրկնավարը, սերմերի ախտահանումը, շարքացանը, հացահատիկ
ների ցանքերի քաղհանը և այլն: Անբավարար են ոգտագործվել տեղա-
կան պարարտանյութերը: Բացակայում եյին տեսակավոր սորտերը, իսկ
տեղական սորտերի բարելավման ուղղությամբ վոչ մի աշխատանք
չեր ձեռնարկվում: Եշգած ժամանակաշրջանում, շնորհիվ այդ պայ-
մանների, լինստ ցածր եր թե բերքատվությունը և թե աշխատանք-
ների արտադրողականությունը:

Սոցիալիստական հեղափոխությունը Հայաստանի գյուղատնտե-
սության մեջ սոցիալական նոր հարաբերություններ ստեղծեց, վորի-
շնորհիվ ստեղծվեցին նրա զարգացման համար բռլոր անհրաժեշտ նա-
խագայմանները: Խոչչիս վողջ Միության մեջ, այնպես և Հայաստա-
նում, աստիճանաբար մուտք գործեց արակառը, կալսիչ, հնձող և մի
շարք այլ բարդ գործիքներ ու մեքենաներ: Վյուղացիական մանր,
փոշիացած տնտեսությունները, շնորհիվ ստեղծված սոցիալական նոր
պայմանների և մեքենայական բազայի, աստիճանաբար անցան կոլեկ-
տիվ տնտեսության ուղին:

1928 թվին կազմակերպված եր ընդամենը 55 կոլտնաեսություն,
վորն ընդգրկում եր գյուղացիական տնտեսությունների 0,7%-ը, 1932
թվին՝ 893 կոլտնտեսություն, գյուղացիական տնտեսությունների
37,5%-ի ընդգրկումով: 1936 թ. 1069 կոլտնտ, գյուղացիական տնտե-
սությունների 70,0%-ի ընդգրկումով: 1937 թ. 1072 կոլտնտ.՝ 88%-ի
ընդգրկումով: 1938 թվին 1081 կոլտնտ. 91,8%-ի ընդգրկումով:

Գյուղատնտեսության մեջ կոլեկտիվ սիստեմի աստիճանական աճ-
մանը և վերջին տարիներում նրա բացարձակ գերակշռությանը զուգ-
ընթաց՝ աստիճանաբար աճեց և ամրապնդվեց գյուղատնտեսության
վերելքի հզոր լծակ հանդիսացող մեքենայական բազան:

Մեքենայական բազայի աճման փայլուն ավացույց են հանդիսա-
նում հետևյալ տվյալները.*)

*) Այս Հայկական ԽՍՀ Հողմողկոմատի հաշվեճբաժնի տվյալների:

*) Այս Հայկական ԽՍՀ Հողմողկոմատի հաշվեճբաժնի տվյալների:

Աղյուսակ № 3

	1931 թ.	1934 թ.	1937 թ.	1938 թ.
Տրակտոր. հատով	188	434	1175	1389
Տրակտորների կատարած վարք վափուկ վարք վերածած. հեկտարներով .	57,121	112,948	443,58	441553
Դոմբայն հատով	3	8	258	185
Կալիֆը հատով.	42	103	—	264

Աձեցին և ամրապնդվեցին սոցիալիստական յերկրագործության աշխատանքների կազմակերպման և ագրոկուլտուրայի բարձրացման գործում խոշոր էծակ հանդիսացող մեքենատրակտորային կայանները: 1930 թվից մինչև 1938 թ. մեք. արակտ. կայանների թիվն աճեց 9 անգամ:

1930 թվին գործում եր 3 Մ. Տ. կայան

1931 »	»	7	»	»
1934 »	»	15	»	»
1938 »	»	29	»	»

Մ. Տ. կայանների թվական աճման զուգընթաց աճեց նաև նըստանց կարողությունը և աշխատանքի վորակական ցուցանիշները:

1931 թվին յուրաքանչյուր Մ.Տ. կայանում միջին հաշվով վործում ելին 192 ձիու ուժ կարողություն ունեցող քաշող մեքենաներ, իսկ 1938 թ.՝ 800, աճ մոտ 4 անգամ:

1930 թվին բոլոր ՄՏՀ-ները միասին սպասարկում ելին կոլեկտիվացված տնտեսությունների մոտ 8,5%-ին, 1935 թվին 60%-ին, 1938 թ. Հայաստանի կոլտնտառական ամրող հողերի 70%-ի մշակությունը կատարվում եր ՄՏՀ-ների միջոցով:

Շնորհիվ զրա՞ ագրոտեխնիկական կոմպլեքսում հնարավոր յեղակ նոր ձեռնարկումներ մտցնել:

Կիրառվող ագրոտեխնիկայի պատկերը յերեսում և հետեւալ ավտուներից:

Աղյուսակ № 4

	1932	1933	1935	1936	1937	1938
1. Ցրտավար	34,400	44,572	81,587	100,776	121,473	126,706
2. Ցելեր (վաղ և ուշ) .	—	52,603	65,822	82,556	90,336	97,597
3. Հացաբույս. քաղցան	—	65,400	193,722	255,689	272,635	—
4. Հացաբ. զանքը շարք.	—	15,785	41,323	48,363	70,732	—
5. Սերմացուի. դառնում ցենտներներով .	129,700	—	286,530	430,309	100%	100%
6. Պարաբատացում. սայլերով	1934 թվին 223,788	—	496,192	2,428,894	—	2,497,500
7. Սերմերի ախտահանում. ցենտներներով	163,700	—	259,313	383,943	100%	100%
8. Սերմերի յարովիզացիա, հեկտարներով .	—	—	20	4,490	25,000	—

Միաժամանակ լայն չափով զարկ ե տրվել նաև ջրաշինաթարությանը, վորն անժիստելիորեն մեծապես նպաստել ե սոց. դաշտերի բերքատվության բարձրացմանը: Ջրաշինարարության աշխատանքները հատկապես վերջին տարիներում հսկայական ծավալ են ստացել բավական ե նշել, վոր միայն մասը ջրաշինարարության միջոցով 1936 թվին ջրովիթի յե վերածվել ավելի քան 11,000 հեկտար վարելանող, այն ժամանակ, յերբ 1921—1935 թվերին նույն մասը ջրաշինարարության գծով ջրովիթի յե վերածվել միայն 4,100 հեկտար վարելանող:

Վերոհիշյալ տվյալներից պարզ յերևում ե, վոր աստիճանաբար ավելացել են ագրոտեխնիկական հիմնական ձեռնարկումների քանակական և վորակական ցուցանիշները: Սակայն առանձին ձեռնարկումների գծով դեռևս գոյություն ունին աչքի ընկնող թերություններ:

Յելեր. — Բազմաթիվ փորձերով և արտադրության յերկարամյա սլրակտիկայով ապացուցված ե, վոր աշնանացան հացահատիկների հիմնական շրջաններում բերքատվության բարձրացման գործում ցեղերը (սե և վաղ) վճռական նշանակություն ունեն: Զնայած ցեղերի ընդհանուր տարածության զգալի ավելացմանը (1930 թվի համեմատությամբ կրկնապատկվել ե), այնուամենայնիվ դեռևս աշնանացան հացահատիկների միայն 40—45%-ն ե ցանկում ցեղերի (վաղ և սե) վրա, հացի դրանից անբավարար ե ցեղերի մշակության վորակը:

Պարաբատացում. — Այս ձեռնարկման գծով նույնպես ունենք անժիստելի հաջողություններ. 1934 թ. համեմատությամբ տասնեմենկան անգամ ավելի շատ տեղական պարաբատանյութ ե տրված դաշտերին սակայն դեռևս յեղած բոլոր հնարավորությունները լրիվ չափով չեն ոգտագործվում, Մինչև այժմ համարյա անուշադրության են մատնված տեղական պարաբատանյութերի պահպանման, պարաբատացման նորմացիոնական կամպանիա և մի շարք այլ կարևոր նշանակություն ունեցող հարցերը: Համարյա չի կիրառվում վեգետացիալի ընթացքում լրացնեցիչ սնուցում տալը: Այս բոլոր հարցերը հսկայական նշանակություն ունին բերքատվության բարձրացման գործում:

Ցանքի ժամանակի հարցը. — Ցուրաքանչյուր սորտի ցանքի ճիշտացմանական հարցը վճռական նշանակություն ունի ագրոկոմպլեքսում, մինչդեռ այս կարևոր մոմենտը համարյա անուշադրության և մատնվածիան մատնական անդամանության շորենի տարբեր սորտերի համար լրնդանուր ձեռվում ե ցանքի մի ժամկետ, վորի հետեւանքով յեղակի չեն այնպիսի դեպքեր, յերբ աշնանացան ցորենի ցանքերը վոչ ճիշտ ժամկետում ցանելու: Հետեւանքով գրեթե ամրողնույթին, վոչնչացելի են (Կոտայք, Նոյեմբերյան, Ախուրյան գործում): Անհրա-

ժեշտ և ամենակարձ ժամանակամիջոցում ըստ առանձին գոնաների լուծել յուրաքանչյուր սորտի ցանքի ճիշտ ժամկետը:

Յանքի խտությունը (նորման) — Յանքի նորմայի վորոշման ժամանակ, վորպես կանոն, հաշվի չեն առնվում սորտի սորտային առանձնահատկությունները (թփակալումը, հատիկի արսուլյուտ կշիռը և այլն), մինչդեռ այդ հարցերը կարեոր նշանակություն ունին: Անհրաժեշտ է յուրաքանչյուր շրջանում վերանայել ցանքի նորմաներն ըստ սորտային առանձնահատկությունների, հողային պայմանների և այլն: Բացի այդ, վորոշ շրջաններում անհրաժեշտ է լայն չափով փորձարկել Յեփրեմովցիների (խիտ ցանքի) սկզբունքը:

Յանքի ձևը — Շարքացանով կատարված ցանքի տարածությունը խիստ անբավարար է, իսկ կատարված շարքացանի վորակը հեռու յերավար լինելուց: Զե՞ն կիրառվում ցանքի այնպիսի եֆեկտիվ ձևեր, ինչ պիսիք են խաչաձեվ ցանք, նեղ շարքերով ցանք և այլն:

Սերմացուի յարովիզացիան. — Յարովիզացիայի եֆեկտը հատկապես լեռնային շրջաններում բարձր է, միայն այդ ձեռնարկումը լեռնային շրջանների գարնանացան ցորենի բերքը բարձրացրել է հեկտարին 2—4 և հաճախ ավելի ցենտներներով: Բայց չնայած դրան, յարովիզացիայի յենթարկված սերմերով կատարված ցանքային տարածությունը խիստ անբավարար է, կազմում են գարնանացան հացարույսերի (ցորեն, գարի) մոտ 12%-ը. անհրաժեշտ է ամենակարձ ժամանակամիջոցում ավելացնել այն և հասցնել 100%-ի: Այդ անելու համար կան բոլոր հնարավորությունները:

Յանքաշրջանառություն. — Յանքաշրջանառությունը, վորպես բերքատվության բարձրացման խոշոր լծակ հանդիսացող ձեռնարկում, նատարայում մինչև այժմ համարյա բացակայում է: Անհրաժեշտ և ամենակարձ ժամանակամիջոցում կիրառել խոտա-դաշտային ցանքաշրջանառություն, առանց վորի հնարավոր չեն կայուն բերքատվություն ունենալ:

Այսուամենայնիվ չնայած վերոհիշյալ թերություններին և հողային որգաններում բուն դրած ժողովրդի մերկացրած թշնամիների սև գործերին՝ տարի բարձրացել են բերքատվությունը: այդ բարձրացումը յերեվան և հետեւյալ տվյալներից:

Աղյուսակ № 5

	Աշնանացան ցորենի բերքատվությունը ցենտներ.	Դարնանացան ցորենի բերքատվությունը ցենտներ
1909--13 թվերին	8,7	6,5
1934 թ.	9,0	6,4
1935 թ.	10,2	6,8
1936 թ.	12,4	10,2

Բացի վերոհիշյալից այժմ բազմաթիվ են այնպիսի կոլտնտեսություններ, կոլտնտեսային առանձին բրիգադներ և ողակներ, վորոնք ոգտագործելով ստեղծված բոլոր հնարավորությունները, կիրառելով լրիվ ազրոկումպլիքսը, տվել են միջին բերքատվությունից շատ ավելի բարձր, իսկ տասնյակ դեպքերում նաև ուկորդային բերքատվություն: Այսպես որինակ՝ Ապարանի շրջանի թ. Գյուղակարարական կոլտնտեսության Աբրահամյանի ողակը 1936 թվին 1 հեկտարից ստացել է 82 ցենտ. գարնան գարի: Լենինականի շրջանից Մ. Մանուկյանը ստացել է 1 հեկտարից 60 ցենտներ ցորեն: Բասարգեչարի շրջանի Գյուղակրուլազի բրիգադիներ Գեղամ Մանուկյանը և Պողոս Գրիգորյանը 1938 թ. ստացել են գարի 37 ց. մեկ հեկտարից: Շամշադինի նավո կոլտնտեսության վերաբերյալ կայուն է այլն:

Լայն չափով ծափալվել և ծափալվում են աշխատանքի ստախանովյան մեթոդները, որը սորուելով աճում է ստախանովյան կոլտնտեսականների բանակը, վորոնք լծվում են ստախինյան 7—8 միլիարդ փութհացահատիկի արտադրանքին հասնելու լողունգի կիրառման մեծ դորձին:

ՀԽՍՀ-ՈՒՄ ՄՇԱԿՎՈՂ ՅՈՐԵՆԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Պրոֆ. Մ. Թումանյանի, Յե. Ա. Ստոլետովյի և մեր ուսումնականիրությունները ցույց են տվել, վոր Հայաստանում մշակվում են ցորենների ՓԱ.ՓՈՒԿ (Tr. vulgare Host.), ԿՈՒՆԴԻԿ (Tr. compactum Host.), ԿԱՐԾՐ (Tr. durum Desf.), ՊԵՐՍԻԿՈՒՄ (Tr. persicum Vav.), ԱՆԳԼԻԱԿԱՆ (Tr. turgidum L.) և ՀԱՃԱՐ (Tr. dicoccum Schubl.):

Հայաստանը հարուստ է ինչպես տեսակներով, նույնպես և այլականակներով:

Ծորենի բոլոր տեսակների այլատեսակներից առաջմ նկարագրված և մոտ 650: Այս ընդհանուր թվից Հայաստանում հայտնաբերված է 230 ալյատեսակ կամ նկարագրվածների 1/3-ից ավելին:

ված և 230 այլատեսակ զար սպարագում առ այս բանից հետո ամենից շատ տարածված տեսակն է։ Այլտեսակային ամենից մեծ բաղմազանություն ունեցող յերկիրը համարվում է Ավղանստանը, ուր հայտնաբերված են ընդամենը 60 այլատեսակ, մինչեւ Հայաստանում, ըստ պրոֆ. Թումանյանի, Յե. Ա. Ստոլբովայի և մեր ուսումնասիրությունների, կա 65 այլատեսակ, այսինքն՝ վաստորեն ավելին, քան Ավղանստանում:

Բացի այդ, անհրաժեշտ է հիշատակել նաև այն, վոր Հայաստանի նույն հայտնաբերված էն 15-ից ավելի այլատեսակներ, վորոնք Ավելանում և այլ յերկրներում չեն հայտնաբերված:

Փափուկ ցըրենի տյլատեսակները տարածված են Հայաստանի բոլոր գոնաներում անխտիր և կազմում են մշակվող ցորենների հիմնական մասսան:

Կունդիկ ցորեն (Tr. Compactum Host.). սրա այլատեսակային ամենից մեծ բազմազանություն ունեցող յերկիրը համարվում և Ավգանստանը: Ավգանստանում հայտնաբերված ե ընդամենը 50 այլատեսակ: Հայտնատանում, ըստ պրոֆ. Թումանյանի, Յե. Ս. Ստոլետովացի և մեր ուսումնասիրությունների, հայտաբերված ե 45, այսինքն՝ մոտավորապես այնքան, վորքան Ավգանստանում: Այստեղ անհրաժեշտ է հիշատակել նաև այն, վոր Ավգանստանում նկարագրած 50 այլատեսակներից 24-ը պատկանում են ինֆլատում (inflatum) խըմբին, իսկ Հայտնատանում՝ ինֆլատում խմբին պատկանող այլատեսակներ չեն հայտնաբերված, իսկ անքիստ, կիսաքիստափոր և քիստափոր խմբին պատկանող այլատեսակների թիվն ավելի յե, քան Ավգանստանում: Հայտնատանում հայտնաբերված են մի շարք նոր պլատեսակներ, վորոնք Ավգանստանում չեն հայտնաբերված:

Այս տեսակին պատկանող այլատեսակները տարածված են հայաստանի բոլոր զանաներում և հանդիսանում են մշակվող ցորենների յերկրորդ հիմնական մասսան:

Ճյալպակը ցորեն (Tr. Vavilovianum (Thum.) Jak.) հայտնաբերել
է պրոֆ. Մ. Թումանյանը Հայկական Գյուղատնտեսական ինստիտու-
տի հողամասում (Յերեվանում) ցանված փափուկ ցորենին պատկանող
սուբ-մեսոպոտամիկում (sub. mesopotamicum Vav.) և սուբ-գրեկում
(sub. graecum Vav.) այլատեսակների միջից: Ըստ պրոֆ. Թումանյանի
ստացվել ե մուտացիոն ճանապարհով: Պրոֆ. Մ. Թումանյանը նկա-
րագրել ե վորպես փափուկ տեսակի (SSp. compositum Thum.) ճյուղա-
վոր յենթատեսակ: Սակայն Մ. Մ. Յակուբյանը, նկատի ունենալով
սրա բիոլոգիական-մորֆոլոգիական մի շարք հատկանիշներն, առանձ-
նացրել ե վորպես նոր տեսակ, անվանելով Տր. Vavilovianum: Մեր
կարծիքով վորպես առանձին տեսակ ընդունելլ ձիչտ ե: Առայժմ նը-
կարագրված ե սրա 3 այլատեսակ: Մենք այս տեսակին պատկանող
այլատեսակների և ուկրաինկայի հետ կատարած արհեստական հիբ-
րիդիզացիայի 4-րդ սերնդում ստացանք 5 նոր այլատեսակ: Այսպի-
սով, այս տեսակին պատկանող այլատեսակների ընդհանուր թիվը
հասնում է 8-ի:

Այս տեսակը հետաքրքրական և հատկապես սելեկցիոն աշխա-

տանքների համար, վորպես սպիտակուցներով հարուստ ($20-22$ տոկ.), բոլորովին չթափվող, վաղաճաս, ուժեղ թփակալող յելանյութ:

Університет в більшості країн, в тому числі в Україні, є центральним органом державного управління з питань селекції та розведення сільськогосподарських тварин та рослин.

Այս տեսակին պատկանող այլատեսակներն առաջիմ մշակության մեջ կկան:

Սպելտա (Tr. spelta L.) ցորենը հազվադեպ է, ըստ պրոֆ. Յ. Խուզանյանի, Հայաստանում կա ընդամենը մեկ այլատեսակ: Այս տեսակի այլատեսակային բազմազանությունը գտնվում է Խաստանիայում, — Աստուրիայում և Հարավային Գերմանիայի լեռնային մասերում:

Կարծը ցորեն (Tr. durum Desf.). ցորենի տարածված տեսակներից մեկն ե (յերկրորդը): Այլատեսակային ամենից մեծ բազմազանություն ունեցող յերկիրը համարվում ե Հարեշստանը և Միջերկրական ծովի ավագանը: Հայտնի յեն սրա յերկու յենթատեսակներ subsp. *abyssinicum* Vav. և subsp. *expansum* Vav.: Հայտնատանիում գտնվող այլատեսակները հիմնականում պատկանում են սուրապեցիես եքսիանում յենթատեսակին: Այլատեսակային բազմազանությամբ Հայտնատանը հարուստ չե, նկարագրված ե առաջի 20 այլատեսակ: Կարծը ցորենը մշակվում ե գլխավորապես Աղբքեջանի և Վրաստանի սահմանակից շրջաններում (Աղավերդի, Նոյեմբերյան, Խջեան, Շամշադին, Ղափան և այլն), մնացած շրջաններում համարյա բացակայում ե, կամ թե չե գտնվում ե անհշան տառածություններով, կամ հատ ու կենա բույսերով:

Պերսիկում ցորեն (Tr. persicum Vav.). Հիմնանում տարածված և Անդրկովկասում Վրաստանում և Հայաստանում։ Պերսիկում տեսակը Հայաստանում չի ներկայացված մեծ բաղմաղանությամբ։ Առաջմ հայտնաբերված ե յերկու այլատեսակ։ Սորտ ե կազմում և բավականին մեծ մասիներով մշակվում ե հատկապես բարձր լեռնային խոնավ ըրջաններում (Ալագյազում, Ախտայում, Սևանում, Գորիսում, Միսիանում, Սպիտակում, Ղուկասյանում, Ամասիայում և այլն)։ Բացակայում ե դաշտային և չոր նախալեռնային շրջաններում։

կան և թե ձյուղավոր խմբերից 11 այլատեսակ, վորոնցից յերկուը
նոր են, նկարագրել ե պըոփ. Մ. Թումանյանը: Հայաստանում անդ-
լիական ցորենի այլատեսակներին կարելի յե պատահել զլսավորապես
այն շրջաններում, ուր գտնվում ե կարծր ցորենը: Սրա վոչ ձյուղավոր
խմբին պատկանող այլատեսակներից կազմված «մաքուր» ցանքեր կան
նոյեմբերյանի՝ Կոթի և Սոփ գյուղերում: Ճյուղավոր խմբին պատկա-
նող այլատեսակներից կազմված սորտեր փոքր տարածություններով
մշակվում են Միկոյանի շրջանի Քարագլուխ գյուղում («Ճճղուկ ցո-
րեն» անվան տակ) և մի քանի այլ շրջաններում հատ ու կենտ կու-
խոզնիկների տնամբերձ հողերում: Վորաբես խառնուրդ կարելի յե
պատահել կարծր ցորենի սորտերի մեջ:

պատահու կարեւ յէ լուսական գործենը (Tr. pyramidale Perc.) չափազանց աննշան Պիրամիդալ ցորենը (Tr. pyramidale Perc.) չափազանց աննշան հատկանիշներով (միայն հասկի ձևով) և տարբերվում կարծր ցորենն ներից և այդ և պատճառը, վոր այժմ վորոց հեղինակների կողմից, վորպես ինքնուրույն տեսակ չի ընդունվում: Հայաստանում նկարագրութեած և որա 6 այլատեսակ, վորոնք պատահում են վորպես հազվագը լիառնուրդ այն ըլջաններում, ուր մշակվում են կարծր ցորենները:

Որինեալիք ցորենը (Tr. orientale Petc.) սույսպաս շամանշան հատկանիշներով և տարբերվում կարծը ցարենից: Հնդկան բազես չի ներկայացված մեծ բազմազանությամբ: Պերսիվալը նկարագրել է սրա յերկու այլատեսակ, իսկ պրոֆ. Մ. Թումանյանը Դարալազյաղի նյութերից առանձնացրել է սրա ևս մեկ նոր այլատեսակ: Հայաստանում այս տեսակը հազվագեղ է, կարելի յէ պատճել Դարալազյաղում:

Վայրի յերկիատ ցորին կամ վայրի հանար (Tr. dicoccoides Korn.). Ծառ
տեսակը առաջիմ հայտնաբերված և Սիրիա-Պաղեստինում, Հայաստա-
նում և Իրանում: Պրոֆեսոր Մ. Թումանյանն այս տեսակը բա-
ժանում է յերկու եկոլոգիական խմբի՝ սիրիա-պաղեստինական և Հա-

յաստանի: Հայաստանում առաջին անգամ (1927 թվին) հայտնաբերել եղրոֆ. Մ. Թումանյանը Յերեխանից 6 կիլոմետր հեռու գտնվող Շորութաղի յենթաշղթանում, 1935 և 1936 թվերին Բ. Գարասեֆերյանը Միկոյանի և Վեդու շրջանների նախալեռնային մասսիներում: Հայաստանում նկարագրված ե սրա 4 այլատեսակ:

Կուլտուրական միահատ հանար (Tr. monococcum L.): Հայաստանում սա չի ներկայացված մեծ բազմազանությամբ: Պրոֆ. Մ. Թումանյանը Զանգեղուրի, Դարալագյազի և Լոռի-Փամբակի շրջանների համար ցանքերում հայտնաբերել ե հատ ու կենտ բույսերով 4 այլատեսակ, վորից մեկը նոր և առաջին անգամ նկարագրել ե պրոֆ. Մ. Թումանյանը:

Վայրի միահատ և յերկիստ միահատ հանար կամ վայրի միահատ ցորեն (Tr. thaoudar Reut. և Tr. aegilopoides Bal.): Սրանց բազմազանությունը գտնվում է Հայաստանում: 1927 թվին Հայաստանում առաջին անգամ սրանք հայտնաբերեց պրոֆ. Մ. Թումանյանը Շորբությի շրջանում, ավելի ուշ՝ Բ. Գարասեֆերյանը Միկոյանի (1935 թ.) և Վեդու շրջաններում (1936 թ.):

Հայաստանում ընդամենը նկարագրված ե 64 այլատեսակ, վորից 44-ը նոր են:

Ուրարտու վայրի յերկիստ հանար (Tr. urartu Thum.): Սա նոր տեսակ և, հայտնաբերել ե պրոֆ. Մ. Թումանյանը Հայաստանում: Առաջիմ նկարագրված ե այս տեսակին պատկանող 4 այլատեսակ:

Այսպիսով ցորենի (Triticum L.) ցեղին պատկանող 19 տեսակներից Հայաստանում առաջիմ հայտնաբերված ե 15-ը՝ 650 այլատեսակներից՝ 230-ը, կամ համաշխարհային ցորենի բազմազանության մեջերբորդից ավելին:

ՀԱՅԱՏԱՆՈՒՄ ՀԱՅՑՆԱԲԵՐՎԱԾ ՑՈՐԵՆԻ ՆՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԵԵՎ. ԱՅԼԱՏԵՍԱԿՆԵՐԻ

Ինչպես արդեն նկատեցինք, Հայաստանը հարուստ է ցորենի տեսակներով և այլատեսակներով: Կարեորն այն ե, վոր այդ բազմազանությունը ինչպես սիստեմատիկորեն նույնպես և բիոլոգիարեն չի հանդիսանում մյուս յերկների լրիվ կրկնությունը և այդ չեր ել կարող լինել: Նախորդ բաժնում արդեն նշել ենք, վոր ցորենի ցեղին պատկանող տեսակներից յերկուսը՝ Tr. Vavilovianum (Thum.) Jakubz., Tr. urartu Thum. հայտնաբերված ե միայն Հայաստանում: Տասնյերկու տեսակների սահմաններում հայտնաբերված ե մոտ 100 նոր այլատեսակ:

1. Tr. vulgare Host.	տեսակից	16	այլատեսակ
2. Tr. compactum Host.	"	16	"
3. Tr. Vavilovianum (Thum.) Jakubz.	"	4	"
4. Tr. durum Desf.	"	1	"
5. Tr. pyramidale Perc.	"	6	"
6. Tr. orientale Perc.	"	1	"
7. Tr. turgidum L.	"	2	"
8. Tr. monococcum L.	"	1	"
9. Tr. dicoccoides Körn.	"	4	"
10. Tr. aegilopoides. Bal.	"	27	"
11. Tr. urartu Thum.	"	4	"
12. Tr. thaoudar Reut.	"	17	"

Ընդամենը 99

Այսպիսով 12 տեսակի սահմաններում հայտնաբերված նոր այլատեսակները կազմում են Հայաստանի ցորենների բազմազանության մաս 45 տեսակով, իսկ ամբողջ աշխարհի՝ 1/6-ը: Այս հանգամանքը խոսում է այն մասին, վոր Հայաստանում գնացել և գնում են ձևաշացման բավական ինտենսիվ պրոցեսներ:

ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵԵՎ. ԱՅԼԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՆ ԸՆՏ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ
ԳՈՏԻՆԵՐԻ

Ցորենի տեսակների, այլատեսակների, ձևերի և տիպերի բաշխվածության մեջ նկարվում են վերոշ որինաչություններ:

Հայաստանում այս հարցով զբաղվել են պրոֆ. Մ. Թումանյանը (Կուլտուրական բույսերի բարձրության գոտիները Հայաստանում), Այսպիսով զբաղվել են Ստոլետովանը և Սերգեյանը: Սեր ուսումնասիրության ընպրոֆ. Գ. Աղաջանյանը և Ստոլետովանը: Սեր ուսումնասիրության ընպրոֆ. Գ. Աղաջանյանը և Ստոլետովանը: Սեր ուսումնասիրության ընպրոֆ. Գ. Աղաջանյանը և Ստոլետովանը: Կատարել:

Աղյուսակ № 6

Զանաները և նրանց բարձրությունը ծովի մակերեսից մերձբերով	Tr. vulgare	Tr. compactum	Tr. durum	Tr. turgidum	Tr. pyramidale	Tr. persicum	Tr. spelta	Tr. dicoccum	Tr. dicoccoides	Tr. aegilopoides
	XXX	XX	XX	X	—	—	—	XXX	—	—
Հաշտային 600—1000:	XXX	X	XXX	XXX	X	—	—	XXX	—	—
Անտառային շրջան 600—1100:	XXX	XXX	X	—	—	—	—	XX	—	—
Չոր նախալեռնային 1100—1400:	XXX	XXX	—	XX	—	XXX	X	XX	—	X
Ցածր լեռնային 1400—1800:	XXX	XXX	X	—	—	XXX	—	XXX	—	—
Բարձր լեռնային 1800—2200:	XXX	XXX	—	—	—	XX	—	XXX	—	—
Ալպիական 2200-ից բարձր:	XXX	XX	—	—	—	—	—	XXX	—	—

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—X. Կամ հատ ու կենտ հառկերով վորպես խառնուրդ:

Հարցում:

XX. Կազմում ե Հորդա, բայց շատ քիչ և տարածված:

XXX. Կազմում ե Հորդա և մշակվում է մեծ տարածություններով:

Ցորենի տեսակներն ըստ դժնաների բաշխվում են հետևյալ կերպ
(տես № 6 աղյուսակը).—

Վերոհիշյալից նկատվում է, վոր փափուկ և կունդիկ տեսակները շնորհիվ իրենց թե մորֆոլոգիական և թե բիոլոգիական ձևերի բազմազանության կոսմոպոլիտ են, հաջողությամբ մշակվում են բոլոր զոնաներում, սկսած 600-ից մինչև 2200 մետր և ավելի բարձր վայրերում, իսկ մացած տեսակներն առայժմ սահմանափակված են վորոշ զոնաներում, կլիմայական և հողային վորոշ պայմաններում:

Տեսակների և նրանց այլատեսակների զոնայական տարածման ավելի պարզ պատկերացում կարելի յե ստանալ № 7 աղյուսակից, վորը ցույց ե տալիս, թե տվյալ տեսակն այս կամ այն բարձրություններում քանի այլատեսակով ե ներկայացված:

Աղյուսակ—Տաճ. № 7

ՏԵՍԱԿՆԵՐԸ ՎԻՃԱԿ	Բ.Մ.	600-1000	700-1100	1100-1400	1400-1800	1800-2200	2200 բարձր
Tr. vulgare	31	22	23	19	18	7	
Tr. compactum	22	13	10	11	10	3	
Tr. durum.	16	11	2	—	—	—	
Tr. pyramidale	6	4	—	—	—	—	
Tr. turgidum	5	2	2	1	—	—	
Tr. persicum	—	—	—	2	2	2	
Tr. dicoccum	—	—	2	2	2	2	

Այս աղյուսակից նույնպես յերեսում է, թե ինչպես փափուկ և կունդիկ տեսակները տարածված են բոլոր զոնաներում, իսկ մյուս տեսակները խիստ սահմանափակ են: Բացի այդ, չափազանց պարզ կերպով նկատվում է, վոր ցածրադիր մասերից (դաշտավայրից) վորքան բարձրանում ենք վեր՝ լեռնային մասերը, այնքան նվազում ե թե (հիմական) տեսակների և թե այլատեսակների թիվը:

Վերոհիշյալ աղյուսակներն արտահայտում են տեսակների զոնայականության քանակական կողմը: Անհրաժեշտ ե տեսնել նաև, թե մորֆոլոգիական առանձին հատկանիշներն ինչ չափով են յենթարկվում այդ նույն որինաչափություններին:

Հստ մորֆոլոգիական հատկանիշների, փափուկ ցորենի այլատեսակները հետեւյալ ձևով են դասավորվում տարբեր զոնաներում (տես աղյուսակ № 8): Հետազոտությունը տարվել ե դաշտավարական շրջանից դեպի Սևանի ավազանը:

№ 8 աղյուսակը ցույց ե տալիս հետեւյալը:

Քանի բարձրանում ենք դեպի լեռնային շրջանները, այնքան նվազում է սպիտակ հատիկավորների տոկոսը և ավելանում է կարմիր հատիկավորներինը:

Վորքան բարձրանում ենք, այնքան սպիտակ հասկ ունեցող այլատեսակների թիվն ավելանում է:

Վորքան բարձրանում ենք, այնքան նվազում և 1800 մետրից համարյա անհետանում են և խայտարկեած հասկ ունեցողները:

Կարմիր հասկավորների մոտ առանձին որինաչափություն չի նկատվում:

Քիստավորները համարյա միշտ հանդիսանում են գերիշխող Աղյուսակ—Տաճ. № 8 ները:

Փափուկ տեսակի այլատեսակների մորֆոլոգ. հատկա- նիշները.	Հ Ս Տ Բ Ա Ր Զ Ր Ո Ւ Թ Յ Յ Ա Ն						2200 մ. բարձր
	700-1000	700-1100	1100-1400	1400-1800	1800-2200		
Փափուկ տեսակի այլատեսակ. թիվը	31	22	23	19	18	7	
ԱՅԴ ԲՎԻՑ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ							
Հատիկի մորֆոլոգ. գործությունների մասին ա) Սպիտակ հատիկավոր	54,8	55	48	52,6	40	40	
բ) Կարմիր հատիկավոր	45,2	45	52	47,4	60	60	
Հատիկի մորֆոլոգ. գործությունների մասին ա) Սպի. հասկ. բ) Կարմիր >	35,5	31,8	43,5	42,1	50	57	
գ) Սկ և խայ- տարբետ	22,2	40,6	30,5	47,4	44,5	43	
Հատիկի մորֆոլոգ. գործությունների մասին ա) Սպի. հասկ. բ) Բիստո- մարմա- գոր և կի- սաքիսա- գոր*)	32,3	27,6	26,0	10,5	5,5	—	
Հատիկի մորֆոլոգ. գործությունների մասին ա) Սպի. հասկ. բ) Բիստո- մարմա- գոր և կի- սաքիսա- գոր*)	19,3	27,2	27,2	36,8	33,3	28,5	
Հատիկի մորֆոլոգ. գործությունների մասին ա) Հասկը մազմզուկավ. բ) Հասկը մերկ	80,7	72,8	72,8	63,2	66,7	71,5	
Հատիկի մորֆոլոգ. գործությունների մասին ա) Հասկը մազմզուկավ. բ) Հասկը մերկ	51,0	55,0	56,5	47,4	39,0	28,5	
Հատիկի մորֆոլոգ. գործությունների մասին ա) Հասկը մերկ	49,0	45,0	43,5	52,6	61,0	71,5	

Մազմզուկավոր և մերկ հասկավորները դաշտավայրում գտնվում են մոտավորապես հավասար հարաբերությամբ: Մազմզուկավորներն աստիճանաբար ավելանում ե իրենց մաքսիմումին համառում

*) կիսաքիսավորները հազվագել են:

են չոր նախալեռնային գոնայում, վորից հետո խիստ կերպով նվազում են Մերկ հասկավորները 1400—1800 մետրից սկսում են ավելանալ, իսկ 1800—2100 մետրից դերիշում են:

Տարբեր ուղղությունների դեպքում այս որինաչափությունները փոխվում են:

Նման որինաչափություն կարելի յե դիտել առանձին գոնաներում նաև մշակվող ցորենի տեղական պոպուլյացիոն սորտերի նկատմամբ: Այսպես որինակ:

Դաշտային, նախալեռնային և մասամբ նաև ցածր լեռնային գոնաներում մշակվող սորտերում (զարադրչըզ, սպիտակահատ և գալրգալոս) դերիշում են սպիտակ հատիկավոր այլատեսակները, իսկ այդ գոնաներից վեր՝ կարմիր հատիկավորները (կարմրահատ, գյուղացյանի, ալթիաղաջ, կարմիր ցորեն և այլն):

Դաշտային և մասամբ նաև նախալեռնային շրջաններում մշակվող սորտերում գերիշխում են ու և խայտարղետ հասկ ունեցող այլատեսակները (զարգա, զարադրչըզ): Ավելի բարձր զոնաներում նըրանք համարյա անհետանում են:

Նախալեռնային և ցածր լեռնային շրջաններում մշակվող սորտերում գերիշխում են սպիտակ հասկ ունեցող այլատեսակները (զըշըրեկում այլատեսակը սպիտակահատ սորտում, երիտրոսպերմումը՝ գյուղացյանի, և կարմրահատ սորտերում): Ավելի բարձր (հատկապես խոնավ) զոնաներում չեն գերիշխում և սորտ չեն կազմում:

Լեռնային ավելի բարձր, համեմատաբար ավելի խոնավ շրջաններում մշակվող սորտերում գերիշխում են կարմիր հասկ ունեցող այլատեսակները (ֆերուգիներումը՝ կարմրահատ, ալթիաղաջ, կարմըրահասկ գյուղացյանի և այլ սորտերում):

Այս որինաչափությունը կարելի յե տեսնել նաև Սիօիանի, Գորիսի, Ղափանի, Դիլիջանի և մի շարք այլ շրջանների այն գյուղերում, վորոնք ցանքեր ունեն ցածրադիր և բարձրադիր լեռնամասերում: Հետաքրքրական ե այն, վոր այդ շրջանի գյուղացիները բարձր լեռնային հողամասերի ցանքի համար ունեն հատուկ սորտ, վորի մեջ անպայմանորեն գերիշխում են կարմիր հատկավոր այլատեսակները (ֆերուգիներում): Այս տեսակետից հետաքրքիր ցուցմունք տվին Ղափանի Գյուտկում գյուղի կոլխոզնիկները, նրանք սպիտակ հասկամատ Գյուղային ցանում են գյուղի շրջակայքի համեմատաբար կավոր գյուղացյանին ցանում են գյուղի շրջակայքի համեմատաբար ցածր գիրք ունեցող հօղամասերում, իսկ կարմիր հասկ ունեցող գյուղացյանին՝ (կարմրահասկ գյուղացյանին) բարձր լեռնային մասերում: Այս նույն որինաչափությունը մենք նկատում ենք նաև հյուսիսային հայաստանի շրջաններում: Դիլիջանից կարմիր գյուղի շրջան գնալիս հայաստանի գոնաներում: Դիլիջանից կարմիր գյուղի շրջան գնալիս

կարելի յե նկատել, թե ինչպես ապահովանաբար ցանքերում պակաս առաջանաւ են սպիտակ հասկավոր այլատեսակները (երիտրոսպերմումը), սում են սպիտակ հասկավոր այլատեսակները (ֆերուգիներումը):

Այս որինաչափության տնտեսական եֆեկտը պարզ ե: Վորքան բարձրանում ենք դեպի բարձր լեռնային, խոնավ շրջաններ, այնքան ավելանում ե կարմիր հասկավորների բերքատվությունը և իջնում ե սպիտակ հասկավորների բերքատվությունը:

Այդ գծով նկատվող վորոշ որինաչափությունը վերին աստիճանի արժեքավոր և մեր պրակտիկ աշխատանքների համար, առանձնապես այժմ, յերբ Հայաստանի բոլոր շրջաններում սորտերի բարելավման նպատակով առաջարկում ենք կատարել մասսայական ընտրություն:

Անքիստ այլատեսակներից կազմված քոիկ, գալուալոս սորտի մշակությունը դաշտային շրջաններից սկսում ե ավելանալ և իր մաքայիմումն ե հասնում նախալեռնային և ցածր լեռնային գոտիներում, վորից հետո խիստ կերպով նվազում և վորպես սորտ վերանում ե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՑՈՐԵՆԻ ԿԱԶՄԻ ԲԱԶՄԱՉԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Աբգեն նշեցինք, վոր Հայաստանի ցորեններն աչքի յեն ընկնում վնչ միայն իրենց տեսակների և այլատեսակների քանակային կազմերով, այլ և իրենց ենդեմիկ նոր տեսակներով և այլատեսակներով, վորոնք հիմնականում արդյունք են բուռն թափով ընթացող ձեռագույն պրոցեսների:

Հայաստանի ցորենների բաղմազանության գլխավոր պատճառները պետք ե համարել:

ա) բույսի վրա աղողող արտաքին պայմանները.

բ) ներմուծումները.

շ) բնական տրամախաչումները.

դ) ընտրությունը:

ԲՈՒՅՍՆԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՑՄԱՆՆԵՐԸ

«Յես համոզված եմ, վոր մեզ շրջապատող բուսական աշխարհում ուրգանիզմների բնույթը փոփոխման և յենթարկվում անհամեմատ ավելի արագ և ավելի հաճախ, քան գիտության մարդիկ այդ մասին կարծում են: Այդ բավականաչափ խորը և արագ փոփոխությունները բնության մեջ հեշտությամբ կատարվում են միայն այն պատճառով, վոր նույն սորտի (կամ այլատեսակի) վայրի բույսերը միաժամանակ

գտնվում են ամենաբազմազան դրսւթյան մեջ: Կինում են ծեր բուժսեր, դրանց հետ միասին քիչ ծեր, միանգամայն յերիտասարդ բույսեր և նույնիսկ ծլած և ծլած սերմեր: Այնքան, վորքան նույն սորտի բուսական որդանիզմները ներկայացված են տարբեր դրությամբ, ինձ թվում ե, վոր բույսերին շրջապատող պայմանների փոփոխությամբ, հաճախ կդանվեն նույն այլատեսակի խումբ որդանիզմներ, վորոնք հետությամբ և արագ կփոխվեն ժառանգականորեն: Բնական ընտրության միջոցով այդ փոփոխվող բույսերը հարմարեցվում և հաստատվում են շրջապատի նոր պայմաններին: Այդ իսկ պատճառով, իմ կարծիքով, բնության մեջ բույսերն ավելի մեծ հնարավորություններ ունեն ժառանգաբար փոփոխվելու, քան վորձերի մեջ, վորը փոփոխություններն ուսումնասիրելու նպատակով արգել են աշխարհի շատ գիտնականների կողմից»¹⁾

«Բոլոր որդանական եյակները սերտ կերպով կապված են շրջապատի պայմանների հետ: Նրանք կարծես չափված ձեած են համաձայն այն կաղապարի, վոր տալիս են շրջապատի պայմանները, այնպես վոր շրջապատի պայմանների յուրաքանչյուր փոփոխություն իր դըրոշն ե դնում որդանիզմի. վրա: Փոփոխության այս ազբյուրից մարդը բոլոր դարերում շարունակ ոգուտ ե քաղել»²⁾

«Բույսերի դաստիարակության պայմանները անմասն չեն մնում որդանիզմի բնույթի փոփոխման մեջ: Իրենց սկզբնավորությամբ, ծագ մամբ միատեսակ որդանիզմներին հետագայում դաստիարակելով՝ տարրեր պայմաններում, տալիս են տարբեր սերունդներ»³⁾

Հայաստանի ուելյեֆի, կլիմայի և հողային պայմանների խիստ խայտարգետությունը, մշակության առանձնահատկությունները և արտաքին այլ ֆակտորները տարիների ընթացքում իրենց ուժեղ և խորը ազդեցությունն են թողել և թողնում են ցորենի բույսերի ինչպես ներքին, նույնպես և արտաքին հատկանիշների փոփոխման վրա:

Այս ուղղությամբ Հայաստանում մենք ունենք չափազանց հետաքրքրական փաստեր:

Պրոֆ. Մ. Թումանյանը Յերևանի Գյուղատնտեսական ինստիտուտի հոգամասում Տաճկաստանից ստացված ցորենից առանձնացված sub-graecum-ի և sub-mesopotamicum-ի ցանքսերի մեջ դիտել ե հասկի արտաքին հատկանիշներով, ընդհանուր մասսայից տարբերվող բյուսեր, վորոնք մի քանի սերնդից հետո, համապատասխան դաստիարակման պայմաններում, տվել են այնպիսի խորը

1) Акад. Т. Д. Лысенко „Сила Советской науки в ее связи с массами“ Соц. рек. с/х. ства № 11.12 1937 г. ст. 85:

2) Գ. Ա. Տիմիրազեց «Զ. Դարվին և նրա ուսմունքը» հայ. հրատ. եջ 117:

3) Ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի վերոհիշյալ հոդվածի 82 եջ:

մորֆոլոգիական (հասկը ճյուղավոր, կոտրատվող, հասկիկալին թեփուկները սպելտանման) և բիո-ֆիզիոլոգիական (հատիկի մեջ սպիտակուցային նյութերի մեծ քանակություն, չորադիմացկանություն, վաղահասություն և այլն) փոփոխություններ, վորը հնարավոր և դարձրել առանձնացնել վորպես մի նոր տեսակ (ՎИД) Tr. Vavilovianum Thum:

Վայրի միահատ ցորենների Tr. Aegilopoides ի ուսումնասիրության ընթացքում Պրոֆ. Թումանյանը հայտնաբերեց բիոլոգիական, մորֆոլոգիական նոր հատկանիշներով բույսեր, (թափշանման տերեներով, հասկիկային թեփուկի յերկրորդ կիլն ուժեղ արտահայտված, ծաղկի փոշանոթներն ունեն վորոշ ձև, մինչդեռ նրա ծնողները—վայրի միահատ ցորեններն ունեն կարծր և յերկար մաղերով պատված տերեներ, հասկիկային թեփիկի յերկրորդ կիլը թույլ արտահայտված և ծաղկի փոշանոթների վորոշ ձև), վորոնք առանձնացվել են, վորպես վայրի միահատ ցորեննի մի նոր տեսակ՝ Tr. urartia Thum.

Բացի այս, Պրոֆ. Մ. Թումանյանը հայտնաբերել է մի շարք սպոնտան մուտացիաներ: 1)

Հայտնի յեն նաև մորֆոլոգիական հատկանիշների փոփոխման տարբեր և բազմաթիվ փաստեր. այսպես որինակ՝ անքիստ այլատեսակները լեռնային պայմաններում մշակվելով աստիճանաբար դառնում են կիսաքստավոր. Հայաստանում բավական մեծ տարածություններով մշակվող տեղական գալգալոս սորտի մեջ գերիշտող գելֆի ալլատեսակը (Delfi) դաշտային և նախալեռնային շրջաններում անքիստ ե, իսկ լեռնային շրջաններում մշակվող նույն այլատեսակի հասկը, նույնառուն սորտի մեջ, վերի մասում ունենում ե քիստանման սրվածք: Այդ տեսակետից պատահական չե, վոր լեռնային մասերում գալգալոս սորտի ցանքսերում հաճախակի կարելի յե պատահել կիսաքստավոր Delfi, վորը սիստեմատիկայում ընդունվում ե վորպես ինքնուրսւյն այլատեսակ subturcicum:

Հայտնի յե նաև հասկի յերկարանալու մի քանի փաստեր. այսպես որինակ՝ ցորենի կունգիկ տեսակին պատկանող երինացելում այլատեսակի հասկը (eripaceum) վորոշ պայմաններում յերկարում ե և այդ իսկ պատճառով շատ հաճախ դժվար է լինում վորոշել, թե դուշունի վոր տեսակին ե պատկանում, կունգիկին թե փափուկին:

Նման փաստերի շարքը կարելի յե ավելացնել, սակայն այսքանն ել բավական ե ցույց տալու, թե ինչպես արտաքին պայմանների և

1) М. Г. Туманян „Возникновение в природе полиплоидных мутаций у диких пшениц однозернянок“.

Доклады Акад. наук. СССР. том XVI № 6 1937 г. стр. 333-336.

որդանիզմի փոխներգործությամբ յերկար տարիների ընթացքում ստեղծվել և ստեղծվում են վնչ միայն փոքր միավորներ՝ այլատեսակներ, ձեռք, այլ և մեծ միավորներ՝ տեսակներ:

Արտաքին պայմանների ազդեցությամբ կատարվող փոփոխությունները չեն սահմանափակվում միայն արտաքին մորֆոլոգիական հատկանիշների փոփոխմամբ: Նրանց ազդեցությամբ ուժեղ չափով փոփոխման են յենթարկվում նաև որդանիզմի ներքին հատկանիշները: Միևնույն այլատեսակների սահմանում, միևնույն սորտում կարելի յենկատել աշնանացան, կիսաաշնանացան, գարնանացան (հատկապես դաշտային և նախալեռնային զանաներում), թափվող, վաղահաս, ուշահաս, արդյունավետ և վոչ արդյունավետ և բազմաթիվ ձեռք: Ահա այդ փոփոխությունների ընդարձակ փնտում մարդը հարատե ընտրության և համապատասխան պայմաններում դաստիարակման միջոցով ստացել առանձնացրել և զարգացրել և ներկայումս զոյլություն ունեցող ձեռքսորտերը:

«Բուսական որդանիզմների բնույթի փոփոխությունները կարելի յեն պետք եղեկավարվի, յեթե որդանիզմի դաստիարակումը զեկավարվի» 1)

ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆԵՐ

Հայատամի ցորենների բաղմազանության պատճառներից մեկն ել պետք եղեկավարել դարերի ընթացքում այլ յերկիրներից կատարված ներմուծությունները: Հայտնի փաստ ե, վոր Հայատամը հնում հանդիսացել է առևտրական մեծ ճանապարհի վրա ընկած յերկիր, վարպետի հանդամանքը խոշոր չափով նպաստել է տարբեր վայրերից ցորենի տարբեր սորտերի ներմուծմանը:

Վաշ այնքան հեռու անցյալում Հայատաման է ընկած անգլիական Հյուզավոր տեսակին պատկանող, այսպես կոչվող «հրաշալի» ցորենը: Այս սորտը Հայատաման է ներմուծվել 1921-22 թ. թ.: Վրաստանից ներմուծված եւ Կայքմ Ալանվերդու շըջանում մշակվում է «Թավթուի» սորտը, վորի մեջ գերակշռում են ցորենի կարծր տեսակին պատկանող այլատեսակները: Ալբրեջանից՝ «Շեղնազարդա» սորտը (իջևանի, նոյեմբերյանի շըջաններում), վորի մեջ գերակշռում են կարծր ցորենի այլատեսակները, «ալթի-աղաջ» սորտը (Շամշադինի և Կարմիր դյուղի շըջաններում), վորի մեջ գերակշռում են փափուկ ցորենի այլատեսակները:

Անատոլիայից ներմուծված եւ այժմ մեծ տարածություններում մշակվում է «գալլալու» սորտը, վորի մեջ գերակշռում են փափուկ ցորենի այլատեսակները: Նույն տեղից են բերված «կունդիկ» և սովիտակ Կամչատկա» սորտերը, վորոնց մեջ գերակշռում են կունդիկ ցորենի այլատեսակները:

Ահա այս բոլորն, իրենց հերթին, ավելացրել են Հայատամի ցորենի տեսակների, այլատեսակների, սորտերի և ձեռքի կազմը:

ԲՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԽԱԶՈՒՄ

Բազմազանության առաջացման գործում վորոշակի գեր եղատարել և կատարում, բավական հաճախակի կատարվող բնական տրամախաչումը:

Մեր ուսումնասիրության ընթացքում մեզ հաջողվեց այս գծով հայտնաբերել շատ հետաքրքրական փաստեր:

1934 թ. Նոր-Բայազետի Սարութան գյուղից բերված կիսաքիսավոր, մազմղուկներով ծածկված, կարմիր հասկավոր և հատիկները սպիտակ ցորենի մեկ հասկի հետագա սերնդում՝ 1935 և 1936 թվերին ստացանք ըստ արտաքին հատկանիշների (ինչպես նաև ներքին) հետեւյալ ձեղքավորումները:

Հաստ քիստավորության	Հաստ թափուտության		Հաստ հատիկների գույնի		Հաստ հատկերի գույնի			
	Քիստավոր	Գիստավոր	Անդիք	Մազմղուկավոր	Մերկ	Կարմիր	Սպիտակ	Կարմիր
1935 թ.	1	3	4	4	4	7	1	8
1936 թ.	37	23	8	61	7	61	7	68

Արտաքին նշաններով սուրբառուցիկումին նման ծնողից 1935 թ. և 1936 թ. ստացվեցին բույսեր, վորոնք նմանվում են փափուկ ցորենի հետեւյալ 10 այլատեսակներին՝ բարբարոսա, սուրբ-բարբարոսա, սպեզգութարբարսոսա, պսեվդո-տուրցիկում, տուրցիկում, սուրբ-Փերուցիներում, սուրբ-երիտրոսպակերմում, միլտուրում և պիրուտիքում:

1935 թ. Ն. Աթատյի շրջանի Բաբաքշի գյուղից ցանքերից հավաքված կունդիկ ցորենի սուրբինուոգեսի (ՏՍԵ-echinodes) այլատեսակին նման մեկ հասկից հետագայում ստացանք կունդիկ և փափուկ ցորենի հետեւյալ 9 այլատեսակների նման բույսեր՝ կունդիկ ցորենից եխինոգես, երինացեյում, ֆետիսովի և ոռուբրիցեպու: Փափուկ ցորենից պիրուտիքու, միլտուրում, բարբարոսա, սպեզգութարբարսոսա և երիտրուեվկոն:

Նման փաստերի շարքը կարելի յեր ավելացնել սակայն այս ել բավական է ցույց տալու, վոր ցորենների բնական տրամախաչումը իսկապես հանդիսանում է բազմազանություն ստեղծող կարեսը Փակտորներից մեկը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

«Մարդը կարող է կամ անմիջականորեն փոփոխել որդանական

1) Անդադիմիկ Ալբանկո նույն հաղվածի 82 հջում:

ձեռքը, յենթարկելով նրանց բնության զանազան գործոնների ազդեցության, կամ նա կարող է զարգացնել այն պատահական փոփոխությունները, վորոնք առաջանում են ինքն ըստինքյան։¹⁾

Այժմյան կուլտուրական բույսերի բոլոր լավագույն սորտերն արդյունք են մարդու անմիջական ընտրության։ Տիմիրաղեվը զբանում է, վոր ընտրության պրոցեսն ավելի հաջող կընթանա, յեթե շատ լինեն ընտրության յենթակա անհատները, վորովհետև դրանով ավելի մեծ կլինի ոգտակար փոփոխությունների յերեան գալու հնարավորությունը։ Յեվ իսկապես, Հայաստանի ընտալատմական, մշակության և բազմապիսի այլ պայմանների հետևանքով առաջացած ցորենների տեսակների, այլատեսակների և ձեռքի փոփոխություններից մարդիշտ ոգտվել ե և ընտրության ու համապատասխան պայմանների վե միշտ ոգտվել ե և ընտրության ու համապատասխան պայմանների մասնակիման միջոցով բնական ձեռքը հասցըել ե կատարելագործդաստիարակման միջոցով։ Բնական ձեռքը հասցըել ե կատարելագործման, ստեղծելով իր նպատակներին համապատասխան սորտեր։

ՀԱՅԱՍՏԱՆԻՄ ՄՇԱԿՈՂ ՑՈՐԵՆՆԵՐԻ ՍՈՐՏԵՐԸ

Հայաստանում մշակվող ցորենների սորտերը բաժանվում են յերկու հիմնական խմբի՝

ա) տեղական պոպուլյարիոն, վոչ սելեկցիոն սորտեր, վորոնցով դրաղված ե ցորենի ցանքերի 85—90 %-ը և բ) սելեկցիոն սորտեր։

Ա. ՏԵՂԱԿԱՆ ՊՈՊՈՒԼՅԱՐԻՈՆ ՍՈՐՏԵՐ

Հայաստանի բոլոր կլիմայական զոնաներից և վարչական շրջաններից բերված ցորենի տեղական սորտերի բուսաբանական մանրազնին անալիգները ցույց տվին, վոր կոլանտեսություններում մշակվող ցորենների տեղական սորտերը թե մորֆոլոգիական և թե անտեսական բիոլոգիական հատկանիշներով խիստ խայտարգետ են։ Այդ սորտերը կազմված են ցորենի 1-ից ավելի տեսակներին պատկանող 3-30 այլատեսակներից և դրանց տասնյակ բիոլոգիական-տնտեսական և մորֆոլոգիական ձեռքից, վորոշ պոպուլյարիոն կան նաև աշորայի մի քանի այլատեսակներ։

Սորտերի տեսակային և այլատեսակային խայտարդեսության մի քանի նմուշներ ցույց ե տրված № 9 աղյուսակում (ըստ 1936 թ. անալիգների):

Աղյուսակ—Տաճ. № 9

Սորտերի անունը, արջանը, գյուղը	Բուսաբանական կազմը		
	Ըստ տեսակների և այլատեսակների թիվը	Տեսակների թիվը	Այլատեսակների թիվը
1. Սպիտակահատ, Կոտայքի, Արդնի	2		10
2. Ղարաղլըլյ. Վեղի, Դավալու	3		22
3. Գալգալսա. Զամարլուի, Նորաշեն	2		22
4. > Ախտալի,	3		18
5. > Դաւդքենդի,	3		13
6. Կարմրահատ. Բայազետի, Սարուխան:	3		15
7. Կարմրահատ. Բայազետի, Փաշարլանդ:	3		18
8. > Դաւդքենդի, > Փ. Ղարաքի- լիսա:	3		15

1) Կ. Ա. Տիմիրացկ «Զ. Քարին և նրա ուսմունքը», հայ, հրատ. եջ 117

Ալս ուղղությամբ ավելի մանրամասն տվյալներ բերված են առանձին սորտերի բուսաբանական անալիզներում։ Սակայն վերոհիշյալներն ել առաջմ բավական են համոզվելու, վոր Հայաստանի ցուրենների տեղական սորտերն իրենց կազմով խիստ խայտարդետ են։

Սորտերի կազմում յեղած այլատեսակները գտնվում են քանակական տարրեր փոխարաբերության մեջ, այս տեսակետից սորտպուլացիաները կարելի յե խմբավորել հետեւյալ կերպով։

1) Պոպուլյացիաներ, վորոնց կազմում գտնվող այլատեսակներից 2-3-ը սովորաբար գտնվում են մեծ, իսկ մնացածները համեմատարար փոքր տոկոսներով։

Մեծ տոկոս կազմող այլատեսակներից մեկն ու մեկն իր քանակով գերակշռում ե։

2) Պոպուլյացիաներ, վորոնց կազմում գտնվող այլատեսակներից 2-3 սովորաբար գտնվում են մեծ տոկոսով, սակայն այդ թվից և վոչ մեկը չի գերակշռում։

3) Պոպուլյացիաներ, վորոնց կազմում գտնվող այլատեսակներից միայն մեկն է կազմում մեծ տոկոս, այն ել բացարձակ գերակշռով։

Նման գերակշռում ցորենի տեղական սորտերն այլատեսակի սահմանում «մաքուր» են, բայց բիոլոգիական-տնտեսական հատկանիշներով մնում են պոպուլյացիա։

Այլատեսակների քանակական տարրեր փոխարաբերություն նկատվում է նաև եկոլոգիական տարրեր պայմաններում գտնվող նույն սորտի կազմում։ Շնորհիվ այդ դրության՝ վորոշ գերակշռում գտնվում են սորտպուլյացիայի տնտեսական-բիոլոգիական ընդհանուր միջին հատկությունները։ Այդ կարևոր են նաև մի շարք բիոլոգիական հարցերի ուսումնամիջության համար։

Հայաստանում մշակվող ցորենների տեղական պոպուլյացիաներն իրենց բնույթով շատ նման են Անտառլիալի (Թուրքիայի), Աղվանստանի, Իրանի, ինչպես նաև Վրաստանի Ախալքալակի և Աղրբեջանի ցորենների տեղական պոպուլյացիաներին։

Հայաստանում մշակվող ցորենի տեղական պոպուլյացիան սորտերը շատ են, նրանցից յուրաքանչյուրն ունի իր վորոշ կազմը (գերիշխող այլատեսակով կամ այլատեսակներով) և վորոշ անունը։

Մշակվող սորտին արվող տեղական այս կամ այն անունը հիմնականում արտահայտում ե 1) տվյալ սորտի մեջ գերիշխող այլատեսակի մորֆոլոգիական հատկանիշները՝ հասկի քիստավորությունը (չփլաղ, գալգալոս), քիստերի գույնը (դարագըլչըզ), հատիկի գույնը (սպիտականատ, կարմրանատ, 2) սորտի ծագումը, վորը ցույց է տալիս, թե ավյալ սորտը զորտեղից ե բերված («ալթի աղաջ»՝ Աղրեջանի Ալթի աղաջ գյուղից), 3) Սորտի աշնանացան կամ գարնանացան լինելը, որինակ, հարավային Հայաստանում «գ ը ն ա ն ի» անվանում

են բոլոր գարնանացան սորտերը (Գըրհանի՝ գարնանային բառի գավառական ձևն ե) և այլն։

Շատ հաճախ համարյա միենույն բուսաբանական կազմ ունեցող պոպուլյացիաները տարբեր շրջաններում և նույնիսկ նույն շրջանում և նույն գյուղում տարբեր անուններով են կոչվում։ Այսպես, որինակ՝ դաշտային շրջաններում մեծ տարածություններով մշակվող աշնանացան ցորենի տեղական սորտը կոչվում է զարագըլչըզ (աև քիստավոր), զարդա, սարի-բուղդա (գեղին ցորեն) և այլն։ Յերեկն ել տարբեր բուսաբանական կազմ ունեցող սորտերը տարբեր շրջաններում միենույն անունով են կոչվում։ Որինակ՝ զարդադաշտային շրջանում և զարդա Իջևանի, Նոյեմբերյանի, Շամշադինի շրջաններում բոլորովին տարբեր հասկացողություններ են. մի դեպքում գերակշռում ե միափուկ, մյուս դեպքում կարծր ցորենի տեսակներին պատկանող այլատեսակները։

Կրտադրական մասշտաբով մշակվող տեղական սորտերը հետեւյալներն են։

1) Կարմրանատ, 2) կարմրանատ-դալիբուղդա, 3) քոփիկ, գալգալոս, 4) սպիտականատ, 5) զարագըլչըզ, 6) գյուլցյանի, 7) կարմրանասկ գյուլցյանի, 8) սլֆանատ (կարմրանասկ և սպիտականասկ), 9) սպիտակ կամչատկա, 10) կունդիկ, 11) ալթիաղաջ, 12) գոմբորկա, 13) թալթիութի, 14) զարդա կամ գեղնազարդա, 15) չալ-զարդա, 16) կարմրի ցորեն, 17) իրանի կարմրի ցորեն, 18) Հարաբազի գյուլիսոր կամ զարադրէչըզ գյուլիսոր, 19) աշլան։

ՏԵՂԱԿԱՆ ՍՈՐՏԵՐԻ (ՊՈՊՈՒԼՅԱՑԻԱՆԵՐԻ) ԽՄԲԱՎԱՐՈՐՈՒՄՆ
ԸՆԾ ՏԵԽԱԿԱՑԻՆ ԿԱԶՁՄԻ

Կերպիցյալ պոպուլյացիաներն ըստ իրենց կազմում գերիշխող ցորենի տեսակի կարելի յե խմբավորել հետեւյալ ձևով։

Պոպուլյացիաներ, վորոնց կազմում գերիշխում են վափուկ ցորենին պատկանող այլատեսակները։

Հարազըլչըզ, սպիտականատ, գալգալոս, Իրանի կարմրի ցորեն, գյուլցյանի, կարմրանասկ գյուլ գյանի, գյուլիսոր, սլֆանատ, ալթիաղաջ, կարմրի ցորեն, կարմրանատ, գոմբորկա և զարագըլչըզ գյուլիսոր. ընդհանուր 13 սորտ։

Պոպուլյացիաներ, վորոնց կազմում գերիշխում են կունդիկ ցորենին պատկանող այլատեսակները։

Սպիտակ կամչատկա և կունդիկ. ընդհանուր 2 սորտ։

Պոպուլյացիաներ, վորոնց կազմում գերիշխում են կարծր ցորենին պատկանող այլատեսակները։

Դեղնազարդա և թավթութի. ընդհանուր 2 սորտ

Պոպուլյացիա, վորի կազմում գերիշխում են պերսիկում ցորենին պատկանող այլատեսակները.

Կարմրահատ-դալիբուղդա. ընդամենը 1 սորտ:

Պոպուլյացիա, վորի կազմում գերիշխում են անգլիական ցորենին պատկանող այլատեսակները.

Չալդարդա, ընդամենը 1 սորտ:

Պոպուլյացիա, վորի կազմում գերիշխում են Triiticum և secale ցեղերը. (ցորենի և աշորայի)

1. Աշխան:

ՏԵՂԱԿԱՆ ՍՈՐՏԵՐԻ (ՊՈՊՈՒԼՅԱՑԻԱՆԵՐԻ) ԶՈՆԱՑԱԿԱՆ
ԴԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ.

Վերոհիշյալ պոպուլյացիաներն ըստ զոնաների դասավարվում են հետեւյալ կերպով:

ՓԱՓՈՒՀԿ ՑՈՐԵՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՊՈՊՈՒԼՅԱՑԻԱՆԵՐԸ

Դաշտային զոնայում—զարադրւչը, սպիտակահատ, գալգալոս, իրանի կարմիր ցորեն: Հիմնականում տարածված ե զարադրւչը:

Նախալեռնային զոնայում—սպիտակահատ, գալգալոս:

Ցածր լեռնային զոնայում—գալգալոս, կարմրահատ:

Անտառային շրջաններում—գյուղայնի, գոմբորկա, ալթիազաջ, լեռնային շրջաններում—կարմրահատ, գյուղիսոր, գյուղայնի սլֆահատ, կարմիր ցորեն:

ԿՈՒՆԴԻԿ ՑՈՐԵՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՊՈՊՈՒԼՅԱՑԻԱՆԵՐԸ.

Դաշտային զոնայում—սպիտակ կամչատկա

Նախալեռնային զոնայում » »

Լեռնային զոնայում—կունդիկ

ԿՈՐԾՐ ՑՈՐԵՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՊՈՊՈՒԼՅԱՑԻԱՆԵՐԸ.

Անտառային շրջանում—թավթուխի, գեղնաղարդա.

ԳԵՐՄԻԿՈՒՄ ՑՈՐԵՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՊՈՊՈՒԼՅԱՑԻԱՆԵՐԸ.

Լեռնային զոնայում (խոնագ շրջաններում)—կարմրահատ դալիքուղդա:

ԱՆ ՔԼԻՄԱԿԱՆ ՑՈՐԵՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՊՈՊՈՒԼՅԱՑԻԱՆԵՐԸ.

Անտառային մեկ շրջանում—չալդարդա:

Ցորենին տեղական պոպուլյացիաների զոնայական վերոհիշյալիստ մոտավոր դասավորումից նկատվում է, վեր փափուկ ցորենին պատկանողներն ունեն մշակման ավելի լայն արեալ: Նրանց մշակությանը կարելի յե պատահել դաշտավայրերից մինչև բարձր լեռնային շրջաններում-զոնաներում: Համեմատաբար ավելի փոքր արեալով մըշակվում են կունդիկ ցորենին պատկանողները, իսկ մնացածների մըշակությունը խիստ սահմանափակ է: Նրանցից մի քանիսին կարելի յե պատահել միայն մեկ շրջանում, կամ նույնիսկ մի գյուղում (Չալդարդա):

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄՇԱԿՎՈՂ ՑՈՐԵՆՆԵՐԻ ՊՈՊՈՒԼՅԱՑԻՈՆ ՍՈՐՏԵՐԻ
ՏԱՐԱԾՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ, ԲՈՒՍԱԲԱԿԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ
ԱԳՐՈԲԽՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ

Յուրաքանչյուր սորտի նկարագրության համար ընդունել ենք հետեւյալ սխեման: 1) տարածման շրջանները (գծագրել ենք համապատասխան քարտեզ): 2) բուսաբանական կազմը, (տեսակային և այլատեսակային) տոկոսներով աբտահայտված (տրված ե համապատասխան աղյուսակ): 3) պոպուլյացիան ազբորիուսփիական տնտեսական կարեւոր առանձնահատկությունները և 4) ըստ հնարավորության պատմական տեղեկությունները:

Սորտերի հերթական դասավորությունը կատարել ենք, ըստ սորտի կազմում գերիշխող այլատեսակների տեսակային պատկանելու թյան (փափուկ, պերսիկում, կունդիկ, կարծր, անզիփիական և այլն):



Նկ. № 1 Հայաստանի ցորենին տեղական սորտերի ցանքը Արմֆանի բաւարանական այգում (Կոտայքի մարզ), հոկտեմբեր 1935 թ.

**ՓԱՓՈՒԿ ՅԵՎ ՊԵՐՍԻԿՈՒՄ ՏԵՍԱԿՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ
ՍՈՐՏԵՐԸ**

1. ԳԱԼԳԱԼՈՍ, ՔՐԻԿ

Վերոհիշյալ անուններով պոպուլյացիան մշակվում է՝

Դաստիարակության մասնակի համարյա բոլոր գյուղերում:

Սրբիկի շրջանի գլխավորապես արևմտյան մասում զտնվող գյուղերում (Խարկովից մինչև Թալիբովի գյուղերը), համեմատաբար քիչ չափով՝ մնացած գյուղեր բոլոր գյուղերում: Զի մշակվում հյուսիսարեւելյան մասում գտնվող Յեղանլար, Մ. Արխավալի և շրջակա մի քանի գյուղերում:



Նկ. № 2. Ցորենի տեղական սորտերի ուսումնասիրությունը Բառարգելարի Մ. Մագրայի կողմունքի դաշտում: 25 հունիսի 1934 թ.

Ամասիայի շրջանի հարավարևմտյան մասում, Ողջողու յենթաշրջանում (Ողջողու, Թ. Գյուլիբուլաղ և կից գյուղերում):

Թալինի շրջանի հյուսիսարևմտյան, Արթիկին սահմանակից և կենտրոնական մասերում գտնվող գյուղերում (Ն. Արթիկ գյուղից մինչև Մուսլուղի, Մաստարա, Սարունջի, Փիրմալար, Վ. Թալին, Դիլիջան և նրանց կից գյուղերում):

Ապարանի շրջանի հարավից դեպի հյուսիս, Քառախ գետի աջ և ձախ ափերին, Ափնագեղից մինչև Ապարան գյուղերը:

Ախտայի հարավարևմտյան մասսիվում Ալափարսի յենթաշրջանում (Ալափարս, Արգայանդ, Սոլակ և կից գյուղերում):

Աշտարակի հյուսիսարևմտյան մասի գյուղերում:

Կոտայքի շրջանի հատկապես հյուսիսային արևելյան և հարավային մասսիվում գտնվող գյուղերում (Դյառնի, Հրազդան, Կապատան և կից գյուղերում):

Վաղպատի շրջանի հատկապես հյուսիսարևմտյան մասսիվում ընկած գյուղերում (Խղնավուղ, Աղավնատուն):



Աղինի շրջանի բոլոր գյուղերում:


Ղամարլուի շրջանի հյուսիսային մասսիվում Շորբուլաղի յենթաշրջանում:

Նարարտաղլարի շրջանի թայթան, Գյուղովան, Զիմանքյանդ, Զառնաթչի և Միլի գետի հովտի Բայրուրդ, Քյոլանլու և սրանց կից գյուղերում:

Միկոյանի շրջանի համարյա բոլոր գյուղերում (Մալիշկա, Միկոյան, Յենգիջա, Գնիղեկ, Քարագլուխ, Սալի, Ելփին, Աղքենդ):

Ազիգրեկովի շրջանի առաջին, յերկրորդ և յերրորդ զոնաների մեջ մտնող գյուղերում (Ազատիկ, Աղիզեկով, Զայքենդ, Գնդեվազ, Հերհեր): Զի մշակվում միայն 4-րդ զոնայում:

Բոլոր շրջաններում ընդամենը մշակվում և մոտավորապես 30000—35000 հեկտ. տարածության վրա:



Քաղաքուի մշակությունը բացակայում և Հայաստանի հյուսիսային, հարավային, ինչպես նաև Սեվանա լճի ափին գտնվող շրջաններում (Իջևան, Նոյեմբերյան, Աղանձերդի, Շամշադին, Ստեփանավան, Դիլիջան, Մեղրի, Ղափան, Գորիս, Մարտունի, Բայազետ):

Ենդեմիկ և համեմատաբար չոր լեռնատափաստանային դոնայի շրջանների համար, այդ և պատճառը, վոր այս պոպուլյացիան ունեցաւ միվներով մշակվում է Թուղթենդի, Արթիկի, Աղինի, Թալինի, Ախտայի (Աւագարսի յենթաշըշանում), Միկոյանի և Աղիզեկովի շրջաններում: Աւզանայաց գոտիով բարձրանում է մինչև 1850 մետր բարձրության (Գնիղեկ):

Պողուցացիան ունի բաւսաբանական հետեւյալ կազմը (տես № 10 աղյուսակը). № 10 աղյուսակից նկատվում է, վոր պոպուլյացիայում գերիշտում և գելֆի այլատեսակը, դրա հետ միասին կան կունդիկ և պերսիկում ցորենի տեսակներին պատկանող մի շաբք այլատեսակներ: Դելֆին կազմում և սորտի 45—97%:

Ֆերիշտող այլատեսակին համարյա միշտ ուղեկցում են փափուկ տեսակից՝ երիտրոսպերմում, ալբիդում, ալբորուբրում, ֆերրուգինեսում, գրեկում, անգիլիկում, պիրոստրիքում կունդիկ տեսակից՝ երինացեյում և ոռոբրիցեալս այլատեսակները: Բացի դրանցից մի քանիսն ուղեկցում են վարոշ շրջաններում, որինակ՝ տուրցիկումը գաշտային շրջանում:

Պողուցացիան ունի հետեւյալ աղբորիոլոգիական առանձնահատկությունները:

Հիմնականում գարնանացան ուսաս յե, ցանվում ե գարնանը: Նախալեռնային և լեռնատափաստանային չոր պայմաններում (Կոտայք, Ալավարս) նաև աշնանը, վորպես աշնանացան կամ, վորպես դոնդուրմա (ցանք ձմեռնամուտին): Աշնանացան կամ դոնդուրմա ցանքը պայմանավորված է նաև սրա ծլերի համեմատական ցրտադիմացկունության հատկությամբ: Գյուղացիների յերկար տարիների փորձից ապացուցված է, վոր դոնդուրմա ցանքը համար չի կարելի ոփտագործել ուղած պոպուլյացիան, ամենից լավ արդյունք ստացվում է գալդալոսից և մի քանի այլ սորտերից:

Համեմատած զարագլչը (համարյանիկումի) և սպիտակահատի (գրեկումի) հետ վազանամ է:

Խոնավ կլիմայական շրջաններում կամ խոնավ տարիներին և միակողմանի պարաբռացված հողերում բազական ուժեղ չափով վարակում է ժանգով, հատկապես ցլումարուղի: Մրիկի նկատմամբ ունի միջակ իմունիտես: Իր այս հատկանիշով ավելի լավ է, քան սպիտակահատը (գրեկում):

Թփակալությունը միջակից ցածր է: Այս տեսակետից իր տեղը զիջում է Հայաստանում մշակվող մցուս համարյա բոլոր պոպուլյացիաներին (նրանց մեջ գերիշտող այլատեսակներին):

Տոթ քամիներից քիչ է տուժում:

Թափփող է (քիչ), դրա պատճառով ել սրա բերքահավաքը կատարվում է համեմատաբար ավելի շուտ: Տալիս և շատ բարձր վորակի հաց և իր այդ հատկանշով առաջին տեղն է գրավում: Հատիկը լոշոր է, գեղնազույն, բարձր արսուլյուտ կշռով (37—40 գր.):

Ծնորհիվ վերոհիշյալ հատկապես համեմատական չորադիմացկունության և վաղահամության, սրա մշակությունը տարածված է գլխարապես չոր լեռնատափաստանային շրջաններում (Դուղքենդ, Աղին, Գնիղեկ):

Արթիկ, Ախտա և այլ շրջաններ): Այս գոնայում առավել է բարձր բերք և լավորակ հատիկ: Խոնավ լեռնատափաստանային, լեռնային, ինչպես նաև անտառային շրջաններում (Ստեփանավան, Կիրովական, Դիլիջան, Ղափան, Բայազետ, Մարտունի), ժանդար ուժեղ վարակվելու հետեւ վանքով, լավ արդյունք չի ստացվում: Հողի նկատմամբ պահանջկատ է, լավ արդյունք չի ստացվում թիճ-քարքարոս և գորշ հողերում:

Մշակվում է թե ջրովի և թե անջրովի հողերում:

Հայաստանի վերոհիշյալ և մի քանի այլ շրջաններում հեռանկարային սորտ է:

Գալգալոսի մշակության սկիզբը Հայաստանում պեսք և համարել 1780-ական թվականները: Հայաստանի ներկա սահմանները մուտք ե գործել Թյուրքիայի՝ Ղարս—Երզում, Ալաշկերտի նահանգներից, ուր սրա մշակութը շատ ե տարածված (Մ. Թումանյան):

Հավանական է, վոր Թյուրքիայից այս պոպուլյացիան տուաջին անդամ մուտք ե գործել այդ նահանգներին կից Դուղենդի շրջանը, վորտեղից և սկսվել ե տարածվել մասցած շրջանները: Յել խապես, գալգալոսն ամենից շատ մշակվում է Դուղենդի, Աղինի, Արթիկ և սրանց սահմանակից շրջաններում: այսինքն՝ այն շրջաններում, վորոնք կից են Թյուրքիային:

Մոտավորակես նման պոպուլյացիա մշակվում է Վրացական հանրապետության Ախալքալակի Թյուրքիային կից մասերում: Վրացական մյուս շրջաններում բացակայում է: Բացակայում է նաև Խ. Միության մյուս հանրապետություններում:

Խ. Միությունից գուրս մշակվում է Թյուրքիայի արեվելյան մի շարք վիլայեթներում բավական մեծ տարածություններով:

Այսպիսով, իրավամբ կարող ենք ասել, վոր այս պոպուլյացիայի մշակության հիմնական ոջախը հանդիսանում են Թյուրքիայի արևելյան վիլայեթները և Թյուրքիային կից Հայկական արևմտյան շրջանները:

Գալգալոսի մշակությունը ներկայումս բավական մեծ չափերով տարածված է Հյուսիսային Կալիֆորնիայում և ԱՄՆ-ի կենտրոնական մասերում:

Հայաստանից Ամերիկա յե տարվել 1900-ական թվականներին:

ԿԱՐՄԻՐԱՐ, ԳՐԻՆԻ, ԳԱՐԱՆԱՀԱՆ ԳՈԼՈՂԱՆԻ

Հայաստանի տարբեր շրջաններում վերոհիշյալ անուններով մշակվող պոպուլյացիաներն ունեն բուսաբանական տարբեր կազմ, հետեւապես և տարբեր ագրոբիոլոգիական հատկանիշներ: Մի գեղքում գերիշխում են ցարենի պերսիկում, մյուս գեղքում փափուկ ցուրենի այլատեսակները: Պարզություն և վորոշակիություն մտցնելու համար՝ անհրաժեշտ է բաժանել յերկու միանդամայն ինքուրույն պուլյացիաների:

Կարմրահատ, զրնանի կոչվող պոպուլյացիաներ, վորոնց մեջ գեղշշխում են փափուկ ցորենի այլատեսակները:

Նույն անունն ունեցող (յերբեմն՝ դալբիթուղթա) պոպուլյացիաներ, վորոնց մեջ գերիշխում են պերսիկում ցորենի այլատեսակները:


2. ԿԱՐՄԻՐԱՐ, ԳՐԻՆԻ, ԳԱՐԱՆԱՀԱՆ ԳՅՈՒՂՅԱՆԻ, ՎՈՐԻ ՄԵԶ ԳԵՐԻՇԽՈՒՄ ԵՆ ՓԱՓՈՒԿ ՑՈՐԵՆԻ ՊԱՏԿԱՆՈՂ, ԱՅԼԱՏԵՍԱԿՆԵՐԸ.

«Կարմրահատ», «զրնանի» կամ «զարնանացան գյուղականի» կոչվող պոպուլյացիան ամենից տարածված սորտն է (մոտավորապես 55-60



հազար հեկտար), մշակվում է Հայաստանի համարյա բոլոր շրջաններում, բացի դաշտային, չոր նախալեռնային շրջաններից (Հոկտեմբերյան, Վաղպատ, Զանգիբասար, Դամարլու, Վեդի, Աշտարակ, Իջևան և այլն):

Ենդեմիկ և միջակ խոնավության, համեմատաբար կարճ զեղեսացիոն շրջան ունեցող լեռնային և սուրբալպյան զոնաներին: Ուղղահայց կոտիով բարձրանում է մինչև 2500 մետր բարձրության: Պոպուլյացիան ունի բուսաբանական հետեւյալ կազմը (տես № 11 աղյուսակը). № 11 աղյուսակից նկատվում է, վոր պոպուլյացիայում գերիշխում են փափուկ ցորենին պատկանող երիտրոսպերմում, տեղադիմում միայն ֆերրուգինենում այլատեսակները: Դրանք հետ միասին կան թե փափուկ, թե կունդիկ և թե պերսիկում ցորենի տեսակներին պատկանող 25—32 այլատեսակներ: Սորտ-պոպուլյացիայում երիտրոսպերմում այլատեսակը կազմում է 40—70%, հատկապես Ստեփանավանի և կից շրջաններում մինչև 97%, այսինքն՝ կազմում է այլատեսակային սահմաններում համարյա «մաքուր» սորտ:



Բասարգեչարի՝ Դաշըյանդ, Միկոյանի՝ Խաչիկ, Սիսիանի՝ Շաբի և մի շարք այլ պյուղերի պոպուլյացիայում գերիշխում է ֆերրուգինեյում այլատեսակը, իսկ տեղադիմ այդ յերկու այլատեսակները գտնվում են համարյա հավասար տոկոսներով (Միկոյանի՝ Այնազուր, Բասարգեչարի՝ Փամբակ, Բայազետ և այլն):

Գերիշխող այլատեսակին համարյա միջա ուղեկցում են փափուկ ցորենից՝ ֆերրուգինենում, կունդիկ ցորենից՝ երինացենում, պերսիկում ցորենից՝ ըուբիդինողում և սորտամենենում այլատեսակները:

Վերոհիշյալ ուղեկցող այլատեսակները շատ հաճախ բավական մեծ 20—40 տոկոս են կազմում և այդ իսկ պատճառով զգալի չափով ազդում են պոպուլյացիայի տնտեսական ընդհանուր հատկությունների վրա: Այսպես, որինակ, յեթե մեծ % է կազմում ըուբիդինողում այլատեսակն, այդ գեղագում պոպուլյացիան հիմնականում քիչ է տուժում մնային կայացին հիվանդություններից, լինում է ավելի խոնավագահանջ, իսկ յեթե մեծ % է կազմում երինացեյումը, քիչ է տուժում տոթքամբիներից, դառնում և ընդհանուր առմամբ համեմատաբար ավելի վաղահաս և տոթքիմացկուն: Հետեւապես, բոլորովին ել միԱնույն չե, թե տվյալ շրջանում ուղեկցող այս կամ այն այլատեսակը պապուլյացիայում բնակ տոկոս է կազմում: Այդ հանգամանքը խոշոր նշանակություն ունի նաև սորտերի բարելավման հարցի քննարկման համար:

Բացի նշված այլատեսակներից, վորոշ շրջաններում ուղեկցում են նաև դելֆին, վորը տեղատեղ կազմում է մինչև 30% խոտանուրդ: Այսպես որինակ՝ Դուղբենդի թափաղուլակ պյուղում 27%, Արթիկի Փանիկում—31% և այլն: Դելֆին չի ուղեկցում բարձր լեռնալին շրջաններում, ուր բացակայում է դելֆու մշակությունը: Սորտը, յեթե ուղեկցող վերօհիցյալ այլատեսակները մեծ % չեն կազմում, ընդհանուր առմամբ ունի հետեւյալ ագրոբիոլոգիական առանձնատկությունները:

Գարնանացան սասա յե, համեմատած գալգալսուի հետ վաղահաս ե, այդ և պատճառը, վոր այս սորտը մշակում է լեռնային կարճ զեղեսացիա ունեցող շրջաններում, ունի թույլ ձեվով արտահայտված չորագիմացկունության հատկություն: Մասամբ դրանով պետք է բացարձի այն փաստը, վոր սա մշակում է նաև չոր լեռնային շրջաններում:

Փանդի նկատմամբ ունի միջակ իմունիտետ, մրիկով ավելի շատ և վարակվում, քան զալպալոսը: Յեթե կարմրահատին ուղեկցում են բարական մեծ տոկոսով պերսիկում ցորենի այլատեսակները, ալլայդ գեղագում պոպուլյացիայի թե ժանդի և թե մրիկի վարակածության ընդհանուր տոկոսն իշնում ե:

Բավական ուժեղ չափով տուժում է տոթքամբիներից, շատ հաճախ, բույսի կտիժնային կամ մոմային հասունացման ժամանակ, մի քանի ժամ տեսող տոթի հետեւանքով սպասվող բարձր բերքի փոխարեն ստացվում է ամենաչնչին բերք՝ հեկտարից 2—3,5 տեսները: Տոթից առաջացած նման կատաստրոֆիկ վիճակն արդյունք և մի կողմից՝ ըույսի (գերիշխող այլատեսակի) թույլ դիմադրողունակության և մյուս կողմից՝ վեգետացիայի համեմատաբար յերկարության (կաթնային կամ մոռային փաղան դուգադիմում և տոթքամբիների շրջանին):

Այն գեղքերում, յերբ պոպուլյացիայում բավականին մեծ տոկոսվ գտնվում են կունդիկ ցորենից երինացեյում և փափռէ շորենից ֆերրուզինեյում այլատեսակները, տոթի առաջացրած ընդհանուր վնասը դժվարի չափով նվազում է:

Թափվող չե, տալիս ե բավականին լավ վորակի հաց, հատիկների արսոյլուտ կշիռ հավասար է 27—25 գրամի, հատիկները մուգ կարմիր, իսկ յերեմն նաև բաց կարմիր գույն (խոնավ շրջաններում) ունին:

Հողի նկատմամբ պահանջկոտ չե: Մշակվում է գլխավորապես անջրդի պայմաններում: Այս պոպուլյացիայի մեջ գերիշխող երիտրոսպերմում այլատեսակը հիմնականում, վորպես քիչ բերքատու այլատեսակ, հեռանկարի տեսակետից մեծ արժեք չունի, սակայն դրանց մեջ կան բավականաչափ արժեքավոր ձեվեր:

3. ԿՈՐՄՈԱՀԱՏ, ԴԻՆԱՆԻ, ՎՈՐԻ ՄԵջ ԳԵՐԵՇԽՈՒՄ Ե ՊԵՐՍԻԿՈՒՄ ՅՈՐԵՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ, ԱՅԼԱՏԵՍՈՎԱԿՆԵՐԸ

Այս պոպուլյացիան, հատկապես Սիստայի յեվ Սևանի շրջանում, ուր սրա մշակությունը բավական շատ ե տարածված, կոչ վում ե նաև դալի-բուղդա (գիճ յորեն, անկայուն բերքատվության պատճառով):

Պոպուլյացիան տարածված ե՝

Սեվանի շրջանի համարյա բոլոր գյուղերում:

Ախտայի շրջանի հատկապես Սեղանի շրջանին կից և Միսխանայի ձորում գտնվող գյուղերում:

Բայազենի շրջանի Հաջիմուխանի յենթաշրջանում:

Ապարանի շրջանի գլխավորապես Ալագյազի շրջանին կից դյուզերում:

Ալագյազի շրջանի բոլոր գյուղերում:

Ամասիայի հատկապես Սուլթանարդից հյուսիս և հյուսիս-արևմոյան մասի գյուղերում:

Սպիտակի հատկապես Նալբանդի յենթաշրջանի լեռնային մասերում:

Միսխանի Բագարչայի յենթաշրջանում:

Դորիսի համարյա բոլոր գյուղերում, բացի Տաթեվի յենթաշրջանից:

Դափանի Աղարակի յենթաշրջանում:

Բոլոր շրջաններում ընդհանրապես մշակվում ե մոտավորապես 17.000—18.000 հեկտ. տարածության վրա: Այս պոպուլյացիայի մշակությունը տարածված ե համեմատաբար ավելի քիչ շրջաններում: Ենդեմիկ ե հատկապես բարձր լեռնային խոնավ շրջանների համար: Զի-

մ շակվում դաշտային, նախալեռնային, անտառային և ցածր լեռնային չոր շրջաններում:

Մրա մշակությունը տարածված է 1700—2400 մետր բարձրության սահմաններում:



Պոպուլյացիան ունի բուսաբանական հետեվյալ կազմը (տես աղյուսակ № 12). աղյուսակից նկատվում ե, վոր պոպուլյացիայում գերիշխում են պերսիկում ցորենի բուրդինողում, կամ ստրամիներում այլատեսակները: Դրանց հետ միասին ուղեկցում են թե փափուկ և թե կունդիկ ցորենին պատկանող 9—10 այլատեսակները: Այդպիսով վերսիւշիալ շրջաններում, յենթաշրջաններում կարմրահատ, գրնանի (Գորիս, Ղափան), դալի-բուղդա (Ախտա) անդամ տակ հասկացվում է յորենի այն սորտը, վորի մեջ գերիշխում են ցորենի պերսի-

Աղյուսակ—Տաблиցа № 12

Հրչաներ Районы	Տեսակներ Виды	Դերմիկ. шորեն ¹⁾	Փափուկ սորեն ²⁾								Կունչիկ շորեն ³⁾	
			Այլատեսակներ Разновидности									
			rubiginosum Zhück.	stramineum Zhück.	erythrospermum Körn.	ferrugineum Al.	Delft Körn.	alborubrum Körn.	barbarossa Al.	albidum Al.	ictorinum Al.	
Դուզքենդ	Ագուբեկ	46,9	8,7	27,4	4,6	3,7	0,8	—	0,8	—	7,0	
Դուզքենդ	Ավճես											
Սպիտակ	Նալբանդ	39,2	3,4	34,8	15,3	3,6	—	—	—	—	1,5	5,2
Ալագեզ	Դանագիրմազ	42,9	2,4	18,5	9,8	—	—	—	—	—	—	26,4
Ապարան	Ապարան	40,5	11,0	40,0	8,5	—	—	—	—	—	—	
Ապարան	Ապարան											
Ն. Բայադես	Հաջիմուղան	41,0	3,8	14,0	13,0	0,2	—	—	0,2	—	28,0	
Ն. Բայադես	Գաջիմուղան											
Ախտա	Բնդամալ	23,0	30,7	10,0	10,0	0,3	—	0,2	0,5	—	25,3	
Ախտա	Բնդամալ											
Սևան	Սևան	20,0	34,8	2,8	12,1	—	—	—	—	—	30,3	
Սևան	Սևան											
Գորիս	Մանածախ	28,3	22,7	10,0	10,2	0,5	—	0,1	—	—	28,3	
Գորիս	Խանաձախ											
	Խոզնավար	70,5	—	12,0	13,0	—	—	—	—	—	3,9	
	Խոզնավար											
	Քարահունջ	62,4	—	18,8	18,8	—	—	—	—	—	—	
	Քարահունջ											
	Կարասակ	39,3	—	38,1	18,6	—	—	—	—	—	4,0	
	Կարասակ											
Կաֆան	Աղարակ	36,3	—	24,9	15,5	—	—	—	—	—	29,3	
Կաֆան	Աղարակ											

1) Персикум, 2) мягкие, 3) карликовые

կում տեսակին պատկանող ըուրիփինոգում կամ սարամինեռմ այլատեսակները, կազմելով պոպուլյացիայի 40—70% ըլ:

Գերիշխեղ այլատեսակին՝ լուրիփինոգումին համարյա միշտ ուղեկցում են նույն տեսակից սարամինեռմը, փափուկ տեսակից՝ երիտրոսպերմում, ֆերրուփինուում և կունդիկ ցորենից՝ երինացեռմ այլատեսակները: Այս ուղիփփողները տեղատեղ բավական մեծ տոկոս, 10—40 տոկոս են կազմում և իլ ենց ներկայությամբ աղքում են պոպուլյացիայի տնտեսական ընդհանուր առանձնահատկությունների վրա:

Պոպուլյացիան ունի հետեւյալ ագրոբիոլոգիական հատկությունները:

Զարդարիմացկուն չե, այդ իսկ պատճառով մշակվում է հատկապես խոնավ ըլջաններում:

Սնկային հիվանդությունների նկատմամբ ունի լավ արտահայտված իմունիտետի հատկությունը նըմական դեպքում, յերբ փափուկ ցորենին պատկանող երիտրոսպերմում այլատեսակը սորտում մեծ տոկոս է կազմում, ինչպես որինակ՝ նալբանդում (35%), Ապարանում (40%), Շինուհայրում (38%) և այլն:

Ուժեղ չափով (ավելի ուժեղ քան երիտրոսպերմումը) տուժում է տուժք քամիներից: Սակայն յերբ կունդիկ ցորենի երինացեռմ այլատեսակը մեծ տոկոս է կազմում, բարձրանում է պապուլյացիայի ընդհանուր տոթադիմացկունության հատկությունը: Թափվող չե: Հացի վորակը միշտակ է: Հատիկի արտովատ կշիռը 27—33 դրամ. ունի մուզ յերեխն նաև բաց գույնի, կոնակի կողմը թույլ կնճոտություն ունեցող հատիկներ: Հողի նկատմամբ պահանջկուս է, լավ արդյունք կարող է տալ միայն պարարտ և խոնավ հողերում: Մշակվում է անջրդի, բայց մթնոլորտային տեղումներով հարուստ վայրերում:

Շնորհիվ վերօհիչյալ հատկանիշների սրա մշակությունը տարածված է գլխավորապես խոնավ, բարձր լեռնային շրջաններում: Նշանակած շրջաններում, խոնավ տարիներին տալիս է միշտակից բարձր բերք: Այս պոպուլյացիան և նրա մեջ գեղ գերիշխող ըուրիփինոգում և սարամինեռմ այլատեսակները սելեկցիայի համար շատ արժեքավոր նյութ են հանդիսանում: Մոտավորապես նման պոպուլյացիա «Թիկա» անվանական մշակվում է վարատանում՝ ծալկայի, Տրիալեթի, Բորդոմի, Բակուրիանիի, Դուշեթի^Ա Ախալքալակի շրջաններում: Էստ Թյուրքիայի

սելեկցիոներ Միքանասիզաղիյի, հայտնաբերված և նաև արևելյան Անատոլիայում (Ղարսի, Արդվինի և Երզերումի վիլայեթներում):

4. ՍՊԻՏԱԿԱՎԱՐ

Այս սորտը մշակվում է՝

Աշտարակի շրջանի համարյա բոլոր գյուղերում:

Կոտայքի շրջանի հարավ, հարավ-արևմտյան և կենտրոնական մասերում գտնվող գյուղերում (Քանաքեռ, Պտղնի, Առինջ, Եյլար Արգնի, Բաշգյաննի, Քարփիչլու և կից գյուղերում):

Միկոյանի և Ազիզբեկովի շրջանների առաջին և յերկրորդ զոնաներում գտնվող գյուղերում (Որթաքյանդ, Միկոյան, Գետափի, Մալիշկա, Ազիզբեկով, Փոռ, Ազատիկ, Չայքենդ, Գնդեվազ և կից գյուղերում):



Схема распределения посевов

«СПИТАКАР»

НАИМАЯ ТОЧКА СОСРЕДОТОЧЕНИЯ
50-100 ГА

Թալինի շրջանի կենտրոնական և հարավ-արևմելյան մասերում դտնվող գյուղերում (Վ. Թալին, Աշնակ, Մաստարա):

Վաղպատի շրջանի վորոշ գյուղերում, բավական մեծ տարածություններով մշակվում են հատկապես Քասախ գետի աջ և ձախ մասերում ընկած գյուղերում (Սամաղար, Հայթաղ, Զեյվա, Արշալույս, Խզնագուղ, Վաղարշապատ, Դոխս, Ալիբեկլու և այլն):

Ղամարլույի շրջանի հատկապես Ծորբուլաղի յենթաշրջանի գյուղերում:

Վեդու շրջանի մի քանի գյուղերում (Փ. Վեդի, Արարատ և սրանց կից գյուղերում):

Հոկտեմբերյան շրջանի համարյա բոլոր գյուղերում, յերբեմն այլ պոպուլյացիաների հետ խիստ խառը գրությամբ:

Սևանա լնի Գյունեյի յենթաշրջանում:

Բոլոր շրջաններում մշակվում են մոտավորապես 13000—14000 հեկտար:

Զի մշակվում խոհավ լեռնալին, սուր-ալպյան և անտառային շրջաններում:

Ենթեմիկ և հատկապես չոր նախալեռնային շրջանների համար Հարավային թեքություն ունեցող չոր կլիմայական նողային պայմաններում բարձրանում են մինչև 1950 մետր (Գյունեյի ափը):

Պոպուլյացիան ունի հետեւյալ կազմը (տես № 13 աղյուսակը):

№ 13 աղյուսակից նկատվում է, վոր պոպուլյացիան կազմված և պլիսավորապես փափուկ ցորենին պատկանող գրեկում (graecum) այլատեսակից, կազմելով 35-85% զրա հետ միասին կան նաև թե փափուկ և թե կունդիկ տեսակներից 20—22 այլատեսակներ: Գերիշխող այլատեսակին համարյա միշտ ուղեկցում են փափուկ տեսակից՝ երիտրապերմում, համադանիկում, Դելֆի, Հոստիանում այլատեսակները: Պոպուլյացիան տեղադրել կազմում են այլատեսակի սահմաններում համարյա «մաքուր» սորտ:

Պոպուլյացիան ունի հետեւյալ ագրոբիոլոգիական տոանձնահատկությունները:

Գերիշխում են գարնանացան սասա հանդիսացող ձեւերը, սակայն մշակության հիմնական շրջաններում ցանվում են վորպես աղնասացան կամ դոնդուրմա: Մի շաբթ դիտողություններից յելնելով կարելի յենթաղբել, վոր այս պոպուլյացիայում գտնվում են նաև (բավական մեծ տոկոսով) կիսաշնանացան և աշնանացան ձեւեր, վորոնք ընդհանուր առմամբ բարձրացնում են սրանց ծիլերի համեմատական ցրտադիմացկանությունը:

Ունի շատ լավ արտահայտված չորադիմացկություն: Իր այս հատկությամբ մնում են առաջմ չգերազանցված: Ծնորհիվ գրան սա մշակ-


Աղյուսակ - Տաճ. № 13

Հ Ր Ք Ա Խ Ն Ե Ւ Բ Ր Ա Յ Օ Հ Ա Յ	Տ Ի Մ Ա Կ Ա Կ Ո Ւ Բ Ո Ւ Բ Վ Ա Ր Ա Կ Ա Կ Ո Ւ Բ Ո Ւ Բ	Տ Ի Մ Ա Կ Ա Կ Ո Ւ Բ Ո Ւ Բ Վ Ա Ր Ա Կ Ա Կ Ո Ւ Բ Ո Ւ Բ	Տ Ի Մ Ա Կ Ա Կ Ո Ւ Բ Ո Ւ Բ		Տ Ի Մ Ա Կ Ա Կ Ո Ւ Բ Ո Ւ Բ		Տ Ի Մ Ա Կ Ա Կ Ո Ւ Բ Ո Ւ Բ		Տ Ի Մ Ա Կ Ա Կ Ո Ւ Բ Ո Ւ Բ		
			Տ Ի Մ Ա Կ Ա Կ Ո Ւ Բ Ո Ւ Բ	Տ Ի Մ Ա Կ Ա Կ Ո Ւ Բ Ո Ւ Բ	Տ Ի Մ Ա Կ Ա Կ Ո Ւ Բ Ո Ւ Բ	Տ Ի Մ Ա Կ Ա Կ Ո Ւ Բ Ո Ւ Բ	Տ Ի Մ Ա Կ Ա Կ Ո Ւ Բ Ո Ւ Բ	Տ Ի Մ Ա Կ Ա Կ Ո Ւ Բ Ո Ւ Բ	Տ Ի Մ Ա Կ Ա Կ Ո Ւ Բ Ո Ւ Բ		
Վաղպատ	Վաղպատ „Անաստացիա“	Վաղպատ „Անաստացիա“	65,8	28,0	0,8	—	—	—	0,6	4,0	0,8
	Քյոլանլու-Կելանլու	Քյոլանլու-Կելանլու	32,3	16,5	6,5	20,1	—	—	—	3,8	—
	Սամագար-Սամագար	Սամագար-Սամագար	39,0	21,2	—	30,5	—	—	—	5,3	—
	Մ. Զեյվա	Մ. Զեյվա	50,0	20,0	5,5	8,5	—	—	0,7	0,6	—
	Գեշերլու	Գեշերլու	23,3	16,5	—	—	—	—	16,7	10,0	—
Կոտայք	Գյանինի Գառնի	Գյանինի Գառնի	56,9	38,3	1,2	0,2	—	—	—	—	0,4
	Քանաքեռ Կանակը	Քանաքեռ Կանակը	74,6	6,0	1,0	5,5	—	—	0,7	2,0	—
	Արմամուս Արամուս	Արմամուս Արամուս	80,0	10,0	3,5	—	—	—	—	1,5	—
Անդրբակ	Արզի-Արզի	Արզի-Արզի	80,0	6,3	1,0	1,7	—	—	2,0	1,5	0,5
	Կարբի-Կարբի	Կարբի-Կարբի	80,0	15,0	1,0	2,0	—	—	—	—	—
	Մուղնի-Մուղնի	Մուղնի-Մուղնի	70,0	21,5	2,0	2,0	—	—	—	—	—
	Եղվարդ-Եղվարդ	Եղվարդ-Եղվարդ	75,9	21,3	0,4	2,1	—	—	—	0,3	—
	” ”	” ”	84,2	10,0	—	5,8	—	—	—	—	—
	Վահեվազ Վահեվազ	Վահեվազ Վահեվազ	66,6	23,8	3,8	—	—	—	—	1,7	—
	Պատրինչ Պատրինչ	Պատրինչ Պատրինչ	42,5	19,2	1,5	13,2	5,5	0,6	6,2	—	—
Մարտոն	Մալիշկա Մալիշկա	Մալիշկա Մալիշկա	76,9	19,6	0,8	—	—	—	—	2,2	—
	Օրդաքենդ Օրդաքենդ	Օրդաքենդ Օրդաքենդ	55,0	24,1	9,8	3,2	—	0,2	1,8	0,2	—
	Գետափի Գետափի	Գետափի Գետափի	66,7	14,5	5,8	2,0	—	—	—	4,0	0,3
	Խաչիկ Խաչիկ	Խաչիկ Խաչիկ	42,0	22,8	0,6	1,3	0,9	—	—	8,3	0,3
Ազնաբեկով	Ազատեկ Ազատեկ	Ազատեկ Ազատեկ	69,4	18,0	1,4	0,6	—	—	—	0,6	—
	Ազիզբեկով Ազիզբեկով	Ազիզբեկով Ազիզբեկով	80,3	13,8	0,8	—	—	—	—	—	—
Թալին	Վ. Թալին-Վ. Թալին	Վ. Թալին-Վ. Թալին	70,5	20,7	—	5,2	—	—	—	—	—
	Մաստարա Մաստարա	Մաստարա Մաստարա	64,7	16,2	1,5	10,7	2,0	—	0,5	1,5	—

у		н		р		в		и		мягкая пшеница		капитальный карликов	
и		к		и		и		и		разновидности			
/	/	/	/	/	/	/	/	/	/	turcicum Körn.	nigriar istatum Flaksb.	ferrugineum Al. Körn.	
0,8										—	—	—	
1,6										1,0	—	—	
5,0										2,1	—	—	
16,6										3,3	2,0	—	
1,0										5,0	—	—	
0,2										7,2	—	erythroleucon Körn.	
0,5										1,0	—	anglicum Mazz.	
4,3										1,0	—	pseudo-barbarea Vav.	
2,6										0,9	0,5	alborubrum Körn.	
1,0										1,5	—	barbarossa Al.	
18,0										2,0	—	sub-turcicum Vav.	
1,2										0,9	—	rubriceps Körn.	
2,1										1,2	—	pseudo-rubriceps Flaksb.	
0,3										0,6	—	erinaceum Desv.	
0,3										3,6	—	splendens Al.	
1,3										1,0	—	Secale cereale	

փում և գլխավորապես նախալեռնային չոր շրջաններում, ինչպես անջրդի, նույնպես և ջրովի պայմաններում:

Սնկային հիվանդությունների, հատկապես ժանդի նկատմամբ ունի միջակ, իսկ մրիկի նկատմամբ՝ թույլ իմունիտետ։ մրիկով վարակվում և հատկապես չոր աշնանային տարիներին։



Անջրդի պայմաններում ունի շատ լավ արտահայտված չխտիվելու հատկություն։ Վեգետացիոն շրջանի տեվողությունը միջակ և։

Լավ թփակալվող և։ Լավ թփակալվում և նաև հողային վոչ շատ նպաստավոր պայմաններում։

Չոր կլիմայական և չոր հողային պայմանների համար լավագույն բերքատու պոպուլյացիան ե։

Լավ վարակի հաց և ստացվում հատկապես անջրդի հողային պայմաններում, Հատիկն սպիտակ և, տոռող, ուղայանման կտրվածքով։

Հողային պայմանների նկատմամբ պահանջուտ չե, լավ արդյունք ստացվում և նույնիսկ չոր, քարքարոտ, խիճ հողերում։ Այս մի կողմից արդյունքն գերիշխող այլատեսակի չորադիմացկունության հատկության և մյուս կողմից բույսի արմատների յուրացման բարձր ընդունակության։ Այս պոպուլյացիան հայաստանի հնագուրց սորտերից ե։ Ունի լայն հեռանկար։ Խիստ արժեքավոր և սելեկցիայի համար։

Մոտավորապես նման պոպուլյացիա, բավականին մեծ տարածու-

թյուններով, մշակվում և Ավանիստանում 420—3200 մ., հիմնականում 1400—1900 մետր բարձրություն ունեցող շրջաններում և Թյուրքիայի մի շարք վիլայեթներում։ Փոքր տարածություններով իրանում, Բալկանյան թերակզբում, ԽՍՀՄ-ում—Սամարայամ, Ուրալում, Միջին Ասիայի հանրապետություններում և այլն։

5. ԳԱՐՍԴԸՆՔՆ, ԶԱՐԴԱ, ԳՅԱՐՄԻԱՆԻ

Այս անուններով պոպուլյացիան մշակվում է։
Հոկտեմբերյան շրջանի համարյա բոլոր գյուղերում։
Վաղարշապատի շրջանի գյուղերի մեծ մասում։



Վերու շրջանի բամբակացան գյուղերում (Գեղի, Խալիստ, Ավար, Ռեհանլու, Դավալու)։

Համարլույի շրջանի բամբակացան գյուղերում:
Զանգիբասարի համարյա բոլոր գյուղերում:
Միկոյանի շրջանի Արփա, Միկոյան գյուղերում:
Ազիգբեկովի առաջին զանայի գյուղերում (Փոռ):
Թալինի շրջանի Ղրմզու, Իրինդ, Մեհրաբլու, Առարակ, Վ. Թալին, Դադալի և Կից գյուղերում:
Աշտարակի շրջանի հարավ-արևմտյան մասի թալից, Շամիրամ և կից գյուղերում:

Բոլոր շրջաններում մշակում և մոտավորապես 6000—7000
հեկտար:

Ենդեմիկ և բամբակացան և մասամբ չըր նախալեռնային շրջանների համար: Ուղղահայաց գոտիով բարձրանում և մինչև 1500 մետր (Ազիգբեկովի շրջանի Փոռ գյուղը):

Պոպուլյացիան ունի բուսաբանական հետեվյալ կազմը (տես աղյուսակ № 14): Այս աղյուսակից գծվար չե նկատել վոր պոպուլյացիան կազմված և հիմնականում փափուկ ցորենին պատկանող համադանիկում և մնասպատամիկում (hamadanicum և mesopotamicum) այլատեսակներից, գրա հետ միասին կան նաև փափուկ և կունդիկ ցորեններին պատկանող 15—25 այլատեսակներ:

Գերիշխող համագանիկումը և յերթեն նաև մեսոպատամիկումը *) կազմում են պապուլյացիայի 40—75%-ը:

Գերիշխող այլատեսակներին համարյա միշտ ուղեկցում են փափուկ ցորենին պատկանող գրեկում, երիտրոսպերմում, Դելֆի, Կազվինի, Հոստիանում, մերիդիոնալի այլատեսակները, վերջինս հատկապես Հոկտեմբերյանի շրջանում:


Ուղղահայաց գոտիով բարձրանալիս պոպուլյացիայի մեջ խառնուրդ կազմող այլատեսակների թիվը աստիճանաբար պակասում և, ավելանում և աշորայի տոկոսը: Այս մասամբ պետք և բացատրվի խառնուրդ կազմող մի շարք այլատեսակների համար ձմեռելու պայմանների վատացմամբ:

Պոպուլյացիան հիմնականում ունի հետեվյալ ագրոբիոլոգիական տանձնատկությունները:

Աշնանացան ուսուայի, միջակ ցրտագիմացկունությամբ, ցանվում և միայն աշնանը, սորտի մեջ կան նաև գարնանացան և կիսաշնանացան ուսուահանդիսացող ձևեր:

Յերկար վեգետացիա ունի, չայաստանում մշակող մյուս պոպուլյացիաների համեմատությամբ ամենից ուշահան և: Չորադիմացկուն չե:

*) Մեր կարծիքով մեսոպատամիկում և համագանիկում այլատեսակները իւրեւի յե միենույն համարել:



Սնկային (ժանդ, մրիկ) հիվանդությունների նկատմամբ ընդհանուր առմամբ միջակ իմաւնիտես ունի (գեղին ժանդից՝ թույլ):

Ունի շատ լավ թփակալման հատկություն: Մրա ցանքերում միշտ կարելի յե պատահել 30—50 ցողուն ունեցող առանձին բույսերի:

Ընդհանրապես թափող չե: Հացի վարակը միջակ է: Հատիկների աբսոլուտ հշիուր հավասար և 35—40 գրամի: Հողի նկատմամբ պահանջնութ և, լավ արդյունք և տալիս ջրովի և փուխը հողերում:

Բամբակացան շրջաններում լավ բերքատու սորտ է: Այդ նույն շրջանների համար հեռանկարային է: Հայաստանի հնավուրց սորտերից մեկն է:

Մոտավորապես նման բաւսաբանական կազմ ունեցող ցորենի պոպուլյացիա մշակում և նախիչնանի ինքնավար Խ.Ս. հանբապետությունում, Իրանում, Թուրքիայում: Բացակայում և Վրաստանում, Ազգանստանում: Ազգանստանում մեսոպատամիկումը պատահում է 900—1400 մետր բարձրության սահմաններում, վորպես չնչին խառնուրդ, իսկ համագանիկումը բացակայում է (Կօբելեա):

6. ԳՅՈՒԼԳՅԱՆԻ

Այս պոպուլյացիան մշակում է:

Ստեփանավանի, Ալավերդու, Կալինինոյի, Իջևանի, Նոյեմբերյանի, Շամշադինի և Դիլիջանի շրջանների համարյա բոլոր գյուղերում:

Աղյուսակ — Տաճ. 14

С Р А Н Е Б Р Р А И О Н Ы	Shишк Виды	Ф и ш и н е										
		U.иJишк					U.иJишк					
		9.8019.6р	СЕЛА	hamadalicum Vav.	mesopotamicum Vav.	kazvinicum Vav.	graecum Körn.	erythrospermum Körn.	Delfi Körn.	turcicum Körn.	meridionale Körn.	ferrugineum Al.
Чеpк Веди	Чеpк Веди	69,4	5,2	0,5	2,5	5,5	2,2	1,3	4,5	0,7	5,0	0,6
	Ишишк Халиса	45,2	2,0	3,2	8,2	11,0	2,0	6,5	1,0	2,0	7,8	1,0
	И.дешк Авшар	44,0	1,5	8,5	3,5	10,0	2,5	21,0	—	4,0	4,5	—
	И.бенанлы	71,6	1,0	3,3	10,5	3,3	2,0	1,0	1,0	1,7	2,5	—
	Ишкшлт Давалу	40,0	14,6	5,3	4,7	6,9	0,8	4,2	0,2	1,0	7,0	1,0
Чашкшаш Багпат	Чашкшаш Алибеклы	34,0	5,0	—	23,4	15,0	13,4	—	1,0	—	5,0	—
	Чашкшаш Багпат	39,5	7,2	0,8	28,3	6,0	0,8	2,9	4,5	—	5,6	0,2
	Чашкшаш Багпат	80,0	3,3	2,0	8,0	2,0	3,0	—	1,2	—	6,5	—
Чапкшак Паракар	Чапкшак Паракар	63,0	3,0	—	15,0	8,5	2,0	1,2	2,3	0,2	4,8	—
	Чоршашаш Норапат	45,0	5,0	1,7	5,0	8,0	0,7	6,3	15,0	0,9	—	0,7
	Чапкшак Октемберян	70,8	10,0	1,0	4,3	5,0	0,9	0,4	8,0	—	4,3	—
Чашк Талин	Чашк Кирмэлы	42,2	3,7	—	10,2	65,6	—	—	—	—	0,1	—
	Чашк Иринд	50,5	15,1	1,0	15,0	10,3	1,2	—	—	—	—	—
	Чашк Мегрибан	14,3	38,7	—	19,2	13,3	0,8	—	0,4	—	2,8	—
Чашк Котайк	Чашк Арамус	38,0	8,0	1,5	17,5	14,4	2,5	—	—	—	3,0	—
	Фоп Пор	70,5	0,7	1,2	4,5	1,2	15,5	—	—	—	—	2,3

Կիրովսկանի ցածրադիր մասերի պյուղերում:

Գորիսի շրջանի բոլոր գյուղերում:

Նախանի շրջանի համարյա բոլոր գյուղերում (համեմատաբար ցածրադիր հողերում):

Միկոյանի շրջանի Ալայաղ և կից գյուղերում (անտառային մասում):

Մեղրու շրջանի ցածրադիր գյուղերում:

Բոլոր շրջաններում մոտավորապես 17500—18500 հեկտար



Վերոհիշյալից յերեվում և, վար այս պոպուլյացիան ենդեմիկ և հատկապես անտառային կամ կից շրջանների համար: Զի մշակվում լոչ արևմտյան և վոչ ել կենարոնական շրջաններում:

Պոպուլյացիան նշած շրջաններում ունի բուսաբանական հետեվյալ կազմը (տես № 15 աղյուսակը): Աղյուսակից յերեվում և, վոր սորտում գերիշտում և փափուկ ցորենին պատկանող երիտրոսպերմում (erythrospermum) այլատեսակը, կազմելով պոպուլյացիայի 50—90 տոկոսը, իսկ տեղատեղ մինչև 97—99 տոկոս, այսինքն՝ այլատեսակային սահմաններում համարյա ժմաքուրճ սորտ եւ ի տարբերություն մյուս պոպուլյացիաների՝ սա աչքի չի ընկնում այլատեսակների բազմազանությամբ: Կազմված և 2 այլատեսակներից (երիտրոսպերմում և շատամոլախոտային աշորայից (2—30%)): Իջեվանում ուղեկցում են լուտեսցենս, տեղատեղ նաև կարծըր ցորենից՝ պոպուլյատում այլատեսակները:

Պոպուլյացիան ունի հետեվյալ ագրոբիոլոգիական առանձնահատկությունները:

Աշնանացան սասա յեւ: Բավականաչափ լավ ձմռադիմացկուն եւ: Ունի թույլ արտահայտված չորադիմացկունություն: Ժանվի և մրիկի նկատմամբ իմունիտեսը միջակից ցածր եւ: Տոթից ուժեղ կերպով վրնասվում եւ: Թափվող չեւ: Տալիս է բավականին լավ վորակի հաց, հատիկների աբուլյուտ կշիռը 35—40 գրամ եւ:

Ծնորհիվ թույլ իմունիտեսի, տոթ քամիներից վնասվելու և վոշքաբեր ձմռադիմացկունության հատկությունների, այս պոպուլյացիան չի մշակվում նույն շրջանների բարձր լեռնային մասերում:

Նման պոպուլյացիա մշակվում և թե Աղբեղանում:

Խ. Միությունից դուրս՝ Ավդանստանում:

7. ԿԱՐՄՐԱՀԱՍԿ ԳՅՈՒԼԳՅՈՒՆԻ

Այս պոպուլյացիան մշակվում եւ:

Գորիսի շրջանի Յաջի, Տաթեվ, Սվարանց, Հալիձոր և կից գյուղերում:

Նախանի շրջանի Ն. Խոտանան, Տանձավեր, Դովրուզ, Շրվենանց, Լեռնաձոր, Աթեղ և մի քանի այլ գյուղերում և ընդհանրապես բոլոր լոյուղերի բարձրադիր հողամասերում:

Բոլոր շրջաններում մշակվում և մոտավորապես 3000-4000 հեկտար:

Ենդեմիկ և լեռնային չափավոր խոնավ շրջանների համար: Ուղահայաց գոտինով բարձրանում է մինչև 2000 մետր:

Պոպուլյացիան ունի բռնարանական հետեվյալ կազմը: Փերրուդինեյում (ferrugineum)-50—70%, երիտրոսպերմում 20—30% և աշորա 10—20%:

Աղյուսակ—Տաբլ. № 15

Շրջաններ Районы	Գյուղեր Села	Տեսակներ—Виды	Փափուկ ցորեն—Мягкая пшеница								Տերևի ցորեն Secale cereale	
		Այլատեսակներ—Разновидности										
		erythrosper- mum Körn. ferrugineum Al.	Delfi Körn. barbarossa Al.	Hostianu clem. albidum Al.	milturum Al. lutescens Al.	apulicum Körn.	Տերևի ցորեն Secale cereale					
Քոքիս	Քարահունջ	70,3	14,4	—	—	—	—	—	—	15,3		
Գորիս	Կարասար	79,1	7,7	—	—	—	—	—	—	13,2		
	Շինուայր	74,5	8,3	—	—	—	—	—	—	17,2		
	Խօսնավար	94,6	3,6	—	—	—	—	—	—	1,8		
	Խնձոր	78,8	2,2	—	—	—	1,0	—	—	20,0		
	Բայնդուր	84,4	8,5	—	—	—	—	—	—	6,1		
	Կարաշեն	99,3	—	—	—	—	—	—	—	0,7		
Ղափան	Սևակար	96,2	2,1	—	—	0,7	—	—	—	1,0		
	Եղագարդ	96,0	2,0	—	—	—	—	—	—	2,0		
	Եղանձուլ	82,7	11,0	—	—	—	—	—	—	6,3		
	Վ. Խոտան	93,8	4,3	—	—	0,4	—	—	—	1,5		
	Արձավանիկ	50,4	29,6	—	—	—	—	—	—	20,0		
Իջևան	Կեմանց	59,6	4,9	—	—	—	8,9	20,5	—	6,1		
Իջևան	Ուզուլիս	61,0	2,0	—	13,5	—	—	3,5	15,0	5,0		
	Սպիտեղ	68,0	3,0	—	2,0	—	2,3	10,7	7,0	7,0		
	Սևար	88,6	1,0	—	—	—	2,4	6,4	—	1,6		
	Առաջուր	64,0	24,5	—	—	—	1,4	4,4	—	5,7		
Ալավերդի	Տալա	83,9	0,4	—	—	—	—	—	—	15,7		
Ալավերդի	Ուզուլիս	89,0	0,5	—	—	0,1	—	3,6	5,8	—	1,0	
	Հաղպատ	94,2	0,8	—	—	—	—	—	—	5,0		
	Դսեհ	86,0	8,4	2,4	—	1,7	—	—	—	1,5		
Միկոյան	Ալայզ	—	—	—	—	—	—	—	—	—		
	Ալայզ	—	—	—	—	—	—	—	—	—		

Սորտում գերիշխող ֆերրուգինեյում այլատեսակին միշտ ուշ զեկցում ե երիտրոսպազմումը և դաշտամոլախոստային աշորան:

Պոպուլյացիան ունի հետեւյալ աղբորիթլոզիական առանձնահատկությունները:

Աշնանացան ե, „պյուլպյանուց“ ավելի լավ ձմեռադիմացկուն ե: Ժամանգի և մրիկի նկատմամբ ունեցած իմունիտետը միջակից բարձր ե: Տոթից շատ քիչ է տուժում: Թափվող չե: Հացի վորակը միջակ ե: Հատիկների արսովյուտ կշիռը 38-45 դրամ է, ապակենման կտրվածքով: Ծնորհիվ վերահիշյալ հատկանիշների, սա մշակվում ե բարձրադրիլ և համեմատաբար խոնավ մասսիվներում: Բերքատու սպրտ ե:

“Կարմրահասկ գյուլպյանին“ Հայաստանի հին սորտերից ե, իր բնույթով նման է պղերսիկումի տիպին:

Նման պոպուլյացիա մշակվում ե Ավղանստանի համարյա բոլոր վիլայեթներում: Բայց ինչպես Հայաստանում, նույնպես և այստեղ իր տարածությամբ ավելի քիչ ե, քան պյուլպյանին: Հավանական ե: Վոր մեծ տարածություններով մշակվում ե Իրանում:

Անատոլիայում համարյա չի մշակվում:

8. ԱԼՓԱՀԱՏ ԿԱՄ ԱԼՓԱՀԱՏ

Այս պոպուլյացիան մշակվում է միայն Սիսիանում իրենաշնացան, Ընդամենը 3800-4500 հեկտար: Ունի բուսարանական հետեւյալ կաղմբ-տես № 16 աղյուսակից.

Աղյուսակ—Տաբլ. № 16

Շրջան Район	Գյուղեր Села	Փափուկ ցորեն ¹⁾			Տերևի ցորեն Secale cereale	
		Բյուտեսակներ ²⁾	ferrugineum Al.	erythrospermum Körn.	barbarossa Al.	
Սիսիան	Շաքի	71,3	2,7	—	—	26,0
	Շաղաթ	29,9	63,9	—	—	6,2
	Մազրա	14,8	60,0	—	—	25,2
	Դարաբաս	70,4	3,4	—	—	26,2
	Շենաթեղ	74,4	3,3	—	—	22,3
	Վաղողիկ	68,0	3,3	0,3	—	28,4
	Սիսիան	27,7	5,0	0,3	—	17,0
	Աղյուսակի Ախենդ	61,6	11,0	—	—	27,4

Վերահիշյալ № 16 աղյուսակից յերեվում է, վոր պոպուլյացիայում, նաև վայրին, գերիշխում են վափուկ ցորենի ֆերրուգինեյում կամ երի-

¹⁾ Մայգա պշենից, ²⁾ բարձրադրիլ

տրոսպերմում այլատեսակները (*ferrugineum* & *erythrospermum*): Վորովինետե այդ յերկու այլատեսակներն իրենց բիոլոգիական և տնտեսական հատկանիշներով միմյանցից տարբերվում են, այդ իսկ պատճառով նպատակահարմար համարեցինք սրանց բաժանել յերկու ինքնուրույն պոպուլյացիաների՝ կարմրահամար սպահատ և սպիտակահամար պահատաւ: № 16 աղյուսակից յերեվում են նաև, վոր պոպուլյացիայի մեջ բացակայում են բազմազանությունը:

Սլպահատի ֆերրուգինեյում և երիտրոսպերմում այլատեսակները տարբերվում են գյուղանու մեջ դանվող նույն այլատեսակներից նրանով, վոր սրանց հասկի հասկիկային թեփուկների տատանածեվ սրվածքն յերկար ե (մոտավորապես հավասարե և քիստերի յերկարությանը), հասկիկային թեփուկներն ունին կաթնապակու հասուկ փայլ, աչքի յե ընկնում ավելի բարձր ցրտադիմացկունությամբ և չորադիմացկունությամբ: Ահա մոտավորապես այն մորֆոլոգիական բիոլոգիական առանձնահատկությունները, վորոնցով այս պոպուլյացիան իր գերիշխող այլատեսակներով տարբերվում ե գյուղյանի պոպուլյացիաներից: Բարձր բերքատու և հեռանկարային սորտ ե:

Հատկապես կարմրահասկ սլպահատի մեջ գերիշխող ֆերրուգինեում այլատեսակն արժանի յե հատուկ ուշագրության, վորպես սելեկցիայի յելանյութ: Այս պոպուլյացիան Դուզքենքի շրջանում նույնապես տալիս ե բարձր բերք:

9. ԿԱՐՄԻՐ ՑՈՐԵՆ

Այս պոպուլյացիան մշակվում է Մեղրու շրջանի բարձրադիմ գյուղերում (Կալեր, Տաշտուն և կից գյուղերը): Պոպուլյացիան կազմված է ցորենի միայն մեկ այլատեսակից՝ ֆերրուգինեումի աշնանացան ուսայից և դաշտամոլախոտային աշորայից, վորը հաճախ բավական մեծ տոկոս է կազմում: Սորտը Մեղրու շրջանի Տաշտուն և Կալեր գյուղերում ունի բուսաբանական հետեվյալ մոտավոր կազմը՝ ֆերրուգինեում՝ 74,5%, երիտրոսպերմում՝ 3,5% և աշորա՝ 22%:

Այս պոպուլյացիան տարբերվում է կարմրահասկ գյուղյանուց և կարմրահասկ սլպահատից իր լավագույն ձմեռագիմացկունությամբ, համեմատաբար լավ չորադիմացկունությամբ և մրիկադիմացկունությամբ, դիմանում ենաւ տոթին: Հասկերի հասկիկային թեփուկների կիլային սրվածքը սլպահատի նման նույնապես յերկար ե, հաճախ իսկական քիստին հավասար, հասկն ունի յուրահատուկ փայլ, հատիկները խոշոր են (արսույուտ կշիռը հավասար է 45—52 դրամի), մուգ կարմիր գույնով, ապակենման կտրվածքով:

^{*)} 1938 թ. Գոստորտ կամիսիայի Դուզքենքի փորձագաշտի տվյալներով:

Պոպուլյացիան մշակվում է 2200—2400 մետր բարձրություն ունեցող մասսիվներում և նման պայմաններում տալիս է բարձր բերք: Հեռանկարային սորտ ե:

Այս պոպուլյացիան Ախտայի, Բայազետի և Մարտունու շրջաններում մեր կատարած փորձերում սելեկցիոն սորտ Շուկրայինկայի համեմատությամբ տվեց 25 և ավելի $\frac{1}{2}$ -ով բարձր բերք: Այս պոպուլյացիան Տաշտուն և Կալեր գյուղերում չնայած ունեն միանման բուսաբանական կազմ, այնուամենայնիվ մեր փորձերում (Ախտա, Բայազետ և այլն) նրանք իրենց ագրոբիոլոգիական վորոշ հատկություններով տարբերվեցին միմյանցից:

Այս պոպուլյացիայում գերիշխող ֆերրուգինեումը խիստ հետաքրքրական է սելեկցիայի համար, վորպես յելանյութ^{*)}:

10. ԱԼԹԻԱՂԱՋ

Պոպուլյացիան այս անունով մշակվում է՝ Կարմիրի և Շամշադինի շրջանների համարյա բուլոր գյուղերում, (չեմշակվում Կարմիրի շրջանի ծովափեյա գյուղերում):

Դիլիջանի շրջանի Զարխեց և կից գյուղերում, Իջևանի Աչաջուր և կից գյուղերում: Բալոր շրջաններում մըմշակվում ե մոտավորապես 8000—9000 հեկտար:

Բացի վերոհիշյալ վայրերից ուրիշ տեղ առաջմ չեմ մշակվում: Ենդեմիկ և անտառային և կից լեռնային խոնագ շրջանների համար: Պոպուլյացիան ունի բուսաբանական հետեվյալ կազմը (տես № 17 աղյուսակը):

Աղյուսակ—Տաbl. № 17

Երշաններ районы	Գյուղեր села	Փափուկ ցորեն՝ Այլատեսակներ՝			Secale cereale L.
		ferrugineum Al.	erythrospermum Körn.		
Կարմիր գյուղի	Թթու ջուր Տուդյուր . . .	68,3	10,2	21,5	
	Կարմիր գյուղի Կրասնոսելսկ	78,2	2,9	18,9	
Կրասնոսելսկի թեփիձե . . .	Օրդյոնիկիձե Օրդյոնիկիձե . .	77,5	7,7	14,8	
	Ջարխեց Ջարխեց . . .	50,6	41,8	7,6	
Շամշադին	Շամախյան Շամախյան . . .	77,9	15,6	7,4	
	Բերդ Բերդ	65,0	26,0	9,0	
Շամշադին	Կուլալի Կուլալի . . .	60,0	30,0	10,0	
	Վ. Կ. Կարմիր Կարմիրգյուր Վ.	70,0	20,0	10,0	

^{*)} Մենք այս պոպուլյացիայից առանձնացրել ենք մի շարք զգեր, վորոնք ներկայումս փորձվում են գումարտակ կոմիսիայի փորձագաշտերում:

(1) Մյաց պինից (2) բարձրագաշտական կազմ

Ինչպես յերեվում ե № 17 աղյուսակից, սորտն այլատեսակային բազմազանություն չունի: Գերիշխում ե ֆերրուգինեում այլատեսակը: Սորտում բավականին մեծ տոկոս ե կազմում դաշտամոլախոտային աշտրան: Գերիշխող ֆերրուգինեումը աշնանացան ե, ունի լավ ձմեռադիմացկունություն (ձյան հաստ շերտի պայմաններում), ցըրտադիմացկունությունը միջակ ե: Համեմատաբար խոնավասեր ե: Մրիկով ավելի ուժեղ ե վարակվում, քան թե «կարմրահասկ գյուղյանի» կամ «կարմիր ցորեն» պապուլյացիաներում դանիվող ֆերրուգինեումը: Հասկիկային թեփուկի կիլը վերջանում է կարճ՝ 2-8 մ.մ. սրածայր ատամիկով: Հատիկը կարմիր ե, վոչ լրիվ ապակենման կտրվածքով, վորի հետեվանքով մի մասն ունի բաց կարմրավուն, իսկ մյուս մասը մուգ կարմրավուն տեսք: Հատիկն արտաքին տեսքով վորոշ չափով նմանվում ե «ուկրաինկա»-ի հատիկին, հատիկի արտոլյուտ կշիռը հավասար ե 35-40 դրամի: Մնացած հատկանիշներով նման ե կարմրահասկ գյուղյանուն:

Նշված շրջաններում բարձր բերքատու սորտ և Այս պոպուլյա-
ցիան Հայաստան և բերված Աղրբեջանից, Շամշադինի և Կարմիրի
շրջաններին կից աղբբեջանական գյուղերից:

Անտառային խոնավ և կից շրջանների համար հեռանկարային
սորտ ե:

11. ԳՈՄԲՈՐԿԱ, ԶՓԼԱԴ, ՏՈՒԿԼՈՒԶ

Այս պատուի լազիան մշակվում են

Ալավերդու շրջանի Շնող և կից գյուղերում:

Նոյեմբերյանի շրջանի համարյա բոլոր գյուղերում

Իջևանի շրջանի համարյա բոլոր գյուղերում (Թալա, Քրդեվան, Աչաղուր, Սոփ, Սեղմար, Գետաշեն, Խելազլու, Ուզունթալա, Կոթի, Դոստի) և սրանց կից գյուղերում):

Շամշադինի շրջանի մի քանի պյուղերում (Ն. Կարմիր աղբյուր, Զինար, Զենչին, Հախում և այլն): ընդամենը մոտավորապես 2000—3000 հեկտար:

Ենդեմիկ և Հայաստանի հյուսվային մասում ընկած անտառաշին վոչ բարձրագիր լըջանների համար:

Պոպուլյացիայի բուսաբանական կազմի ուսումնասիրությունը
տվեց հետեւյալ պատկերը.

Городской районы	села	Фауна и геопарк Мягк. пшеницы			
		Jutescens Al.	milturum Al.	erythrosper- mum Körn.	ferrugine- ум Al.
Ноемберян	Կոթի	67,8	14,8	17,4	—
Ноемберян	Կալача	76,8	10,7	11,5	1,0
Иджеван	Լալի	45,2	18,5	33,4	2,9
Иджеван	Ջոգազ	52,2	10,8	36,0	1,0
	Իջևան	80,0	13,8	3,0	3,2
	Սովորուց Сри гех	43,0	18,6	35,0	3,4

Մոտավորապես նման պատկեր ունի Ալավերդու և Շամշադինին
զբաններում: 69



Շրջաններ Районы	Գյուղեր Села	Փափուկ ցորեն Մягкая Ալյատեսակները Բազմազանություն								Secale cereale
		barbarossa Al.	pseudo bar- rossaVav.	ferrugineum Al.	meridionale Körn.	erythrosperm- um Körn.	graeicum Körn.	Hostianum Clem.	Delfi Körn.	
Հոկտեմբերյան . . .	Գեչըլու Գեռլու	60,0	—	19,7	2,8	—	—	2,6	—	14,9
Օկտեմբերյան	Այշր Այր . . .	—	50,0	25,0	—	12,0	6,2	2,2	2,2	2,6
Միկոյան	Գորադիս Գորադիս	11,5	50,1	35,6	—	—	6,6	—	—	2,2
Ազիզիկով										

Բուսաբանական անալիզի այս մի քանի տվյալներից յերեվում են, վոր պոպուլյացիայի մեջ գերիշխում են փափուկ ցորենի բարբարոսա կամ պսեֆուրաբարբարոսա այլատեսակները, վորոնք կազմում են 50—60 տոկոս:

Պոպուլյացիան ունի ագրոբիոլոգիական հետեվյալ հատկությունները: Անձնանացան ուսաս յե: Ունի բարձր բերբարություն: Ցրտադիմացկուն ե, տոթից քիչ ե տուժում, համեմատաբար չորագիմացկուն ե, պառկող չե, սնկային հիվանդությունների նկատմամբ ունի միջակ իմունիտետ (մրիկին լավ դիմացկուն ե), թափվող չե, դժվար կալսվող ե, ցողունը և հասկերը ճիշ են, կոտրվող չեն: Հացի վորակը լավ ե:

Հայաստան ե բերված, ինչպես անունն ե ցուլց տալիս, Դարձրագից, հավանական ե 1890-ական թվականներին: Մեծ տարածություններում մշակվում ե ինքնավար Լեռնային Հարաբարդում:

Միջին Ասիայում, Ավգանստանում, ինչպես և Թյուրքիայում (Անատոլիայում) նման պոպուլյացիաներ չեն նկարագրված, բայց գերիշխող բարբարոսան այդ նույն յերկրներում վորոշ տոկոսներով գտնվում ե այլ սոբառերի մեջ:

13. ԽՐԱՆԻ ԿԱՐՄԻՐ ՑՈՒՅՆ

Այս պոպուլյացիան մշակվում ե միայն Վեդու շրջանի բամբակացան՝ հատկապես ագրբեջանական աղբաբնակչություն ունեցող գյուղերում, (Փ. Վեդի, Շիրազլար, Զիլար, Կարարար) ընդամենը 600—700 հեկտար տարածությամբ: Ուրիշ շրջաններում մենք չենք պատահեր:

Վերոհիշյալ շրջանում Բրանի կարմիր ցորենն ունի բուսաբանական հետեվյալ կազմը (տես № 20 աղյուսակը):

Ինչպես յերեվում ե բուսաբանական անալիզից, սորտի մեջ գերիշխում ե փափուկ ցորենի լուտեսցենս (lutescens) այլատեսակը, կազմելով 43—80%: Այս սորտում միշտ գտնվում են միլտուրում և երիտրոստատիկ այլատեսակները:

Պոպուլյացիան ունի հետեվյալ ագրոբիոլոգիական հատկությունները:

Փարնանացան ուսաս յե, ցանվում ե թե գարնանը և թե աշնանը: Համեմատաբար վաղահաս ե: Ունի լավ կանգուն և յերկար ցուղուն, չի պատկում նույնիսկ խիստ անձրեվներից և քամիներից:

Սնկային հիվանդությունների նկատմամբ ունի միջակ իմունիտետ: Բավականին ուժեղ շափով վարակվում ե մրիկով:

Տոթից քիչ ե տուժում, ունի թույլ ձեվով արահայտված թափվելու հատկություն: Հացի վորակը լավ ե: Բերքատու սորտ ե:

Արժանի յե ուշադրության հատկապես ցողունի կանգունության ու բարձրության տեսակետից:

Այս պոպուլյացիան հայաստանի համար նոր ե, բերվել ե ըստ յերկույթին 1900-ական թվականներից հետո: Հստ պրոֆ. Ա. Թումանյանի, բերված ե վրացական Գոմբոր գյուղից, վորից և ստացել ե իր անունը՝ Գոմբորկա:

Նման պոպուլյացիա մշակվում ե արևմտյան Վրաստանում, Աղբքեշանում թիստ պատահական ե:

«Պոլտավկա», «Ռելկա», «Բելոկուսկա» և այլ անուններով մեծ տարածություններով մշակվում ե Ուկրաինայում:

12. ՂԱՐԱՂԾԼՉՐԴԻ-ԳՅՈՒՒՄՈՐ ԿՈՄ ՂԱՐՄԱԲՈՂԻ

Այս պոպուլյացիան քիչ (400—500 հեկտ.) տարածությամբ մշակվում ե Միջինականի և Աղիկուկովի շրջանների Այր, Աղքենդ, Հորս, Գորադիս և կից գյուղերում, նաև մի քանի հեկտար տարածությամբ Հոկտեմբերյան շրջանի Գեչըլու գյուղում:

Պոպուլյացիան իր տարածման շրջաններով այնքան սահմանափակ ե, վոր դժվար ե ասել, թե վմբն ե սրա ենդեմիկ շրջանը և ուղղահայց գոտիով վորքան կարող ե բարձրանալ:

Սորտի բուսաբանական կազմն ունի հետեվյալ պատկերը:

Степень видов	Формы и виды мягкой пшеницы	Удельная разновидность		pseudorubriceps Flakkeb.
		Сева	Барбаросса Al.	
Город	Ширазлы	44,5	7,9	9,0
Район	Чхлар	36,4	1,5	5,4
Всё	Караалар	36,2	0,5	2,2
	turicum Korn.		8,0	17,0
	barbarossa Al.		—	—
	graeicum Korn.		—	—
	erythrospermum Korn.		—	—
	Hostianum Clem.		—	—
	hemadaemicum Vav.		—	—
	Kazviniicum Vav.		—	—
	mesopotamicum Vav.		—	—
	ferrugineum Al.		—	—
	meridionale Korn.		—	—
	Delit Korn.		—	—
	lutescens Al.		—	—
	alborebum Korn.		—	—
	fuliginosum Al.		—	—
	(renosatum Flakse.)		—	—
	rubriceps Korn.		—	—
	pseudorubriceps Flakkeb.		—	—

1) Карликовая пшеница

№ 20 в таблице 20 в
включены виды мягкой пшеницы из группы (turgescens) армянских
и грузинских сортов, что включает в себя виды 15—17
и 46—56%.

Помимо видов мягкой пшеницы из группы (turgescens)
в таблице 20 включены виды мягкой пшеницы из группы (alborebum),
которые включают в себя виды 18—20 и 47—50%.

«Несмотря на то что в таблице 20 в
включены виды мягкой пшеницы из группы (alborebum),

также в таблице 20 в
включены виды мягкой пшеницы из группы (ferrugineum),
которые включают в себя виды 18—20 и 47—50%.

Из таблицы 20 в
выводы о том, что


ԿՈՒՆԴԻԿ ՏԵՍԱԿԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՄՈՐՏԵՐ

14. ՍՊԻՏԱԿ ԿԱՄՉԱՏԿԱ ԿԱՐ ԹՈՓԲԱՇ

Վերսիշալ անուններով կոչվում են ցորենի այն պոպուլյացիա-ները, վերոնց կազմում գերիշխում են կունդիկ ցորենի ոռորիցեալս կամ ֆետիսովի (Fetisiceps և Fetisowii) այլատեսակները: Վորովնետե այս այլատեսակներն իրենց մորֆոլոգիական և մի քանի բիոլոգիական հատկանիշներով իրարից խիստ կերպով տարբերվում են, այդ իսկ պատճառով գործնական և սելեկցիոն հետագա աշխատանքներում պարզություն մտցնելու նպատակով սորտը բաժանեցինք յերկու խմբի:

ա) Պոպուլյացիա, վորի մեջ գերիշխում եռութիցեալս այլատեսակը:

բ) Պոպուլյացիա, վորի մեջ գերիշխում եռ Ֆետիսովի այլատեսակը:



ա) Պոպուլյացիա, վորի մեջ գերիշխում եռութիցեալս այլատեսակը:
Այս պոպուլյացիան մշակվում եռ՝ կոտայքի շրջանի համարյա բոլոր գյուղերում, (գլխավորապես միջին գոնայում); բացառությամբ բարձր լեռնային՝ Քյանքյան, Դաւաքլու և կից գյուղերի:

Թալինի շրջանի հարավ-արևելյան մասում գտնվող գյուղերում (Մեհրիբան, Բաշսուղ, Վ., Թալին, Ն. Աղջաղալա և կից գյուղերում):


Աշտարակի շրջանի Դարաջորան և կից գյուղերում:

Վաղարշապատի շրջանի Խըզնավուղ գյուղում:

Հոկտեմբերյանի Գեշըլու գյուղում:

Ղամարլուի շրջանի հյուսիսարևմտյան մասում՝ Նորաշենի յենթաշրջանում: Ղարաբաղլարի շրջանի Շաղափ, Խալիսա և կից գյուղերում:

Ախտայի շրջանի ջրաղացների յենթաշընանի գետափնյա գյուղերում:



Բոլոր շրջաններում մշակվում եռ մոտավորապես 4200—4700 հեկտ.: Զի մշակվում լեռնային, սուրալպյան և մատառային զոնաներում գտնվող շրջաններում:

Ենդեմիկ եռախալեռնային զոնաների համար: Ուզգահայց գոտիով բարձրանում եռ մինչև 1100—1700 մետր բարձրության:

Պոպուլյացիան ունի բուսաբանական հետեվյալ կազմը (տես № 21 աղյուսակը): Աղյուսակից յերեքում եռ, վոր սորտի մեջ գերիշխում եռ ցորենի կունդիկ ախատկին պատկանող ոռորիցեալս կամ պսեփոռութիցեալս այլատեսակները, կազմելով սորտի 50—80%:

Село		Мягкая пшеница									
Город	Панохи	У	Л	М	К	Н	К	Р	П	З	Н
Камару	Городской	62,5	7,9	12,2	—	0,4	1,2	—	5,5	6,0	—
Балаклава-	Городской	29,1	45,4	—	—	—	—	—	12,6	7,5	5,4
Октябрьск	Балаклава-	46,4	42,9	3,2	13,1	—	1,7	—	2,1	0,6	—
Котайк	Балаклава-	77,6	5,7	1,2	11,5	—	—	—	1,0	1,0	—
Телави	Балаклава-	1,0	—	75,2	—	—	—	—	0,2	1,0	8,6
Микоян	Айназур	—	1,5	60,4	3,8	—	—	—	2,5	8,5	7,8
Республика	Арпа	—	—	—	—	—	—	—	8,5	—	—
Талл	В. Галин	17,0	69,1	—	—	—	—	—	1,8	—	0,8
	Метабиян	10,0	73,5	—	—	—	—	—	—	—	3,5

Են փափուկ ցոլենի համարյա միշտ սւղեկցում են բարձրից պահանջման առանձնահատությունները:

Պոպուլյացիան ունի հետևյալ ագրոսերվածքի առանձնահատությունները:

Գարնանացան ուստա յե, սակայն մշակվող շրջաններում ամենանը, կամ վորպես աշնանացան, կամ վորպես դոնդուրմա:

Միջակ լոնավակար ե. չորադիմացկանության հատկությունները և պիտիականատ և զալգալոս սորտերին:

Կազետացիայի տևողությամբ նման և գալգալուսինի կամ անդուրմական առանձնությունները:

Անկային հիվանդությունների նկատմամբ ունի միջամական առանձնությունները:

Ունի թափվելու հատկություն (վոչ շատ ուժեղ): Այդ և պատճեն, վոր սրա բերքահավաքը կատարվում և վոչ լրիկ հասունացման ժամանակի:

Հացի վորակը լավ է, համեկները դեղնավուն, կլորավուն են. արսուլյան կշիռը հավասար է 33-37 դրամի:

Հողի նկատմամբ, համեմատած նույն շրջաններում մշակվող սպիտակահատ սորտի հետ պահանջկուտ է, իսկ զալգալոսի վճէ 37 համեմատությունն ի նկատի ունենալով կարելի յե ասել, վոր սա սիի միջամանջկուտ է:

Հացած շրջաններում բավականաշափ բարձր բերքատու սորտ ուժեղ կամ այլ մշակված կամ անդուրմական առանձնությունը հայտնաբերություն է այլ ամառանական առանձնությունը:

Առատավորապես նման պոպուլյացիա, բավական մեծ տարածություններու մշակվում է թյուրքիայի արևելյան վիլայեթներից, (հավանական և 1880 թվականներին), ուր վոր մշակությունը բավական շատ և տարածված:

Մատավորապես նման պոպուլյացիա, բավական մեծ տարածություններու մշակվում է թյուրքիայի արևելյան վիլայեթներում: Մշակվում է (քիչ չափերով) Նախիջևանի ինքնավար հանրապետությունություններու մեջ:

Պոպուլյացիա, վորի մեջ գերիշխում և ֆետիսովի այլատեսակը

Պոպուլյացիան մշակվում է Միկոյանի շրջանի Այնակուր, Արփա և կից դյուղերում 300-350 հեկտ. տարածությամբ: Այն, ինչ ասկեց ուռըրիցեպսի հատկությունների մասին, վերաբերում է մասսամբ նաև սրան: Պոպուլյացիան ունի հետևյալ հատկանիշները:

Դարնանացան ուստա յե, ցանվում և աշնանը: Թափվող չե, ցուղունը կանգուն է, սակային հիվանդությունների նկատմամբ ունի, միջակից բարձր իմունիտետ: Ավելի չորադիմացկուն է, քան թե ուռըրիցեպս:

Հավ բերքատու սորտ ե: Արժանիյե ուշադրության:

Բուտաբանական կազմի հետազոտությունները (աղյուսակ № 21) ցույց տվին, վորպոպուլյացիայում համարյա բացակայում են սուբրիցեպտ և պսեվգո-ռուբրիցեպտ այլատեսակները:

Մեր կարծիքով՝ այս յելկու սորտերն իրենց ծագումով ներյնպես տարբեր են: Առաջինը Հայաստան ե բերվել Թյուրքիայից (Անատոլիայի արևելյան մասից):

15. ԿՈՒՆԴԻԿ, ԿԱՐՄԻՐ ԿՈՒՆԴԻԿ, ԿԱՐՄԻՐ ԿԱՄՉԱՏԿԱ, ԹՈՓ-ԲԱՇ

Պոպուլյացիան վերոհիշյալ անուններով մշակվում են

Ախտայի ըրջանի Փանտան, Ն. Ախտա, Ախովարա, Ծաղկաձոր, Ռինդամալ, Քարվանսարա և կից գյուղերում:

Սեփանի շրջանի Յելենովկա և մի քանի այլ գյուղերում, համեմատաբար փոքր տարածություններում:

Ն. Բայազետի շրջանի Նորագուղ, Ղըշլաղ, Ղուլալի, Փաշաքյանդ
և կից գյուղերում:

Բասարգեշարի շրջանի Շիշկայա, Մ. Մազլա, Ղոխուլաղ, Դաշըյանդ, Գյուղակըռուլաղ և կից գյուղերում:

Մարտունու շրջանի մի շարք գյուղերում:

Աբարանի շրջանի Ավագագեղ, Ղազնաքար, Ալիքուչակ, Հայի-խառնությունը և կից գլուղերում:

Արքիկի և Ազինի շրջանների Մարտիկ, Աղին, Հոռոմ, Զորակալ, Յեղանակար, և կազմակերպում:

Սիսիանի՝ Բագարչայի յենթաշըջանի դյուղերում:

Կոտայքի՝ Աղմաղանի փեշերին գտնվող զյուղերում:

Կունդիկի մշակությունը բացակայում է Հայաստանի դաշտային բամբակացան), Նախալեռնային, հարավային և հյուսիսային շրջաններում: Բոլոր շրջաններում մշակվում է մոտավորապես 7000—8500 հեկտար:

Ենդեմիկ է միջակ խոնավություն ունեցող լեռնային (վոչ անտառային) շրջանների համար:

Ուղանայաց գոտիով բարձրանում ե մինչև 2300 մետր (հիմնա-
ան՝ 1600—2200):

Պոպուլյացիան ունի բուսաբանական հետեվյալ կազմը (տես № 22 պղյուսակ): Աղջուսակից նկատվում ե, վոր պոպուլյացիայում գերիշում ե կունդիկ ցորենի երինացեռում (erinaceum) այլատեսաշը. դրա հետ միասին կան փափուկ և պերսիկում ցորենների 15—18 պյալատեսակներ:

В.П.ПУСАЛ - Таблица № 22

1) Карликовая пшеница, 2) мягкая пшеница, 3) персикум.

Երինացեռում այլատեսակը բավական մեծ տոկոս է կազմում (18-38) "կարմրահատ" պոպուլյացիաներում:

Կունդիկ սորտում գերիշխող երինացեյումին համարյա միջաւ ուղեկցում են դարնանացան ֆերրութինեյում, երիտրոստերմում, վորոշ տեղերում դելֆի և ոռուրիզինոզում այլատեսակները:

Պոպուլյացիան ունի հետեւյալ ագրորիոլոգիական առանձնահատ կությունները:



Գարնանացան ուստա յեւ հազվագետ ցանվում եւ վորպես դռնդուրմա (Բասարքնչարի Դաշրյանդ գյուղում): Նշված շրջաններում բարձր բերքատու սորտ եւ:

Մյուս բոլոր պոպուլյացիաների հետ համեմատած վաղահաս և (հետ և մուտ կարմրահատ դալբ-բուղդա սորտից):


Լեռնային շրջաններում ցանվող "կարմրահատ" փ հետ համեմա-

տած չորագիմացկուն եւ: Ընդհանրապես, իր այդ հատկանիշով յերբորդ տեղն եւ բոնում (սպիտակահատ, գալուալոս, կունդիկ):

Սնկային հիվանդությունների (ժանդ, մրիկ) նկատմամբ միջակիմունիտեստ ունի: Ավելի քիչ եւ վարակվում, քան թե "կարմրահատը":

Վաղահասության և բիոլոգիական այլ հատկությունների շնորհիվ տոթից քիչ եւ տուժում: Վաղահասությունն այս հարցում շատ կարենը եւ, վորովհետեւ տաք քամիների ժամանակ բույսը հասունացման մոմային ֆազից անցած կամ անցման շրջանումն եւ լինում:

Կունդիկի այս կարեվոր հատկանիշը վերին աստիճանի գնահա-



աելի յեւ լեռնային պայմաններում, վորտեղ տոթից մի քանի ժամվա ընթացքում վոչնչանում են տասնյակ հազարավոր ցենտներ հատիկ: Դնահատելի յեւ նաև սելեկցիայի համար:

Ընդհանուր առմամբ թափվող չեւ, սակայն չոր պայմաններում բերքահավաքն ուշացնելու դեպքում հասկը հիմքից (ցողունի ծայրից, կոտրվում և ամբողջությամբ ընկնում եւ (քիչ % ով):

Տալիս եւ լավ վորակի հաց, բարձր սպիտակուցային տոկոսով (15 տոկ.), հատիկների արտայուս կշիռը 27-30 դրամ եւ, մուգ կարմիր դույնով, կլորավուն ձևով: Հողի նկատմամբ համեմատաբար պահանջնուու եւ: Մշակվում եւ գլխավորապես անջրդի պայմաններում: Հայաստանում բերքատու և հեռանկարային սորտ եւ:

Կունդիկը կամ թոփ-բաշը կամ կարմիր կամչատկան հայաստանում նոր սորտ է, բերված է 1870—85-ական թվականներից հետո (Դարսը ուստական միապետության կողմից զբավկելուց հետո), հատկապես կունիստ մալականների միջոցով (Մ. Թումանյան):

Մոտավորապես նման կազմ ունեցող պոպուլյացիա մեծ տարածություններով մշակվում է Անտոլիայի (Թյուրքիայի) արևելյան վիլայեթներում (Դարս), Ավգանստանում, հատկապես Հերատի վիլայեթում, Հյուսիսային Ամերիկայում՝ հատկապես Կալիֆորնիայում և միքանի շտատներում (Վաշինգտոն, Արիզոն և այլն):

Վրաստանում և Աղբքեջանում կարելի յե պատահել միայն հայկական սահմանին կից շրջանների լեռնային մասերում, այն ել մեծ մասամբ տեղական այլ պոպուլյացիաների հետ խառը:

ԿԱՐԾՈՒՄ ՏԵՍԱԿԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՍՈՐՏԵՐ

16. Դ Ե Պ Ն Ա Զ Ա Բ Դ Ա.

Մշակվում է Խնձօնի, Նոյեմբերյանի և Շամեադինի շրջանների միքանի գյուղերում (Սոի, Սեքար, Կոթի, Գետաշեն, Կողը, Պոավաքար, Զինարի և աննշան չափերով սրանց կից մի քանի գյուղերում: Հնդամենը մշակվում է մոտովրապես 1000—1200 հեկտար:

Պոպուլյացիան վերոհիշյալ շրջաններում ունի բուսաբանական հետեւյալ կազմը:—

Աղյուսակ—Տաблиցա № 23

Շրջաններ Районы	Տեղակներ Виды	Գյուղեր Села	Կարծը ցորեն 1)				Փափուկ ցորեն 2)				Անդամ ցորեն 3)		
			Ա.	յ	լ	ա	ս	ի	ո	ա	կ		
Նոյեմբերյան	Կոթի	Ճողով	83,7	5,0	1,6	—	2,5	1,1	2,5	1,0	0,8	0,5	1,3
Հօմբերյան	Սոի Սրի . .	Ճողով	80,0	2,9	0,5	5,5	1,8	2,6	2,5	0,8	0,5	0,4	2,5
	Գետաշեն	Ճողով	80,0	0,8	1,2	2,0	9,0	2,0	1,5	1,0	—	0,3	2,2
Իջևան	Ջողազ	Ճողով	50,0	0,4	0,2	5,0	30,0	2,3	10,0	0,0	—	—	1,7
Իջևան	Ջողազ	Ճողով	50,0	0,4	0,2	5,0	30,0	2,3	10,0	0,0	—	—	1,7

1) Տարածական, 2) մայուսական, 3) անգլիական, 4) բարձրականություններում

Վերոհիշյալ անալիզից յերեսում է, վոր զարդար կամ գեղնազարդար կոչվող պոպուլյացիայում գերիշխում է կարծը ցորենին պատկանող ապուլիկում (apulicum) այլատեսակը:

Պոպուլյացիան ունի հետեւյալ ագրոմիոլոգիական առանձնահատկությունները:

Ցանքում է աշնանը: իր ցրտադիմացկանության հատկությամբ ավելի թույլ է, քան թե նույն շրջանում մշակվող պոպուլյացիանեն:

Ունի բավականին լավ չորադիմացկանություն: Տոթից չի վնասվում: Վեգետացիոն շրջանը մոտավորապես նույնն է, ինչ տեղական երիտրոսպերմումինը (պոպուլյացիա): Անկային հիվանդությունների նկատմամբ ունի իմունիտետ: Հացի վարակը լավ է: Լավ բերքատու սորտ է:

Դեղնազարդան հայաստան է բերված Աղբքեջանից՝ Կազախի և կից շրջաններից, ուր սրա մշակությունը բավականաչափ շատ է տարածված սարիբուղուածական գաղաքանության վրանի հարանայի յենթաշրջանում: Ընդամենը 400—600 հեկտ.:

Թավթութիւն հայաստան է բերված Վրաստանի Բորչալուի շրջանից, ուր սրա մայուսական շատ է մշակվում „թերթի-թավթութիւնի“ անվան տակ:

Թավթութիւնի ձոճկանում և նրա շրջակա գյուղերում ունի բուսաբանական հետեւյալ կազմը:

Tr. durum Dest. var. leucurum Körn. 50 տոկ.

» » » melanopus Körn. 10 »

» » » apulicum Körn. 12 »

Tr. vulgare Host. var. erythrospermum Körn. 13 »

» » » ferrugineum Al. 3,0 »

» » » lutescens Al. 2,0 »

» » » Hostianum Clem. 2,0 »

Secale cereale 8,0 »

Վերոհիշյալ անալիզից յերեվում է, վոր պոպուլյացիայում գերիշխում է լեվկուրում (leucurum) այլատեսակը:

Պոպուլյացիան ունի հետեւյալ ագրոմիոլոգիական հատկությունները:

Մշակվում է, վորպես աշնանացան, համեմատաբար չորադիմաց-

կուն ե, լավ արդյունք ե տալիս նաև չոր տարիներին: Համեմատած երիտրոսպերմումի հետ (գյուղացի սորտի) ուշահաս ե: Տոթից բավականին թիստ կերպով տուժում է:

Սնկային հիվանդությունների նշատմամբ ունի իմունիտետ, վնասվում և փոշեմրիկից: Հացի վօրակը լավ ե: Բերքատու յե:



ԱՆԳԻԱԿԱՆ ՏԵՍԱԿԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՍՈՐՏԵՐ

18. ԶԱԼ-ԶԱՐԴԱ, ԴԱՐԱԴԼՉԵՐԴ-ԶԱՐԴԱ.

Այս պոպուլյացիան մշակվում է Իջևանի շրջանի Կոթի ու Կիշ գյուղերում, ընդամենը 300—400 հեկտ. և մի քանի հեկտար՝ Դավիանի շրջանի Դումբան գյուղերում: Պոպուլյացիայում զերիշխում է անգլիական ցորենի հասարակ, վոչ ճյուղավոր յենթատեսակին պատկանող

սպեցիոսախմառ (speciosissimum Körn.) այլատեսակը: Մեր ուսումնասիրությունների ընթացքում հնարավորություն չունեցանք ուսումնասիրելու սրա ազրարիկորդիական առանձնահատկությունները:

Պոպուլյացիան բերվել և այժմ ել բերվում է Ազրարիկանից:

Բացի վերոհիշյալ պոպուլյացիայից հայտնածանի մի քանի գյուղերում (Միկոյանի շրջանի Քարագլուխ գյուղում) անհանու տարածություններով (զլատավորապես տնամերձ հողամասերում) մշակվում են նաև անգլիական ցորենի ճուղավոր խմբին պատկանազ այլատեսակներից կազմված պոպուլյացիաները, «հրաշալի ցորեն» կտմ և ճնշդուկ» անվան տակ:

ՑՈՐԵՆԻ ՅԵՎ ԱՇՈՐԱՅԻ ԽԱՌՆՈՒՐԴ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍՈՐՏԵՐ

19. Ա. Շ Լ. Ա. Ն

Սա յուրահատուկ պոպուլյացիա յե, հանդիսանում է ցորենի և աշորայի խառնուրդ: Մշակվում է:

Ստեփանավանի, Կալինինոյի, Կիրովականի շրջանների գյուղերի մեջ մասում:

Հափանի շրջանի հյուսիս—արևմայան մասի, Գեղգետի հովտում ընկած Ողջու յենթաշրջանի գյուղերում: Բոլոր մշաններում մոտավորապես 7400—8000 հեկտ.:

Ենդեմիկ և լեռնատափաստանային, անտառային տուավել խսնավ շրջանների համար: Պոպուլյացիայի մեջ գտնվում են փափուկ ցորենի պատկանող երիտրոսպերմում և շատ չնշին չափով ֆերրուգիներում այլատեսակները: Այս յերկուսը միասին կազմում են 40—60 տոկոսից վոչ ավելի, միացածն աշորա յե, գլխավորապես Secale cereale var. vul-

պյուսակ—Տաблица № 24

Շրջաններ Районы	Ֆ յ ո ւ գ ե ր С е л а	Փափուկ ցորեն 1)		Secale cereale
		erythro-spermum Körn	ferrugineum Al	
1. Կալինին Կալինինո	Շահնաղար Շահնաղար Հայդարբեկ Այդարբեկ	51,1 53,4	1,8 —	47,1 46,6
2. Ստեփանավան Ստեփանավան	Ազրարիկ Ագարակ Գյուղագարակ	49,9 46,8	— 0,5	50,1 52,7
3. Կիրովական Կիրովական	Վարդանլու Վարդանլու	33,7	—	66,3
4. Հափան Հափան	Օխչի Օխչի Քաջարանց Կաջարանց	42,5 45,0	2,2 4,0	55,2 51,0

1) Мягкая пшеница, 2) разновидности.

գոր. Կօր. (սպիտակ հասկավոր) և քիչ րստ (կարմիր հասկավոր). Աշուայի վորոց մասը պատկանում է դաշտամոլախոտային ձեռքին:

Ինչպես յերեվում եւ վերոհիշյալ № 24 ազուսակից, հաճախ դժվար և լինում վորոշել, թե վորն է գերիշխում՝ ցորենը թե աշորան:

Աշան մշակող հիմնական շրջանները՝ Ստեփանավանը և Կիրովականը Հայաստանի ամենից խոնավ շրջաններն են: Դրա հետեւ վանքով աշնանացան ցորենները շատ հաճախ շնորհիվ վատ ազրոտեխնիկայի (ուշ ցանք, հողի վատ մշակում և այլն) յենթարկվում են թե ցրտահարման և թե նեխման հայտնի յե նաև, վոր աշորաները նեխման և ցրտահարության նկատմամբ համեմատաբար ավելի դիմացկուն են, քան թե ցորենները, հետեւ վատ ազրոտեխնիկական ֆորում աշորաները հիշյալ շրջաններում դառնում են ավելի դիմացկուն և ավելի բերքատու: Այսպիսով, ցորենի և աշորայի խառնուրդը հանդիսանում է բնական անբարեհաջող պայմաններում բերքի ապահովագրման ամենապրիմիտիվ միջոցը: «Լավ տարին ցորեն կրերի, իսկ վատ տարին ցորենի փշանալու դեպքում աշորան այնուամենայնիվ բերք կտա, — այսպես են պատճառաբանում աշխան մշակող շրջանների գյուղացիները:

Այժմ, յերբ մենք այդ նույն շրջաններում ունենք բավական լավ կազմակերպված ՄԾԿ-ներ, հետեւ վապես մեխանիզացիայի յենթարկված գյուղատնտեսություն, բարձր մակարդակի վրա գտնվող անասնապահություն (ցեղային բարձր բերքատու անասնապահություն) և ազրոկուլուր աշխատանքների կազմակերպման լայն հնարավորություններ, սերմնաբուծական բնադրավառում նման դրություննը միան գամայն անհանդուրժելի յե:

Պոպուլյացիայի մեջ բավական մեծ տոկոս կազմող երիտրոսպերմումը հիշյալ շրջաններում ունի նույն ազրորինողի ական հատկությունները, ինչ վոր նույն շրջաններում մշակող ռպյուլյանի սորտում գերիշխող երիտրոսպերմում: Դրանք փաստորեն նույնն են:

Աշան պոպուլյացիայից ցորենի առանձնացումը և նրա մաքուր ցանքը, ազրոտեխնիկական բարձր ֆոնի վրա, ինչպես ցույց տվեցին մի քանի գյուղերի վերջին տարիների փորձերը, տալիս ելավ արդյունք՝ ապահովելով 18—20 ցենտ. բերք հեկտարից: Բացի այդ, նույն շրջաններում լավ արդյունք են տալիս և կարող են հեռանկարային լինել ռալֆի աղաջ» և ռատավրոպոլիա» սորտերը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄՇԱԿՎՈՂ ՑՈՐԵՆԻ ՍԵԼԵԿՑԻՈՆ ՍՈՒՏԵՐԸ

Սելեկցիոն սորտերը հայաստանում կազմում են ցորենի տարածության 9—10 տոկոսը, մոտ 22—23 հազ. հեկտ.: Առաջմմ մշակվում ե միայն մեկ սորտ՝ աշնանացան «ուկրաինկա»: Վերջին 1—2 տարում Դյուզքենդի և կից շրջաններում աչքի յե ընկնում աշնանացան ռատեպնլաշկա» սորտը: Գարնանացան սելեկցիոն սորտեր համարյա չկան:

ՈՒԿՐԱԻՆԿԱ

Ուկրաինկան առաջացված է Միրոնովսկու փորձառելեկցիոն կայանում 1915 թվին, բանատկա սորտից, անհատական ընտրության միջացով:

1927 թվին լենինականում կազմակերպված տեսակափորձադադաշտում ուրիշ սորտերի հետ միասին սկսվում է փորձարկվել նաև ուկրաինկան: Յերեք-չորս տարի փորձարկումից հետո, նկատի ունենալով սրա համեմատական բարձր բերքատվությունը, սկսում են տարածել սկզբում Դյուզքենդի, Արթիկի և ապա լեռնային մի շաբաթ աշնաններում: Այսպիսով, Հայաստանում ուկրաինկայի մշակության սկզբանի համարել 1929/30 թվերը: Ուկրաինկան այժմ մշակում է հետեւյալ շրջաններում.

Դուզբենի և Անինի շրջանների համարյա բոլոր գյուղերում:

Արթիկի շրջանի համարյա բոլոր գյուղերում: Հի մշակվում միայն բարձր լեռնային մասերում գտնվող մի քանի գյուղերում:

Ամասիայի շրջանի հարավ-արևեմտյան և հարավային մասերում գտնվող Գյուլիբուլաղ, Ամասիա, Քեֆլի գյուղակամբերում (քիչ տարածություններու):

Թալինի շրջանի հատկապես Ն. Արթիկ, Մուսլուղլի, Աղիաման, Մաստարա, Կըմլու և սրանց կից գյուղերում:

Ապարանի շրջանի հարավային մասում Քասախ գետի աջ և ձախ ափերին գտնվող՝ Ափնագեղից մինչև Բաշապարան գյուղերում:

Ախտայի շրջանի գլխավորապես հարավ-արևեմտյան մասի գյուղերում՝ Ալափարս, Ֆանտան, Բժնի, Սոլակ և մի քանի այլ գյուղերում:

Սպիտակի շրջանի համարյա բոլոր գյուղերում:

Բասարգեշարի, Մարտոնու և Բայագետի շրջանների համարյա բոլոր գյուղերում:

Կարմիր գյուղի շրջանի ծովափնյա գյուղերում (Զիւ Մատանախաչ և այլն):

Սշտարակի շրջանի մի քանի գյուղերում:

Կիրովականի շրջանի վոչ շատ բարձր լեռնային գյուղերում:
Ալավերդու և Նոյեմբերյանի շրջանի Ռւզունլար, Արձիս, Կողբ,
Հաղպէտ, Մանահին, Վորոնակ, Լամբալու, Նոյեմբերյան և կից գյուղերում:

Միկոյանի շրջանի Խաչիկ, Քարագլուխ և մի քանի այլ գյուղերում:

Ղափանի շրջանի Կիմանց և մի քանի այլ գյուղերում:

Ուկրաինկան սկզբնական շրջաններում տարածվեց գլխավորապես լեռնային այն շրջաններում, ուր տեղական աշնանացան ցորենի սըրտեր բացակայում էին: Այդ տեսակետից սկզբանկայի, վորպես աշնանացանի, մուտքը վերսկիցալ հիմնական շրջաններում բերքատվության բարձրացման և աշխատանքի կազմակերպման տեսակետից հոկայական նշանակություն ունեցավ: Բավական և ասել, վոր շնորհիվ ուկրաինկայի յուրաքանչյուր տարի ստացվեց հազարավոր ցենտներ լրացուցիչ հաց: Ուկրաինկայի առավելությունները՝ համեմատած տեղական գորնանացան ցորենի հետ՝ պարզ յերեվում են հետեւյալ տվյալներից.

Աղյուսակ 25

Շրջաններ	1934 թվին			1935 թվին		
	Գարնանացան ցորենի բնույթությունը պահպան	Աշնան պուրագան բնույթությունը	Աշնանացան ցորենի բնույթությունը	Գարնանացան ցորենի բնույթությունը	Աշնան պուրագան բնույթությունը	Աշնանացան ցորենի բնույթությունը
Դուգենգում	5,3	7,9	2,6	5,3	10,1	4,8
Մարտունում	8,0	12,6	4,6	10,5	14,3	3,8
Բառարդէշաբում	5,5	7,0	1,5	7,4	9,5	2,1

Մի շարք վլջաններում շնորհիվ կիրասվող միանգամայն անբավար, հաճախ նաև սխալ ազրոտեխնիկայի, սկզբնական տարիներին չստացվեց այն արտադրական եֆեկտը, վորը մենք տեսնում ենք հատկապես վերջին 2—3 տարիներում:

Այսպես որինակ՝ Բայազետի շրջանում ռւկրաինկայի բերքատվությունն ունեցել ե հետեւյալ պատկերը:

1. 29/30 թվին մեկ հեկտարից ստացվել ե 3,3 ցենտներ
2. 30/31 » » » » 4,2 »
3. 31/32 » » » » 0,6 »

4. 32/33	»	»	»	»	3,0	»
5. 35/36	»	»	»	»	9,5	»
6. 36/37	»	«	»	»	13,0	»

Մոտովորապես նույն պատկերն և նկատվում նաև մի շարք այլ շրջաններում: Բերքատվության խիստ անբավարար վիճակը մշակության սկզբնական տարիներին հիմնականում արդյունք եր վատ, յերբեմն նաև սխալ ազրոտեխնիկայի:

Ազրոտեխնիկական նման ֆոնի վրա ավելի քան ուժեղ կերպով արտահայտվում եր նաև սորտի բացասական մի քանի հատկությանները՝ վոչ բավարար ցրտագիմացկունությունը, ժանգի, մրիկի նկատմամբ ունեցած անբավարար իմունիտեսը, թափվելու և այլ հատկությունները:

Շնորհիվ վերջին տարիներում ազրոտեխնիկայի վորակի ընդհանուր բարձրացման, բարձրացավ նաև ուկրաինկայի բերքատվությունը:

Ուկրաինկայի բերքատվությունը ստախանովականների գաշտերում միշտ յեղել ե բարձր, վորոշ հողամատներում ուկրոդային՝ 35—45 ցենտ. հեկտարից:

Ուկրաինկայի տարածությունների ընդարձակումը պետք է դառնա մեր կարելոր անելիքներից մեկը: Այդ նպատակով աշխատանքը պիտի տանել յերկու ուղղությունը. 1) Ուկրաինկան տարածել այն շրջաններում, ուր տեղական աշնանացան ցորենի սորտեր չկան և մինչեւ այժմ աշնանացան չի մշակվել (Ալավագ, Ամասիա, Դուկայան), ապահովելով մշակության բարձր ազրոտեխնիկական, հատկապես լավ մշակված ցելերը և ժամանակին կատարվող ցանքով: 2) Տեղական աշնանացան սորտեր ունեցող լեռնային մի շարք շրջաններում ուկրաինկան հեռանկար կարող ե ունենալ իսկ նրա տարածության ընդարձակման հարցը պետք ե հիմնավորել արտադրական լայն փորձերի միջոցով:

Այս ձեռնարկութեան ուկրաինկայի տարածությունը 1—2 տարում հնարավոր ե կրկնապատկել:

Ուկրաինկայի ազրորիոլոգիական մի քանի ասանձնահատկությունների բնութագրումը.

Աշնանացան սառա յե, միջակ ձմեռաղիմացկունությամբ. այս հատկությունը խիստ կերպով թուլանում է հատկապես այն դեպքերում, յերբ ցանքը կատարվում է վոչ ցելահողամասերում և ցանվում է համեմատաբար ուշ: Այդ պայմանների հետևանքով առաջ յեկած կորուսները հայաստանում, մանավանդ 33—34 թվերին հոկայական չափերի յեր համառ: Զորադիմացկունության հատկությունը միջակ է

Ուժեղ չափով լարակվում ե թե քարամրիկով, թե ժանդով: Քարամրիկով գարակվածությունը հաճախ հասնում է 10-15 տոկոսի և ավելի: Տոթից խիստ տուժում ե. յեզակի չեն այնպիսի դեպքեր, յերբ տոթի հետեւանքով բերքատվությունը կատաստրոֆիկ կերպով ընկնում է՝ 20-22 ցենտներից՝ 3-4,5 ցենտներ: Պարաբռե խոնավ հողերում թույլ չափով պառկում ե, թափվող ե. սակայն Հայաստանում (ու կրաինկացան շրջաններում) մի քանի տարի մշակվելիս, դառնում ե համեմատաբար քիչ թափվող: Այս հատկանիշն ավելի ուժեղ ե արտահայտվում չոր պայմաններում և չորային տարիներին: Հողերի նկատմամբ պահանջկոտ ե:

Հացաթխման հատկությունը բարձր ե: Հատիկները կարմիք են. աբսոլյուտ կշիռը՝ 30—35 դրամ: Անա ընդհանուր գծերով այն հատկանիշները, վորոնցով ոժավոծ ե ու կրաինկան:

Գոսսորտկոմիսիայի Դուզքենդի տեսակափորձադաշտի տասը տարվա փորձերի արդյունքներից յերեվում ե, զոր սելեկցիոն սորտ ստեպնյաչկան Դուզքենդի պայմաններում ավելի բերքատու յե, քան ու կրաինկան:

Ստեպնյաչկայի և ու կրաինկայի առաջատարության հարցի վերջնական լուծման համար անհրաժեշտ ե դնել լայն արտադրական փորձեր:

Դատելով գրականության մեջ յեղած տվյալներից՝ կարելի յե առ սել վոր ստեպնյաչկան իր մի քանի կարեսը, հատկապես չորագիմացեկունության, քարամրիկով թույլ վարակվելու և չթափվելու հատկանիշներով, գերազանցում ե ու կրաինկային. իսկ ձմեռադիմացկունության հատկությամբ հետ ե մնում նրանից. դրան պետք է ավելացնել նաև այն, վոր խոնավ տարիներին պառկում ե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՑՈՐԵՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՐՏԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի ցորենի մշակության մեջ տեղական սորտերը բննում են հիմնական տեղը և, վոր կարեսը և, այդ սորտերի վորոշ մասն ինչպես այժմ, նույնպիս և հետագա մի քանի տարիներում սերմնաբուժության մեջ չեն կորցնի իրենց խոշոր նշանակությունը:

Սակայն այդ հնագուրց սորտերն իրենց ներկա դրությամբ չեն կարող ապահովել մեր այժմյան պահանջներին համապատասխան անհրաժեշտ բարձր բերքատվությունը:

Բարձր բերքատվությունն ապահովելու համար անհրաժեշտ ե կիրառել բարելավման հետեւյալ աշխատանքները.—մասսայական ընտրություն և ներսորտային խաչաձև փոշոտում (ներսորտային տրամադրաչում):

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԶԵՄՆԱՐԳՈՒՄ

Տեղական պապուլյացիոն սորտերը, գոյություն ունեցող խայտաբղետ կազմով, մեծ մասամբ չեն կարող ապահովել ներկա պահանջներին համապատասխանող բարձր բերքատվություն և վորակ:

Մի քանի սորտ պապուլյացիաների մեջ կան վերին աստիճանի արժեքավոր, զորոշ կլիմայական ու հողային պայմաններին տարիների ընթացքում լավագույն կերպով հարմարված, արդյունավետ այլատեսակներ և ձեռք: Պոպուլյացիաներում տվյալ վայրի լավագույն այլատեսակների (բերքատվության տեսակետից) հետ միասին, միենույն սորտում գտնվում են մի քանի տասնյակ, բայց ընդհանուր գումարով համեմատաբար քիչ տոկոս կազմող անփորակ, վոչ արդյունավետ այլատեսակներ, ձեռք, զորանց ներկայությամբ իմաստ կերպով նվազում և սորտի բերքատվությունը և բերքի վորակը:

Հետեւապես ուսումնական թյուրամբ պետք է լինի խառնուրդից ընտրել, առանձնացնել բարձր բերքատու այլատեսակների լավագույն հատկություններ ունեցող բերքատու բռնըսերը-ձեռքը: Այդ լավագույն ձեռքի ընտրությունը պետք է կատարել պիստեմատիկաբար, ամենից բերքատու ցանքերից: «Ընտրության ամենակատարյալ ձեռք թե այգեգործության և թե անասնապահության մեջ անբավարար անհատների վոչնչացնելն ե»:*)

Այս ուղղությամբ մեր յեզ մեր առաջարկությամբ 1935—38 թվականներին կատարված փորձերը և այդ փորձերի արդյունքների մասսայական կիրառումը բազմաթիվ կոլանտեսությունների

*) Կ. Ա. Տեմերյագել «Չարչը Դարչին և նրա ուսմունքը հայ, հրատ, էջ 129.

պրակտիկայումցույց տվեց, վոր ընտրության վերոհիշյալ մեթոդի կիրառման գեղքում, բարելավածի համեմատական բերքատվությունը բարձրանում է 15—40 %-ով. մոտավոր տվյալներով այդ ճեղնարկումը յերկրին մի տարում կարող է տալ լրացուցիչ մոտ 1/2 միլիոն ցենտներ հատիկ։ Ահա այս ուղղությամբ մի քանի տվյալներ։

Բայց ետք շրջանի Բարիկյան գյուղի գարնանացան „կարմրահատ“ սորտի միջից ընտրված երին Աջեղի ՄՌ (կունդիկ, թռփրաշ) մշակության միանման պայմաններում կարմրահատ պոպուլյացիան սորտի համեմատությամբ տվեց 42 տոկոսով ավելի բերք (1936 թ.)։

Մեղրու շրջանի Տաշտուն գյուղից բերված աշնանացան „կարմրահիր ցորեն“ սորտի միջից ընտրված ֆերմուկին ԵՅՌ, նույնիսկ սելեկցիոն «ուկրաինկայի» համեմատությամբ՝ Ախտայում տվեց 28 տոկոսով, Մարտունում (վ. Ղարանլուղ) 27 տոկոսով, Բասարգիչարում՝ 47 տոկոսով ավելի բերք։

Այս գծով 1938 թ. Գոսորդա կոմիսիայի Հայաստանի ինսպեկցիայի մի քանի փորձադաշտերում նույնպես կատարվել են համեմատասիան փորձեր և ստացվել են հետեւյալ արդյունքները։

Դուկասյանի շրջանի Դուկասյան գյուղի տեսակափորձագաղտում Երինացելումը, գարնանացան տեղական պոպուլյացիայի հետ համեմատած, տվել են 34,4 տոկոսով ավելի բերք, իսկ սելեկցիոն լուժեսցենս 062-ի համեմատությամբ 6,3 տոկոսով։

Վաղպատի շրջանի Վաղպատ գյուղի տեսակափորձագաղտում աշնանացան համադանիկումը նույնիսկ, սելեկցիոն «կոսպերատորկայի» համեմատությամբ տվել է 15,3 տոկոսով, իսկ տեղական սպիտակահատը համեմատությամբ 17,1 տոկոսով ավելի բերք։

Դուզքենդի շրջանի Փ. Ղարավիսա գյուղի տեսակափորձագաղտումը քոիկ սորտից առանձնացված գելիքին, տեղական քոիկի համեմատությամբ, ջրովի պայմաններում տվել է 47,7 տոկոսով ավելի բերք։ Նույն փորձադաշտում Սիսիանի կարմրահասկ սլպհատից առանձնացված աշնանացան ֆերրուգինեյումը, «ուկրաինկայի» համեմատությամբ՝ 32,6 տոկոսով ավելի բերք։

Ստեփանավանի շրջանի Վարդարլուր գյուղի փորձադաշտում ալթիւդաջ սորտից առանձնացված աշնանացան ֆերրուգիներումը, տեղական գյուղայանի սորտի համեմատությամբ, տվել է 12,5 տոկոսով ավելի բերք։

Համաձայն ՀԽՍՀ ժողովնական վարչության վարչության 1938 թ. բերքատը վության հաշվառման պաշտոնական տվյալների, կոլտնական թյուններում մասսայական ընտրությամբ բարելաված տեսակավոր սորտերի բերքատվությունը զգալի տոկոսով բարձր և վոչ բարելավածների համեմատությամբ։ Ահա այդ տվյալներից մի քանիսը —

Գորիսի շրջանի Միկոյան, Քարահունջ, Քարաշեն և մի քանի այլ կոլտնական թյուններում բարելաված տեսակավոր աշնանացան երիտրոսպերմումի (գյուղայանի սորտից) 125 հեկտարի միջին բերքը, նույն կոլտնական թյուններու ցանքերի միջին բերքատվությունից 38,6 տոկոսով բարձր է յեղել (9, 7: 7, 0)։

Կոտայքի շրջանի Ն. Կյանք, Գյամրիկ, Արամուս և մի քանի այլ կուտանական թյուններում տեսակավոր ուլորիցելավածի (սպիտակ կամչատկա սորտից) 229 հեկտարի միջին բերքը, նույն կոլտնական թյունների ընդհանուր ցանքերի միջին բերքատվությունից 22 %-ով բարձր է յեղել (7, 2: 5, 9)։

Միկոյանի շրջանի Աղքենդ կոլտնական թյուններում տեսակավոր բարբարոսայի (գարաղչղ գյուղայանի սորտից) 6 հեկտարի միջին բերքը, նույն կոլտնական թյունների ընդհանուր ցանքերի միջին բերքատվությունից 68 %-ով բարձր է յեղել (16, 7: 9, 9)։

Աշտարակի շրջանի Բյուրական, Հազ և Կարմիր աստղ կոլտնական թյուններում տեսակավոր գրելկումի (սպիտակահատ սորտից) 78 հեկտարի միջին բերքը, նույն կոլտնական թյունների ընդհանուր ցանքերի միջին բերքատվությունից 88 %-ով բարձր է յեղել (9, 8: 5, 2)։ Թալինի շրջանի Վ. Ղարաղոյմաղի և Միկոյանի անվան կոլտնական թյուններում տեսակավոր գրելկումի (սպիտակահատ սորտից) 10 հեկտարի միջին բերքը բարձր է յեղել 30 %-ով։

Նոր Բայազետի շրջանի Զլաղ և Նորագուղ կոլտնական թյուններում տեսակավոր երինացելումի 51 հեկտարի միջին բերքը նույն կոլտնական թյունների ընդհանուր ցանքերի միջին բերքատվությունից բարձր է յեղել 29 %-ով։ Նույն սովոր Բասարգիչարի Մ. Մազլա, Շիշկայ, Գյողակ-բուլաղ և մի քանի այլ կոլտնական թյուններում տվել է 28 %-ով բարձր բերք։

Այս անժխտելի տվյալների շարքն աւգած չափով կարելի յե աշվելացնել, բայց այսքան ել բավական և ցույց տալու, վոր մասսայական ընտրությունը բերքատվության բարձրացման գործում հսկայական նշանակություն ունեցող արդյունավետ ձեռնակումներից մեկն ե։

Ուսումնասիրությունից պարզվում է նույնպես, վոր Հայաստանում տարածված կոլտուբական ցորենի մոտ 150 այլատեսակները միանըման արժեք չունեն։ Դրանցից մեծագույն մասը, մասսայական արտադրության համար առայժմ արժեք չունեն, սակայն սելեկցիոն նպատակ հերի համար հանդիպանում են արժեքավոր փոնդ։ Մնացած փոքրաթիվ մասը (մոտ 10 այլատեսակ) խիստ արժեքավոր և թե ներկա մասսայական արտադրության և թե սելեկցիայի համար։

Դեմքի (աշնանացան - դարնդուրմա և դարնանացան) քոիկ կամ դալբալոս սորտից։

ԳՐԵԿՈՒՄ (վորպես աշնանացան) սպիտակահատ սորտից:
ՀԱՄԱԴԱՆԻԿՈՒՄ (աշնանացան) զարադրէլչըզ կամ զարգա սորտից:
ՖԵՐՈՒԻԳԻՆԵՐՈՒՄ (աշնանացան) ալթի-աղաջ, սլպահատ, կար-
միր ցորեն և կարմրահասոկ գյուլզյանի սորտերից:

ԵՐԻՏՐՈՍՊԵՐՄՈՒՄ (աշնանացան) գյուլզյանի սորտից:
ԼՅՈՒՏԵՍՑԵՆՍ (գարնանացան և աշնանացան) գոմբորկա կամ
առուկուզ սորտից:

ԵՐԻՆԱՅՑԵՐՈՒՄ (գարնանացան) կարմրահատ և կունդիկ սորտից:
ՌՈՒԲՐԻՑԵՊՍ (աշնանացան) սպիտակ-կամչատկա սորտից:
ՌՈՒԲՐԻԳԻՆՈՉՈՒՄ (գարնանացան) զալի-բողդա սորտից:

ԱՊՈՒԼԻԿՈՒՄ (աշնանացան) գեղնաղարդա սորտից:
Մեր պայմաններում վերոհիաց լավագույն այլատեսակների բեր-
քատու բյուսերի, նրանց ձեռի մասսայական ընտրության միջոցով
պետք բարելավել սլովուլյացիաները: Մասսայական ընտրության մի-
ջոցով տեղական սորտերի բարելավումը համարում ենք ժամանակավոր
ձեռնարկում, մինչեւ Թոսսորտ կոմիսիան տա համապատասխան, ավելի
բարձր բերքատու սելեկցիան սորտեր:

ՄԱՍՍԱՑԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ, ԱՅԼԱՏԵՍԱԿԱՆԵՐԻ
ՓՄՄԱՆԱԿԱԳՈՐ, ՈՐԻԵՆՏԻՐ ՇՐՋԱՅՆԱՑՈՒՄԸ.

Այս աշխատանքը կատարելիս հիմք ենք ընդունել սորտերի գո-
յությունն ունեցող դասավարումը նրանց համեմատական բեր-
քատվությունը, ապրոբիոլսփիական ընդհանուր հատկությունները,
տնտեսական եֆեկտիվության վերաբերյալ մեր, փորձված կոլան-
տեսականների և տեղերում աշխատող ագրոնոմների բազմաթիվ դի-
տողությունները, ինչպես նաև հողժողկոմատում այս հարցի շուրջը
հրավիրված մի քանի խորհրդակցություններում արված արժեքավոր
առաջարկությունները:

Անհրաժեշտ ենք համարում նշել վոր սերմնաբուծության գործի
ձիշտ կազմակերպման համար վերին աստիճանի եյական խնդիր եւ վե-
րացնել ինչպես վողջ հանրապետություններում, նույնպես և շրջաննե-
րում բազմասորտությունը: Մեր աշխատանքում աշխատել ենք ըստ հաս-
վորության պահպանել այդ սկզբունքը, սակայն պետք եւ ասել
վոր խիստ խայտարգեա բնապատմական պայմաններ ունեցող և այժմ
շատ սորտեր մշակող մի քանի շրջանների վերաբերյալ համապատասխան
ավյալներ չունենալու պատճառով, այժմ այդ մեզ լրիվ չի հաջողվել:

Ծնարության համար առաջարպող այլատեսակների լավագույն
հասկերը-բյուսերը պետք եւ ընտրվեն բացառապես ամենից բերքատու,
ամենից լավ ագրոտեխնիկական ֆոնում մշակվող, լավ զարգացում ունե-
ցող ցանքերից, վորովհետեւ բարձր բերքատվություն ապահովող պայման-
ներում դաստիարակված բույսերից միայն կարելի յենետագալում սպա-

սել ավելի բարձր բերքատվություն: Այս հարցն իր ամբողջ կարևորու-
թյամբ բազմից նշել եւ ակադեմիկ լիւենկոն:

Առաջարպատկան լավագույն այլատեսակների մասսայական ընտրու-
թյուն պետք եւ կատարել հետեւյալ շրջաններում:

ՀԱՄԱԴԱՆԻԿՈՒՄ

Դաշտային գոնայում գտնվող Վաղպատի, Հոկտեմբերյանի, Զան-
գիբասարի, Ղամարլուի և Վեդիի շրջանների բամբակացան գյուղե-
րում. տեղական զարդա սորտից, վորպես աշնանացան:

Դ Ե Լ Ֆ Ի

Նախալեռնային, ցածր լեռնային (վոչ շատ խոնավ) և դաշտային
գոնաներում, տեղական քոիկ կամ գալգալոս սորտից:

Հ Ա Մ Ա Ռ Ե Լ

Դուզբենդի շրջանի բոլոր գյուղերում, վորպես գարնանացան:
Անհրաժեշտ է հասուկ փորձերով պարզել Սարիարում և կից գյուղե-
րում մշակելու հարցը:

Արթիկի շրջանի վոչ բարձր գոնայում գտնվող՝ Սարիարաշ, Ղա-
զանչի, Սոնգյուրլի, Փանիկ, Պարնի և կից գյուղերում, վորպես գարնա-
նացան:

Աղինի շրջանի համարյա բոլոր գյուղերում, վորպես գարնանա-
ցան:

Ամասիայի շրջանի Ողջողլի յենթաշրջանի գյուղերում, վորպես
գարնանացան:

Թալինի շրջանի միջին գոնայում գտնվող Սարունչի, Յակո, Մաս-
տարա, Զեթհանքով, Զարինջի, Փիրմալաք, Մեհրիբան, և Արթիկ
և կից գյուղերում, հիմնականում վորպես գարնանացան:

Ախտայի շրջանի Ալափարսի յենթաշրջանի գյուղերում հիմնա-
կանում վորպես գոնդուրմա:

Աշտարակի շրջանի համարյա բոլոր գյուղերում, բացի Արագածի
լանջերին գտնվող Ավան, Ղոյթուր և կից գյուղերում, վորպես գար-
նանացան և աշնանացան:

Կոտայքի շրջանի միջին գոնայի գյուղերում:

Միկոյանի շրջանի համարյա բոլոր գյուղերում, թե վորպես գար-
նանացան և թե վորպես աշնանացան:

Ազիզիկովի շրջանի առաջին և յերկրորդ գոնայի համարյա բոլոր
գյուղերում, թե վորպես աշնանացան—գոնդուրմա և թե վորպես գար-
նանացան:

Ղարաբաղլարի շրջանի համարյա բոլոր գյուղերում (գարնանա-
ցան և աշնանացան):

Ղամարլուի շրջանի Շորբուլաղի յենթաշրջանի գյուղերում, վոր-
պես աշնանացան:

Վաղպատի շրջանում, վորպես գարնանացան:

Ապարանի շրջանի վոչ բարձրադիր Ափնա, Զովունի, Բուժական,
Ղոյթուր և կից գյուղերում, վորպես գարնանացան:

ԳՐԵԿՈՒՄ

Զոր նախալեռնային զոնայում. տեղական սպիտակահատ սորտից, վորպես աշնանացան:

Հստ շրջանների պետք և կատարել՝

